ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



1988 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՆ ՍԿՍՎԵՑ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(76-րդ տարի) Թիվ-2 (1660) Փետրվար 2022

Բովանդակություն

նկր. Ռուբեն Մանգասարյանի

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Երկու ժամանակ, մեկ իրականություն, մեկ դաս (էջ 1-2)

2- Հայ Դատ

Սեդա Գալստյան
Անտոն Քոչինյանի մտորումները Ադրբեջանին կցված հայապատկան տարածքների վերաբերյալ (էջ 3-7)

3- Քաղաքական

Նարե Գևորգյան
Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի միջնորդական առաքելությունը Արցախյան առաջին պատերազմի տարիներին (էջ 8-11)

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Հայ-թուրքական հարաբերություններ: Ի՞նչ խնդիրներ է լուծում Թուրքիան (էջ 12-14)

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
ԱՄՆ քաղաքականությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համատեքստում (էջ 15-18)

4- Տարածաշրջանային

Սիրանույշ Վարդանյան
Շիայական շարժումը Ադրբեջանում (էջ 19-22)

5- Աշխարհաքաղաքական

Վարդան Հակոբյան
Ուղտը չոքեց ղազախների դռանը(էջ 23-26)

Սոնա Տոնիկյան
Պարսից ծոցի երկրների և Եգիպտոսի արտգործնախարարների կարևոր հանդիպումը Էլ-Ռիադում (էջ 27-28)

6- Պատմության լուսարձակ

Անի Մելքոնյան
Հայկական ռազմական ուժի պատմությունից (մաս 2) (հոդված 3) (էջ 29-34)

Մարիամ Հովսեփյան
Միլլի շարժումը Կ. Պոլսի «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի էջերում (1919-1920 թթ.) (մաս 3) (էջ 35-39)

7- Ընթերցումներ

Վրեժ-Արմեն
Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը (էջ 40-44)

Երկու ժամանակ, մեկ իրականություն, մեկ դաս

Մի վերին իրավարար կարծես պարզել է մեր առջև պատմության հայելին, և նրա արտացոլանքի մեջ տեսնում ենք մեր ժամանակը՝ իր հակասականությամբ, հաղթանակներով և պարտություններով, մարտիրոսություններով ու դավաճանություններով: Տասնամյակների հեռավորությամբ օտար ուժերի կողմից հայ ժողովրդի վզին փաթաթված երկու հեղափոխություն՝ նույն կարգախոսներով՝ արդարություն, ժողովրդավարություն, ժողովրդի իշխանություն և խաղաղություն: Բոլոր կարգախոսները՝ կեղծ, իսկ խաղաղությունը՝ մուրալու ճանապարհով, որի դիմաց հաղթած թշնամին պահանջում է թանկագին զոհողություններ: Երկու դեպքում էլ այս բեմադրության օտար նվագարարները պատմության ասպարեզ են իջեցնում նույն ժողովրդի թափոնից կազմված իրենց հինգերորդ շարասյունը՝ ազգային, արկածախնդիր և բացարձակապես անպատասխանատու սեփական ժողովրդի ու երկրի ճակատագրի հարցում: Ժամանակի հարյուրամյա շրջապտույտի մեջ ահա երկու իրականություն, որն ապրեց և որի գահավեժ շրջապտույտից դեռ դուրս չի եկել հայ ժողովուրդը:

Երկու դեպքում էլ ակնհայտ է, թե ինչպես են ավելի լավ կյանքի մասին գայթակղիչ խոստումները հակադրության մեջ դրվում ժողովրդի զարգացման տրամաբանական ընթացքի, նրա պայքարի կենսական նպատակների և նույնիսկ հիշողության ու ինքնության հետ, և հրեշավոր ծրագրի հետևանքները լինում են մարդկային ու տարածքային հսկայական կորուստները, համազգային մեծ շփոթը, հաղթանակող բանակի կազմաքանդումը, պետական, տնտեսական և սոցիալական համակարգերի քայքայումը, ինքնապաշտպանության բնազդի բթացումը, լուռ համակերպումը ներքին ու արտաքին նվաստացումներին և ցեղասպան հարևանի պահանջների հլու կատարումը՝ որպես թե հանուն խաղաղության ու եղբայրության:

Դժվար էր երևակայելը, որ 1920-ական թթ. փորձությունից հետո ևս մեկ անգամ հայ ժողովուրդը թույլ կտա իր հետ խաղարկել նույն ներկայացումը, բայց ճիշտ հարյուր տարի անց նա վերածվել է նույնանման բեմադրության հլու դերակատարի և դեռ չի կարողանում հաղթահարել թշնամիների պարտադրած ճակատագիրը:

Պատմության այլ զուգադիպություններից են ազգային երկու ապստամբությունները, որոնցից մեկը տեղի է ունեցել 1921, իսկ մյուսը՝ 1988 թվականին: Պատմության այս երկու աստեղային ժամերը հայ ժողովուրդը կերտեց՝ ըմբոստանալով օտարի պարտադրած անազատ գոյության դեմ, տեղի ունեցավ համազգային աննախադեպ համախմբում անկախության ու ինքնիշխանության

Երևանի Ազատության հրապարակ՝ 1988 թ.

գաղափարի շուրջ, և երկու դեպքում էլ թվաքանակով փոքր ժողովուրդը կարողացավ հաղթել իրենից բազմապատիկ առավելություններ ունեցող բռնապետություններին:

1921 թ. փետրվարի 18-ին հայ ժողովուրդն ընդվզեց օտարի հեղափոխության հայ դրածոների իշխանության դեմ և, միակը լինելով ռուսական նորացված կայսրության կազմում, թեկուզև կարճ տևած հաղթանակի շնորհիվ դուրս շպրտեց երկրից ազգային պատկանելությունից զուրկ բոլշևիկյան հեղկոմին և բեկեց պատմության կործանարար ընթացքը:

1988 թ. փետրվարի 18-ին հայ ժողովուրդը Հայաստանի մայրաքաղաքում ոտքի ելավ բնապահպանական հիմնահարցերի լուծման պահանջով, իսկ երկու օր անց իր բացարձակ աջակցությունը հայտնեց ադրբեջանական ստրկատիրության դեմ անկախության պայքարի դուրս եկած արցախահայության ազգային-ազատագրական շարժմանը: Ժողովրդի բացարձակ մեծամասնությունը հավատաց, որ հաղթելու է և հաղթեց՝ անցնելով պատերազմի ու զրկանքների դաժան փորձությունների միջով: Երբ նույն ժողովրդի ծնունդ՝ օտարի դրածոները, 1990-ականներից սկսած, կասկածի տակ դրեցին այս պայքարի իմաստն ու վերջնական նպատակները, դրանով նրանք փաստեցին ու փաստում են իրենց դավաճանական էությունը, որովհետև արցախյան պայքարը նախ և առաջ արցախահայության՝ ազատության ու անկախության հասնելու ձգտումով

է թելադրված, և եթե մի ժողովրդի զավակներ կարող են կասկածի տակ դնել իրենց եղբայրների ու իրենց հայրենիքի մեկ հատվածի ամենասրբազան իրավունքի իրացումը, նշանակում է՝ նրանք դավաճան են, օտարահպատակ և անբարոյական՝ իրենց գիտակցությամբ, արյամբ և թերևս ժառանգականորեն:

Անկախության և ազատության համար պայքարը ժողովուրդների սրբազան և գերակա իրավունքի իրացումն է՝ անկախ նրանից՝ այդ պայքարը կտարվի ներքին, թե արտաքին թշնամիների դեմ: Իհարկե, երբ նման պայքարները համընկնում են իրենց աշխարհաքաղաքական շահերին, մեծ տերությունները խրախուսում և աջակցում են դրանց: Ավելին՝ նրանք հաճախ կազմակերպում և պետություններին ու ժողովուրդներին պարտադրում են իրենց դրածոների ձեռքով իրականացված հեղաշրջումները և դրանց հետևած բռնիշխանությունները՝ որպես թե ժողովրդական հեղափոխություններ ու ժողովրդավարական կառավարում, ինչի ականատեսը եղել ենք 1920 և 2018 թվականներին ու դրանց հաջորդած շրջաններում:

Դրսից օտարների հովանավորությամբ հրահրված և իրականացված «հեղափոխությունները», բնականաբար, ավելի հեշտությամբ են հաջողության հասնում, քանի որ այդ օտարները ոչ միայն հովանավորում, այլև ոտքի են հանում երկրի ներսում եղած՝ իրենցից սնվող ողջ հինգերորդ շարասյունը՝ միաժամանակ մեծ ճնշում գործադրելով գործող օրինական իշխանությունների վրա: Բնական ազգային հեղափոխություններ հնարավոր չէ առաջացնել ցանկացած ժամանակ, որովհետև բացակայում են կաշառված խմբերը, որոնք արհեստական հեղափոխությունների կրիտիկական միջուկն են կազմում, չկան համապատասխան մեծ միջոցները, պետականորեն կազմակերպվող լայնածավալ քարոզչությունը, իսկ արտաքին դերակատարները ոչ թե ճնշում, այլ աջակցում են իրենց ենթակա դրածո ռեժիմներին: Մյուս կողմից՝ հասարակության հավաքական գիտակցությանը հատուկ է ոչ թե հեղափոխական, այլ բնաշրջական վերափոխությունը, և ժամանակ է պահանջվում, մինչև նրա գլխում մեխված մտքերը փոխարինվեն նոր, հաճախ հակառակ դիրքորոշումներով: Զանգվածային մտածողությունը պահպանողական է և հաճախ վատը, բայց շոշափելին չի ցանկանում փոխարինել խոստումնալից, բայց անորոշ հեռանկարով: Հետևաբար որքան որոշակի ու վստահելի երևա հնարավոր ապագան, այնքան արագ ու վճռականորեն կբնաշրջվի հասարակական միտքը:

Ժողովրդային շարժումների ու հեղափոխությունների հաջողության համար անհրաժեշտ է, որ դրանց կարգախոսները համահունչ լինեն հանրության՝ տվյալ պահի կենսական ու առաջնային պահանջներին, ծրագրված լինեն երկար ժամանակի համար, և այդ ծրագրերը հագեցած լինեն իրարահաջորդ գործողությունների խիտ ժամանակացույցով: Չի կարող լինել մեկ փողոցի կամ հրապարակի հեղափոխություն. շարժումը պետք է ընդլայնվի ու ընդգրկի թե՛ երկրի տարածքը, թե՛ բազմաշերտ բնակչությունը:

Հայոց ազգային-ազատագրական հեղափոխության տեսաբան ու առաջնորդ Քրիստափոր Միքայելյանը սովորեցնում է. «Այո՛, անցյալի կորուստները ճնշում, ճմլում են մեր սրտերն ու մտքերը, բայց չմանվենք Թուկիդիդեսի այն հերոսին, որ կռվի միջոցին, փոխանակ իր հակառակորդի հարվածներին դիմադրելու, փոխանակ աշխատելու նրա մարմնի ամենազգայուն կետերին հարվածներ տեղալու, ձեռքերը սեղմում էր մարմնի այն տեղերին, ուր ընկնում էին հակառակորդի հարվածները: Կասկած չկա, որ այդպիսի մի ընթացք մեզ կտաներ միայն դեպի անպայման կորուստ, այնինչ հարատև կռիվը դեռ շատ բան կարող է խոստանալ մեզ: Եվ ո՞վ գիտե, թե ինչ գույնով պիտի լուսաբանվեն այսօրվա մեր կորուստները 50-100 տարուց հետո, երբ դրանք կկապվեն հետևողականությամբ՝ մեր կյանքում տեղի ունենալիք հետագա երևույթների հետ: Ո՞ր ազգը արդյոք, — երբեմն ստրուկ, իսկ այժմ ազատ,— չէ մոռացել իր կրած զարհուրելի կորուստները: Ո՞րը արդյոք դրանցից կփոխեր այսօրվա իր ազատությունը նախկին վիճակի հետ և անցյալ կյանքի այնպիսի մի ընթացքի հետ, ուր ոչ մի զոհողություն չլիներ կատարված: «Չկա մարդկության համար ավելի գեղեցիկ հույս, քան մի ճնշված ազգի հարություն առնելը»,— ստիպված է եղել խոստովանել նույնիսկ այնպիսի մի հրեշ, որպիսին էր Դիզրայելին:

Հարատև կռիվ,— հաճախ և երկար ժամանակ, գուցե անհաջող, չնայած երբեմն նույնիսկ իր լայն ծավալին,— ահա թե ուր է մեր փրկության բանալին: Պահպանե՛նք, շարունակե՛նք կռիվը, որպեսզի լայնանա, ընդարձակվի և ընդարձակվելով հարատևի, ահա դեպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը: Չշեղվենք այդ ճանապարհից, որ սփռված է հուսատու ապագայի գրավիչ ծաղիկներով»*:

Այսօր դեռ ողջ է ու առաջին գծում է այն սերունդը, որը ոչ միայն տեսավ հայության 1988 թ. փետրվարյան պոռթկումը, այլև եղավ ազգային-ազատագրական պայքարի, Հայաստանի ու Արցախի անկախության կերտիչը: Նորից փետրվարն է, և նորից պետք է հիշենք մեր պատմական անցյալի, հին ու նոր կորուստների, փետրվարյան և մյուս փառապանծ ընդվզումների ու հաղթանակների մասին: Կրկին վիրավոր են Արցախն ու Հայաստանը, բայց հրապարակում ոչ միայն դասալիքներն ու ազգադավներն են, այլև երեք սերունդ, որոնք թրծվել են նախորդ պատերազմներում: Պատմության հայելին մեր առջև է և, փետրվարների դասը ցուցանելով, հուշում է, որ պայքարը շարունակվում է, պե՛տք է շարունակվի մինչև հաղթական ավարտ: ■

* *Միքայելյան Քրիստափոր, Ամբոխային տրամաբանություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1990, էջ 89-90:*

Անտոն Քոչինյանի մտորումները Ադրբեջանին կցված հայապատկան տարածքների վերաբերյալ

Սեդա Գալստյան
Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն պատմության բաժնի վարիչ

Հայաստանի պատմության թանգարանում պահվող՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի անձնական արխիվից ներկայացնում ենք ևս երկու փաստաթուղթ, որոնք լույս են սփռում ազգային զարթոնքի տարիներին տիրող քաղաքական մթնոլորտի վրա: Առաջին փաստաթուղթը գրված է Ա. Քոչինյանի ձեռքով և ներկայացնում է նրա մտորումները 1920-21 թթ. նորաստեղծ Ադրբեջան պետությանը կցված՝ պատմական Հայաստանի տարածքների և այնտեղ ապրող բնիկ հայության ճակատագրի վերաբերյալ: Մյուս փաստաթուղթը, որը գրվել է Ադրբեջանին մաս կազմած հայաբնակ տարածքների հայության կողմից, վկայում է այն մասին, որ 1960-ական թթ. ազգային զարթոնքի նախաշեմին հայ հանրությունը քաջ գիտակցում էր «պատմական անարդարության սրբագրման» անհրաժեշտությունը, հոգեբանորեն պատրաստ էր այդ հարցը բարձրացնելուն և իր արդարացի պահանջի համար հասցեատեր էր համարում ԽՍՀՄ ղեկավարությանը: Այլ հարց է, որ ԽՍՀՄ-ն իր ամբողջատիրական համակարգով ի զորու չէր լուծելու ազգային-տարածքային խնդիրները, թեկուզև այն պարզ պատճառով, որ ազգերի խառնարան հիշեցնող այդ ահռելի կայսրությունում (որտեղ 200-ից ավելի ազգ ու ազգություն էր ապրում) նման հարցի թեկուզև արդարացի լուծումը կարող էր «դոմինոյի էֆեկտ» առաջացնել՝ կայսրության համար կործանարար հետևանքներով:

Փաստաթղթից տեղեկանում ենք, որ 1960-ական թթ. առաջին կեսին Բաքվում մոտ 200 հազար հայ է ապրել, որոնք իրենց մաշկի վրա զգացել են ազգային խտրականության դրսևորումները, ինչպես Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանին պատկանող այլ տարածքներում բնակվող հայությունը (Նախիջևանի համար կարելի է դա չասել, քանի որ այդ տարիներին այն գրեթե ամբողջությամբ հայաթափվել էր): Ինքնբուխինքյան ծագում են բազմաթիվ հարցեր: Մասնավորապես, երբ վերջին տասնամյակներին Ադրբեջանն այդքան հետևողականորեն թմբկահարում էր միջազգային ատյանների դռները՝ հիշեցնելով Ղարաբաղից տեղահան եղած ազգակիցների ճակատագրի մասին, ինչո՞ւ որպես հակակշիռ չէր բարձրացվում Ադրբեջանի տարածքում ապրող հայության հարցը, որն իր թվաքանակով մի քանի անգամ գերազանցում էր Ղարաբաղի տարածքում նախկինում բնակված ադրբեջանցիներին: Ինչ եղան այդ հարյուրհազարավոր հայերը, ո՞վ զբաղվեց նրանց ճակատագրով: Իսկ այսօր որևէ մեկը մտահոգված է հաղորդիների, շուշեցիների ճակատագրով...

Անպատասխան հարցեր, որոնք հերթական անգամ մտահոգվելու տեղիք են տալիս այս փաստաթղթին ծանոթանալիս:

Սեդա Գալստյան

×××

Անտոն Քոչինյան

Փաստաթուղթը (ռուսերեն) պահվում է ՀՊԹ-ում՝ մմ 18816 համարի ներքո: Թարգմանությունը՝ Սեդա Գալստյանի

Վերջին տասը տարիներին ավելացել է Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի քաղաքներից ու գյուղերից եկող հայտարարությունների և նամակների թիվը՝ հասցեագրված Հայաստանի ԿԿ Կենտկոմին, ԽՄԿԿ Կենտկոմին, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը նախկին հայկական հողերի և դրանց՝ Հայկական ԽՍՀ-ին վերադարձի հարցի առնչությամբ: Այդ նամակների հեղինակները աշխատավորության տարբեր խավերի ներկայացուցիչներ են՝ բանվորներ, կոլտնտեսականներ, ծառայողներ, ուսանողներ, դասախոսներ, ինժեներա-տեխնիկական աշխատողներ, գիտության և մշակույթի աչքի ընկնող գործիչներ, գրողներ, հին կոմունիստներ: Այդ հայտարարություններից և նամակներից շատերը ստորագրված են մարդկանց մեծաթիվ խմբերի կողմից:

Այդ հարցը սրվեց հատկապես վերջին երկու-երեք տարիներին, երբ Հայաստանում գիտության և մշակույթի բազմաթիվ աչքի ընկնող գործիչներ, գրողներ, ուսանողներ, բանվորներ ոչ միայն գրավոր, այլև բանավոր հասարակական և կուսակցական կազմակերպությունների ժողովներում պարբերաբար և հետևողականորեն սկսեցին

առաջ քաշել նախկին հայկական հողերի և դրանք Հայաստանին վերադարձնելու հարցը: Սկսեցին տարածվել թռուցիկներ, որոնցում առաջ էին քաշվում տարածքային հարցերը լենինյան ազգային քաղաքականության սկզբունքով լուծելու պահանջներ, և որոնք պարունակում էին այդ հարցերի լուծման լոզունգով աշխատավորների ցույցեր կազմակերպելու կոչեր:

Մեր կողմից ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ նման գործողությունները կանխելու ուղղությամբ, ազգաբնակչության շրջանում անցկացվում են հատուկ բացատրական աշխատանքներ այդ հարցերի շուրջ, մոբիլիզացվում է կուսակցական և կոմերիտական ակտիվը՝ զանգվածային ցույցերը կանխելու նպատակով: Սակայն այդ հարցն այժմ էլ շարունակում է մնալ նույնքան սուր՝ շիկացնելով քաղաքական մթնոլորտը Հայաստանում:

Նշված հայտարարություններում և նամակներում, ինչպես նաև իրենց բանավոր ելույթներում աշխատավորները առաջ են քաշում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Նախիջևանի ԻՍՀ-ի՝ Հայաստանի հետ վերամիավորման հարցերը: Հայկական ԽՍՀ-ի հետ այդ տարածքների վերամիավորման անհրաժեշտությունը աշխատավորության ներկայացուցիչները հիմնավորում են նախ և առաջ նրանով, որ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի ԻՍՀ տարածքները հայկական պետականության կազմավորման առաջին իսկ օրից էին Հայաստանի բաղկացուցիչ մասը և ներառված էին այն մարզերի կազմում, որոնք ձևավորում էին պատմական Հայաստանի կորիզը: Այդ տարածքների՝ Հայաստանին պատկանելու մասին վկայում են բազմաթիվ պատմական փաստաթղթեր և նյութական մշակույթի հուշարձաններ:

Աշխատավորության ներկայացուցիչները հայտարարում են, որ իրենց համար անհասկանալի են այն պատճառները, համաձայն որոնց՝ դարեր շարունակ անվիճելի հայկական այդ տարածքները Անդրկովկասում խորհրդային կարգերի հաստատումից հետո անջատվեցին Հայաստանից ու ընդգրկվեցին հարևան հանրապետության կազմում: Նրանք իրենց վրդովմունքն են արտահայտում այն բանի առնչությամբ, որ Լեռնային Ղարաբաղը, աշխարհագրորեն լինելով Հայաստանի շարունակությունը, որտեղ մինչ օրս էլ բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր են, միացվեց Ադրբեջանին՝ չնայած այն բանին, որ Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից մեկ օր անց (1920 թ. նոյեմբերի 30) հանդիսավոր հռչակագրով պարտավորվեց Լեռնային Ղարաբաղի բնակչությանը տրամադրելու լիակատար ինքնորոշում: Ընդ որում, նշում են, որ Լեռնային Ղարաբաղի պատկանելությունը Հայաստանին նախկինում երբեք կասկածի տակ չի դրվել, և միայն Հայաստանում և Ադրբեջանում դաշնակների ու մուսավաթականների տիրապետության ժամանակ է, որ Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը դարձել են այդ երկրների միջև վիճաբանության օբյեկտ, ինչն արևմտյան իմպերիալիստների կողմից օգտագործվել է երկու հարևան ժողովուրդների միջև թշնամանք սերմանելու համար:

Լեռնային Ղարաբաղի մասին Խորհրդային Ադրբեջանի հռչակագիրը այդպես էլ չկենսագործվեց, և այդ տարածքը՝ իր հայ բնակչությամբ, միակողմանիության կարգով, ինչպես գրում են բազմաթիվ հայտարարությունների հեղինակները, առանց որևէ օրինական հիմքի, մտավ Ադրբեջանի ԽՍՀ կազմի մեջ որպես ինքնավար մարզ: Հօգուտ այդ ակտի բերվող միակ փաստարկն այն էր, որ Լեռնային Ղարաբաղը տնտեսապես հակված էր դեպի Ադրբեջանը, որն այդ ժամանակ տնտեսապես շատ ավելի զարգացած էր, քան քայքայված ու թույլ Հայաստանը:

Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանին «տնտեսապես հակվածության» փաստարկը ներկայումս, ինչպես նշվում է նամակներում, հայտարարություններում և ելույթներում, կորցրել է իր հիմքը: Նախ՝ Հայաստանը վերջին 40-ից ավելի տարիների ընթացքում դարձել է տնտեսապես և մշակութապես Խորհրդային Միության ամենազարգացած հանրապետություններից մեկը: Երկրորդ, որ ոչ պակաս կարևոր է, եթե ոչ ավելի կարևոր, Լեռնային Ղարաբաղի՝ ինքնավար մարզի կարգավիճակով Ադրբեջանի կազմում գտնվելու 43 տարիների ընթացքում նրա տնտեսությունը, ի տարբերություն խորհրդային այլ հանրապետությունների և մարզերի տնտեսությունների, որևէ զգալի աճ չի գրանցել, իսկ վերջին տարիներին այն լճացման և անգամ քայքայման վիճակում է: Ադրբեջանի կազմում գտնվելու ողջ ընթացքում Լեռնային Ղարաբաղը, չնայած իր բարենպաստ բնական պայմաններին, ինչպես կար, այնպես էլ շարունակում է մնալ տնտեսապես թույլ զարգացած ագրարային մարզ: ԼՂԻՄ-ում չկա ոչ մի խոշոր արդյունաբերական ձեռնարկություն ոչ միայն ծանր արդյունաբերության, այլև թեթև և անգամ սննդի արդյունաբերության ոլորտում: Վերջապես՝ նամակների ու հայտարարությունների հեղինակները որպես Լեռնային Ղարաբաղի տնտեսության լճացման ու քայքայման աղաղակող փաստ նշում են այն իրողությունը, որ ԼՂԻՄ-ի բնակչությունը ոչ միայն չի աճել, այլև նվազել է (1939 թվականից մինչև 1964 թվականը բնակչությունը նվազել է 5,5 %-ով):

Այսպիսով, այս հարցը բարձրացնելով, մարդկանց կարծիքով, Ադրբեջանի ԽՍՀ կազմում Լեռնային Ղարաբաղի մնալը չի կարող արդարացվել որևէ տնտեսական հղումով:

ԼՂԻՄ-ի տնտեսության նման լճացումն ու հետամնաց վիճակը աշխատավորության բազմաթիվ ներկայացուցիչներ իրենց նամակներում ու հայտարարություններում բացատրում են Ադրբեջանի ԽՍՀ իշխանությունների կողմից խտրական քաղաքականությամբ ինչպես մասնավորապես Ղարաբաղի հայերի, այնպես էլ ընդհանրապես Ադրբեջանի ԽՍՀ տարածքում ապրող բոլոր հայերի

նկատմամբ: Ընդ որում, բերում են հետևյալ փաստերը, որոնք հաստատում են Ադրբեջանում ապրող հայերի հանդեպ խտրականությունն ու անբարյացակամ վերաբերմունքը: Այսպես, չնայած այն բանին, որ Բաքվում ապրում է 200 հազար հայ, փակվել է հայկական դրամատիկական թատրոնը, պարբերաբար կրճատվում է հայկական դպրոցների թիվը, որպես կանոն, հայերը չեն նշանակվում ինչ-որ չափով նշանակալի պաշտոնի ինչպես կուսակցական, խորհրդային ապարատում, այնպես էլ գիտական և մշակութային հաստատություններում և այլն:

Նամակների և հայտարարությունների հեղինակները գրում են, որ ԼՂԻՄ-ում չեն ստեղծվում պայմաններ՝ բնիկ ժողովրդի ազգային մշակույթի զարգացման համար: Ավելին՝ նրանք վրդովմունքով նշում են, որ մարզում խոչընդոտում են տեղի բնակչության մշակույթի զարգացումը (փակվում են մինչ այդ լույս տեսնող ամսագրերը, բացակայում է մարզային հրատարակչությունը, չեն ցուցադրվում ֆիլմեր հայերենով, տեղի ազգության լեզուն դուրս է թողնվել ինչպես գործածությունից, այնպես էլ մարզի հասարակական-քաղաքական կյանքից և այլն):

Նամակների և հայտարարությունների հեղինակներն առանձնակի վրդովմունքով են գրում այն մասին, որ այժմ, երբ զարգանում են մշակութային կապերն անգամ արտասահմանյան երկրների հետ, Լեռնային Ղարաբաղի աշխատավորները իշխանությունների կողմից խոչընդոտների են հանդիպում Հայաստանի հետ մշակութային կապերի պահպանման գործում, որը Լեռնային Ղարաբաղի հետ կապված է բնակչության էթնիկ կազմով և ազգային մշակույթով: Բանը հասել է այնտեղ, որ ԼՂԻՄ-ի բնակչությանը խոչընդոտում են լսել Հայկական ԽՍՀ ռադիոհաղորդումները:

Նամակների և հայտարարությունների հեղինակները գտնում են, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության հանդեպ նման անհանդուրժելի խտրական վերաբերմունքին վերջ դնել կարելի է միայն աղաղակող պատմական անարդարությունը վերացնելով, այն է՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելով, որի հետ այն կապված է անքակտելի ազգային ընդհանրությամբ: Նրանք նշում են, որ տարածքային առումով Լեռնային Ղարաբաղը հարում է Հայկական ԽՍՀ-ին, քանի որ այն արհեստականորեն անջատված է Հայաստանից միայն փոքրիկ միջանցքով: Այսպիսով, ըստ նամակների և հայտարարությունների հեղինակների, Լեռնային Ղարաբաղի՝ Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորման անհրաժեշտությունը թելադրված է ինչպես ազգային, քանի որ ազգային ու մշակութային առումներով ԼՂԻՄ-ը ամբողջություն է կազմում Հայաստանի հետ, այնպես էլ տնտեսական ընկալումներով, քանի որ Հայաստանի հետ վերամիավորումը դուրս կհաներ Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը այն լճացումից ու քայքայված վիճակից, որում այն եղել է Ադրբեջանի կազմում գտնվելու 43 տարիների ընթացքում:



Ա. Քոչինյանը վառում է Ծիծեռնակաբերդի անմար կրակը

Ինչ վերաբերում է Նախիջևանի ԻՍՀ-ին, ապա նամակների և հայտարարությունների հեղինակները նշում են, որ ինչպես պատմական փաստաթղթերը, այնպես էլ նյութական մշակույթի հուշարձանները վկայում են, որ այդ տարածքը բուն հայկական հող է, որը մտնում է պատմական Հայաստանի միջուկի մեջ: Այս երկրամասի հայ բնակչությունը, ըստ նույն հեղինակների, նախկինում օտարերկրյա զավթիչների կողմից հալածանքների ենթարկվելու պատճառով ստիպված է եղել լքել հայրենի բնակավայրերը, ինչի հետևանքով բնակչության թիվը զգալիորեն կրճատվել է: Սակայն դեռևս ցարիզմի ժամանակ՝ 1917 թ. նախաշեմին, հայերը կազմում էին ներկայիս Նախիջևանի ԻՍՀ բնակչության զգալի մասը: Նախիջևանի երկրամասի պատկանելությունը հայկական տարածքին ոչ մեկի մոտ կասկած չի առաջացնում՝ նշում են նամակների և հայտարարությունների հեղինակները: Հայտնի է, որ Նախիջևանը միացել է Ռուսաստանին Էրիվանի հետ միաժամանակ՝ 1828 թ., և 19-րդ դարի առաջին կեսին մտել է Ռուսական կայսրության Հայկական մարզի, իսկ հետո՝ Երևանի նահանգի մեջ: Նախիջևանի տարածքը աշխարհագրորեն գտնվում է Հայաստանի ներսում և անվիճելիորեն տնտեսապես կազմում էր Հայաստանի հետ մի ամբողջություն: Նախիջևանի գավառի՝ Հայաստանին պատկանելության վիճելիությունը արհեստականորեն առաջ քաշվեց Թուրքիայի իշխող շրջանակների կողմից, որոնք 1918-1920 թթ. բռնի զավթեցին այդ տարածքը: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից մեկ օր անց հենց Խորհրդային Ադրբեջանի կառավարությունն էր, որ հանդես եկավ հանդիսավոր հռչակագրով, որում հռչակում էր այն մասին, որ Նախիջևանի գավառի տարածքը Խորհրդային Հայաստանի անբաժան մասն է: Խորհրդային Ադրբեջանի կառա-

վարության այս ակտը, որը հրապարակվեց Ադրբեջանի ԽՍՀ Ժողկոմխորհի նախագահ ընկ. Նարիմանովի ստորագրությամբ, Ռուսաստանի հարավի արտակարգ կոմիսար ընկ. Օրջոնիկիձեի կողմից բնորոշվեց որպես «մեծագույն կարևորության ակտ»: «Սա պատմական ակտ է,- գրում էր Օրջոնիկիձեն,- որը մարդկության պատմության մեջ իր նախադեպը չունի»: Այդ մեծագույն պատմական ակտը, որը կոչված էր դառնալու երկու հարևան ժողովուրդների միջև եղբայրական բարեկամության անկյունաքարը և ծառայելու ազգային-տարածքային հարցերի լենինյան լուծման օրինակ, ինչպես նշում են նամակների և հայտարարությունների հեղինակները, այդպես էլ չգործադրվեց: Նաև նշվում է, որ Նախիջևանի տարածքը մտավ Ադրբեջանի կազմ՝ հակառակ Խորհրդային Ադրբեջանի կառավարության հանդիսավոր հռչակագրի, միայն Թուրքիայի պնդմամբ, մի բուրժուական պետության, որն Անդրկովկասում իր սեփական շահերն էր հետապնդում և ոչ մի ընդհանուր բան չուներ խորհրդային հանրապետությունների ժողովուրդների շահերի հետ: Այն բանից հետո, երբ Նախիջևանի գավառի տարածքը մտավ Ադրբեջանի ԽՍՀ կազմի մեջ, գրում են նամակների և հայտարարությունների հեղինակները, սպասելի էր, որ Ադրբեջանի ԽՍՀ իշխանությունները, ելնելով լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներից և ԽՍՀՄ Սահմանադրության դրույթներից, կապահովեն Նախիջևանի ԻՍՀ տարածքում ապրող բոլոր ազգությունների իրավահավասարությունը, սակայն դա տեղի չունեցավ: Նամակների և հայտարարությունների հեղինակների խոսքերով՝ Ադրբեջանի ԽՍՀ կազմի մեջ մտնելուց անմիջապես հետո Նախիջևանի բնիկ բնակչությունը՝ հայերը, ենթարկվեցին խտրականության, ինչը հանգեցրեց նրան, որ նրանք սկսեցին պարբերաբար լքել իրենց բնակավայրերը և վերաբնակվել այլ հանրապետություններում: Նման հակալենինյան խտրական քաղաքականության հետևանքով վերջին 45 տարիների ընթացքում Նախիջևանի ԻՍՀ-ում հայ բնակչության թիվը կտրուկ նվազել է: Նամակների և հայտարարությունների հեղինակներն առանձնակի վրդովմունքով են գրում, որ Նախիջևանում ոչնչացվում են հայկական հնագույն մշակութային մեծագույն արժեքները, քանդվում են ճարտարապետության և արվեստի բացառիկ ստեղծագործությունները:

Նախիջևանի ԻՍՀ-ի ընդհանուր տնտեսական վիճակն էլ չի վկայում այն մասին, որ նա շահել է Ադրբեջանի կազմի մեջ արհեստականորեն մտցվելուց, քանի որ Նախիջևանի տնտեսությունը Ադրբեջանի ԽՍՀ կազմում գտնվելու 42 տարիների ընթացքում որևէ էական զարգացում չի գրանցել: Նշվում է, որ Ադրբեջանի համար Նախիջևանի ԻՍՀ-ն հեռավոր լքված ծայրամաս է: Բացի այդ, տարածքային առումով, Նախիջևանի ԻՍՀ-ն կազմում է Արարատյան դաշտավայրի, այսինքն՝ Հայաստանի կենտրոնական մասի շարունակությունը, որի հետ այն կապված է հաղորդակցության հարմար ուղիներով:

Բազմաթիվ նամակների և հայտարարությունների հեղինակները գտնում են, որ եկել է 1921 թ. թույլ տրված աղաղակող անարդարությունը վերացնելու և Խորհրդային Ադրբեջանի կառավարության հանդիսավոր դեկլարացիան կյանքի կոչելու ժամանակը: Նամակների և հայտարարությունների հեղինակների կարծիքով՝ Նախիջևանի ԻՍՀ-ի՝ Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտնելը կնպաստի երկրամասի տնտեսության արագ զարգացմանը և կբխի նրա բնակչության շահերից: Ըստ նամակների և հայտարարությունների հեղինակների՝ այդ հարցերի լուծումը կլինի լենինյան ազգային քաղաքականության նոր հաղթանակը, որը բոլոր ժողովուրդների համար կապահովի ինքնորոշման իրավունք և ազատ ազգային զարգացում:

Սրանք են այն հարցերը, որոնք առաջ են քաշված աշխատավորության հայտարարություններում և նամակներում:

ԽՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ընկեր Ն. Ս. Խրուշչովին՝

ԼՂԻՄ-ի, Ադրբեջանական ԽՍՀ Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի և Շահումյանի շրջանների հայ աշխատավորներից

Մենք՝ ներքոստորագրյալներս՝ Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կոլտնտեսականները, բանվորներն ու ծառայողները, ինչպես նաև Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Շահումյանի շրջանների հայ ազգաբնակչությունը, մեր կյանքի ծանր պայմաններից հուսահատության հասած, որոշեցինք դիմել Ձեզ՝ արդարության և պաշտպանության համար:

Անհիշելի ժամանակներից Քուռի, Արաքսի և Սևանա լճերի միջև ընկած մեր հողերը, որոնք պատմականորեն հայտնի էին «Արցախ» անվամբ, միշտ եղել են Հայաստանի անբաժան մասը: Մենք չենք սխալվել՝ կարծելով, որ լենինյան ազգային քաղաքականությունը կհաղթանակի, և հայերով բնակեցված Ղարաբաղի տարածքը կհանձնվի Խորհրդային Հայաստանին: Եվ, իրոք, 1920 թ. դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ադրբեջանն ընդունեց հռչակագիր, որի համաձայն՝ Ղարաբաղն ու Նախիջևանը տրվում էին խորհրդայնացված Հայաստանին: Սակայն այդ արդար, լիովին եղբայրական որոշումն ի կատար չածվեց: 1921 թ. մարտին, Թուրքիայի հետ պայմանագրի համաձայն, Նախիջևանը մտավ Ադրբեջանի ԽՍՀ կազմի մեջ, Ղարաբաղի լեռնային մասին 1923 թ. տրվեց ինքնավարություն Ադր. ԽՍՀ սահմաններում, իսկ Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի և Շահումյանի շրջանները, որոնց բնակչության մոտ 90 տոկոսը կազմում էին հայերը, ուղղակի մտան Ադր. ԽՍՀ-ի մեջ: Այդպիսով Ղարաբաղի հայերը հեռացվեցին Հայկական ԽՍՀ-ից, իսկ ինքնավարությունը չէր ներառում բոլոր հայկական շրջանները: Ինքնավար մարզի իրավունքները աստիճանաբար կրճատվեցին,

իսկ ներկայումս հավասարվել են զրոյի: Ադրբեջանի ԽՍՀ հայ բնակչության հանդեպ կիրառվում էր սահմանափակումների և կյանքի առավելագույնս անբարենպաստ պայմանների ստեղծման զուտ ազգայնական քաղաքականություն:

Բերենք մի քանի օրինակներ.

1. Ստեփանակերտի հացի գործարանը ենթարկվում է Աղդամին՝ 40 կմ հեռավորության վրա գտնվող ադրբեջանական շրջկենտրոնին: Աղդամի շրջանից կազմակերպվում է Ստեփանակերտին հացի մատակարարումը, պլանավորվում ալյուրի առաքումը, հացի թխումն ու տեսակավորումը:

2. Մարզի մարզային առողջապահության բաժինը ենթարկվում է Աղդամին: Մարզի դեղատները նույնպես ենթարկվում են Աղդամին: Ստացվում է, որ ողջ առողջապահական համակարգը կախված է Աղդամից:

3. Շինարարական վարչությունը ենթարկվում է Մինգեչաուրին, որը Ստեփանակերտից հեռու է 120 կմ: Լավագույն մեխանիզացիան ու մեքենաները գնում են Մինգեչաուր, իսկ անպիտան, շարքից դուրս եկած մեքենաները բաժին են հասնում Ստեփանակերտին:

4. Մարզի մետաքսի կոմբինատը (մարզի միակ հզոր ձեռնարկությունը), որն ունի 3000 աշխատող, դրեցին Ստեփանակերտից 160 կմ հեռավորության վրա գտնվող Նուխայի համապատասխան ցածր հզորության ձեռնարկության ենթակայության տակ: Մի շարք գյուղերում՝ Խնձրիստան, Սեյդիշեն, Ղիշլաղ և այլն, գործող մետաքսի ոլորման կոմբինատները պարզապես փակվեցին:

5. «Սոյուզպեչատ»-ի մարզային բաժինը 1962 թ. մայիսից տեղափոխեցին Աղդամ, իսկ աշխատակիցները մնացին առանց աշխատանքի: Աղդամը որոշում է, թե մենք ինչ կարդանք:

6. Ստեփանակերտի ցեմենտ-բետոնի գործարանը ենթարկվում է 60 կմ հեռավորության վրա գտնվող Բարդայի շրջանին, որը ոչ մի կապ չունի գործարանի հետ:

7. «Թարթառ» հէկ-ի շինարարության խնդիրը ներառված էր հետպատերազմական հնգամյակի մեջ, սակայն միչև օրս լիովին կատարված չէ: Մինգեչաուրի շինարարությունը պատճառ եղավ «Թարթառ» հէկ-ի համակարգի սառեցման, այնինչ Մինգեչաուրը չի կարող լուծել այն խնդիրները, որ դրված են հէկ-ի առջև:

8. Վերջին հնգամյակում մարզի բազմաթիվ օբյեկտների շինարարությունը իրականացված չէ: Ներկայումս նույնպես ոչինչ չի արվում դրանց գործարկման ուղղությամբ:

9. 7-ամյա պլանով նախատեսված Ստեփանակերտի ավտովերանորոգման գործարանը, չնայած բազայի և որակավորված կադրերի առկայությանը, կառուցեցին Կիրովաբադում:

10. Անցած 40 տարիների ընթացքում չի կառուցվել գոնե մեկ կիլոմետր ավտոճանապարհ գյուղերի և մարզկենտրոնի միջև, և չեն բարեկարգվել եղածները:

11. Ոչ մի հիմնավոր բան չի արվել գյուղատնտեսության զարգացման համար: Չկա այգիների մակերեսների, տեխնիկական և ցանքային մշակաբույսերի բերքատվության աճ: Անասնապահությունը անկում է ապրում: Լեռնային Ղարաբաղի որոշ գետերի վրա ոռոգման համար կառուցված ջրամբարներից օգտվում են միայն ադրբեջանական գյուղերը, Լեռնային Ղարաբաղի կոլտնտեսությունները զրկված են իրենց գետերի ջուրն օգտագործելուց: Հին ժամանակներից Լեռնային Ղարաբաղը հայտնի է թթի այգիներով՝ թթաստաններով: Այդ այգիները ներկայումս օգտագործում են սպիրտի, դոշաբի պատրաստման, ինչպես նաև վառելիքի և շինարարական նյութերի համար: Որպես արդյունք՝ թթաստանները ոչնչանում են: Մարզը, նրա ընդերքակլիմայական պայմաններն ուսումնասիրված չեն, չկա միկրոշրջանների մասնագիտացում:

12. Կրթությունն ու մշակույթը անկում են ապրում: Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտը վերացվել է, փակվել է երաժշտական դպրոցը:

Ինքնավար մարզի և նրա հայ ազգաբնակչության դեմ անօրինական, վնասակար հրահանգների թվարկումը կարելի է շարունակել, սակայն նշված կցկտուր տվյալներն էլ բավարար են բնութագրելու մարզի բնակչության ծանր վիճակը: Ուղղակի վարվում է ազգայնամոլական, պանթյուրքիստական քաղաքականություն, որը լիովին ընդունելի է հանրապետության ղեկավարության կողմից: Այդ քաղաքականությունը ինքնավար մարզից դուրս հայկական շրջաններում՝ Շամխորի, Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի, ավելի տհաճ ձևեր է ընդունում: Մեր դրությունն ավելի վատ է, քան 1918-1920 թթ.՝ թուրք-մուսավաթական և անգլիական օկուպացիայի ժամանակ: Լեռնային Ղարաբաղը բնակեցվում էր ադրբեջանցիներով: Փորձեր էին արվում ժողովրդի դժգոհությունը վերացնելու, սակայն անթույլատրելի միջոցներ էին կիրառում դրա համար: Օրինակ՝ Բաղիրովը Ստեփանակերտում պարտակտիվին առաջարկում էր՝ ով ճիշտ չի համարում Ղարաբաղի՝ Ադրբեջանի կազմում լինելը, թող լքի դահլիճը: Հասկանալի էր՝ ինչով կավարտվեր այս քայլին հետևելը: Ցավալի է, որ այդ հողի վրա ծագում են ազգամիջյան տհաճ փոխհարաբերություններ:

Այժմ, երբ անցնում ենք կոմունիզմի կառուցմանը, մենք չենք կարող ապրել նման պայմաններում: Խնդրում ենք անհապաղ լուծել Լեռնային Ղարաբաղը և նրան հարող բոլոր հայաբնակ շրջանները Հայաստանի ԽՍՀ-ին միացնելու կամ ՌՍՖՍՀ կազմի մեջ մտցնելու հարցը: Մենք միայն խնդրում ենք Ղարաբաղի հայ ազգաբնակչության հանդեպ կիրառել **ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:**

Մարտ, 1962 թ.

Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանիի միջնորդական առաքելությունը Արցախյան առաջին պատերազմի տարիներին

Նարե Գևորգյան
ԵՊՀ իրանագիտության ամբիոնի աշխատակից

1991 թ. վերջին ԽՍՀՄ փլուզմամբ ստեղծվեց աշխարհաքաղաքական միանգամայն նոր իրավիճակ: Առաջացան քաղաքականապես թույլ և տնտեսապես ոչ կենսունակ, բայց ինքնիշխան հանրապետություններ: Ի սկզբանե Իրանը փորձեց ներթափանցել նախկին ԽՍՀՄ «մուսուլմանական» հանրապետություններ: Նա դիվանագիտական հարաբերություններ հաստատեց վերջիններիս հետ, բայց չուներ զգալի միջոցներ, որոնք կարող էր ներդնել այդ երկրներում, ինչն էլ դարձավ արտաքին հարաբերություններում գործընթացի արգելակման հիմնական պատճառը:

Լարվածություն էր նկատվում Ադրբեջանի հետ հարաբերություններում, որին սկզբնապես Իրանն օգնություն էր տրամադրում Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում: Ադրբեջանի այն ժամանակվա նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը (1992-1993) հայտարարում էր, որ ադրբեջանցիները պետք է միավորվեն մեկ ընդհանուր պետության կազմում և ստեղծեն Մեծ Ադրբեջան: Սա Իրանը դիտում էր որպես իր պետության հիմքերը խարխլելու և պառակտելու փորձ: Էլչիբեյին փոխարինած նոր նախագահ Հեյդար Ալիևը (1993-2003) կարծես թե որոշակիորեն մեղմեց լարվածությունը հարաբերություններում, բայց նրա՝ իշխանության գալը ստեղծեց այլ խնդիրներ: Նախ՝ Հ. Ալիևը շարունակեց Կովկասում և Կենտրոնական Ասիայում բնակվող թյուրքական ժողովուրդներին միավորելու Ա. Էլչիբեյի քաղաքականությունը՝ նախապատվությունը տալով Թուրքիայի գերիշխանությանը (Թուրքիայի նախկին նախագահներից Թուրգութ Օզալը (1989-1992) առաջինն էր, ով հրապարակայնորեն հայտարարեց թյուրքական պետությունների համա-գործակցություն ստեղծելու մասին, որը կնգվեր Ադրիատիկ ծովից մինչև Չինական մեծ պատը): Հ. Ալիևը, ԱՄՆ-ի համաձայնությամբ, ռազմավարական գործընկերության վերաբերյալ պայմանագիր է կնքում Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ, և համատեղ ուժերով նրանք դուրս են մղում Իրանին հետխորհրդային տարածքից:

Ադրբեջանը հասկացավ, որ այն ֆինանսական օգնությունը, որն ինքն ակնկալում էր նախկին խորհրդային երկրներից, իրատեսական չէ, և այն իրեն կարող է տրամադրել միայն Թուրքիան: Վերջինս վարկային միջոցներ էր ստանում Արևմուտքից: Հենց այս պատճառով էր, որ Ադրբեջանը փորձեց վարկեր ստանալ ԱՄՆ-ից և նրա եվրոպական գործընկերներից: Հ. Ալիևը փոփոխեց մի շարք օրենքներ այն սկզբունքով, որ արևմտյան գործարարները շահագրգռվեն Ադրբեջանում

ներդրումներ կատարելու, հատկապես նավթարդյունաբերության ոլորտում: Վրաստանի նախագահ Է. Շևարդնաձեն, ոգեշնչվելով նավթի տարանցիկ գոտուց եկամուտ ստանալու հեռանկարից, համաձայնեցրեց իր տեսակետները Հ. Ալիևի տեսակետների հետ, ինչի հետևանքով ԱՄՆ-ն կովկասյան տարածաշրջանը դարձրեց իր ռազմավարական հետաքրքրությունների կենտրոնը[1]:

Արևմտյան կապիտալի ներթափանցումը Կովկասում և Կենտրոնական Ասիայում առաջ բերեց Իրանի դժգոհությունը, որը մեղադրում էր Ադրբեջանին ամերիկյան իմպերիալիստական ծրագիրը խրախուսելու մեջ: Մեկ այլ խնդիր էր Բաքվից դեպի բաց ծով նավթային ճանապարհների որոշումը: Իրանը հույս ուներ, որ այդ ճանապարհներից մեկը կանցնի իր տարածքով, և այն կլինի ամենակարճ ուղին դեպի Պարսից ծոցի ավազան: Պահուստային տարբերակ էր նաև Իրանի ու Թուրքիայի տարածքներով դեպի Միջերկրական ծովի Ջեյհան նավահանգիստ ձգվող նավթուղին: Այդ ուղիները, սակայն, մերժվեցին և՛ ԱՄՆ-ի, և՛ Ադրբեջանի ազգային նավթային ընկերությունների կողմից:

1990-ականներին ակներև դարձավ Իրանի հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ, որին նա տրամադրեց տարանցիկ միջանցք (ներկայումս փակված է Թուրքիայի կողմից)՝ նպատակ ունենալով ընդլայնելու իր արտաքին առևտրի հնարավորությունները: Իրանը սկսեց ակտիվորեն թափանցել հայկական շուկա վարկերի տրամադրմամբ և մեծածավալ առևտրի միջոցով: Սա որոշակիորեն օգնեց հաղթահարելու ինչպես Իրանի, այնպես էլ Հայաստանի տնտեսական մեկուսացումը:

1992 թ. Իրանը փորձեց միջնորդական առաքելություն իրականացնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրում: ԻԻՀ չորրորդ նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին (1989-1997) այն պետական

գործիչն էր, որն իրանա-իրաքյան պատերազմի 8 տարիներին ղեկավարել էր երկիրը, և որն առավել, քան որևէ մեկը, պետք է իսկապես գնահատեր անվտանգության և խաղաղության արժեքը: Սա այն պատճառներից էր, որոնք դրդեցին նրան միջամտելու հարևան երկրների միջև հրահրված պատերազմին: Եվ քանի որ նրան հարգում և վստահում էին երկու երկրների պաշտոնյաները, նա հստակ ընդգծում էր, որ առաջին հերթին Ադրբեջանն ու Հայաստանը պետք է փորձեն հասկանալ իրավիճակը տարածաշրջանում՝ մի կողմ դնելով տարաձայնությունները: Նա առաջարկում էր խնդրի լուծումը քննարկել սեղանի շուրջ, որպեսզի տարածաշրջանի երկրները կարողանային կանխել հետագա արյունահեղությունն ու բնակչության նյութական և հոգեբանական վնասները՝ ելնելով և՛ ադրբեջանական, և՛ հայկական կողմերի շահերից:

1991 թ. փետրվարի 17-ի իր հուշագրության մեջ Հ. Ռաֆսանջանին գրում է. «Ես առանձին հանդիպում ունեցա Ադրբեջանի վարչապետ պարոն Հասան Հասանովի հետ: Նա անկեղծորեն խոսեց իր և այլ հանրապետությունների խնդիրների մասին: Նրանք շատ վրդովված են Հայաստանի դեմ հրահրված պատերազմից և միջնորդության խիստ կարիք են զգում: Նրանք իրենց թույլ են համարում, պնդում են, որ ռուսները շատ զենք են տվել Հայաստանին և ոչ մի օգնություն չեն ցուցաբերել Ադրբեջանին: Թե՛ ԱՄՆ-ն, թե՛ Ռուսաստանն այժմ սատարում են Հայաստանին, երբ խորհրդային բանակը մնում է երկու հանրապետություններում էլ և ենթակա է Ռուսաստանին՝ այդպիսով անտեսելով տեղական իշխանությունների իրավունքները: Ռուսներն ուժ են գործադրում ուրիշների նկատմամբ: Նա այլ շատ տեղեկություններ էլ հաղորդեց իրենց վիճակի մասին»[2]:

1991 թ. մարտի 25-ին ԻԻՀ արտգործնախարար դոկտոր Ալի Աքբար Վելայաթիի՝ Ադրբեջան ու Հայաստան մեկնելու և միջնորդական առաքելություն հաստատելու հայտարարության վերաբերյալ Հ. Ռաֆսանջանին գրում է. «1991 թ. մարտի 13-ի կեսօրին զանգահարեց Ադրբեջանի վարչապետ պարոն Հասան Հասանովը: Նա իր անհանգստությունն էր հայտնում հայերի ճնշումից և տեղեկացրեց, որ նրանք վերցրել են Ադրբեջանի Աղդամ քաղաքի մի մասը և կրկին առաջ են շարժվում: Նա խնդրեց ինձ խոսել Հայաստանի և Ռուսաստանի նախագահների հետ՝ խնդիրը լուծելու և ՄԱԿ-ում ակտիվ լինելու համար: Ես խոսեցի ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ, որը հրաժարվեց այդ պատասխանատվությունը ստանձնելուց: Նա ասաց, որ Միացյալ Նահանգները խնդրել է Հայաստանին մասնակցել Բելգիայում Թուրքիայի հետ հանդիպմանը՝ խաղաղ բանակցությունների համար, բայց Հայաստանը մերժել է՝ ասելով, որ դրանում պետք է ընդգրկվի նաև Իրանը»[3]:

1992 թ. ապրիլի 22-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի տարածքում Ադրբեջանի և Հայաստանի Հանրապետությունների միջև Իրանի միջնորդությամբ

Իրանի նախագահ Հ. Ռաֆսանջանին, ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը և Ադրբեջանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Յ. Մամեդովը

հաստատված հրադադարը կարծես թե պահպանվում էր, բայց արևմտյան լրատվամիջոցները չէին ցանկանում միջնորդության նախաձեռնությունը վերագրել Իրանին:

«1992 թ. ապրիլի 5-ի երեկոյան, արտաքին գործերի նախարարության պնդմամբ, ես հեռախոսով խոսեցի Արևմտյան Գերմանիայի կանցլեր պարոն Հելմութ Քոլի հետ Լեռնային Ղարաբաղի տարածքում միջնորդական առաքելության համակարգման և երկու երկրների միջև առևտրական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության մասին. ներկայումս այդ հավասարակշռությունը խախտված է հօգուտ Գերմանիայի»[4]:

1992 թ. մայիսի 6-ին Թեհրան է ժամանում ադրբեջանական պատվիրակությունը, որը Ռաֆսանջանիի հետ ունեցած առանձնազրույցի ժամանակ շեշտել է համապարփակ համագործակցության զարգացման անհրաժեշտությունը, այնուհետև խոսել են պատերազմի և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի մասին: Ադրբեջանական կողմը հայտնել է, որ միայն խաղաղություն են ցանկանում:

Նույն օրը՝ երեկոյան, Թեհրանում տեղի է ունենում հայաստանյան պատվիրակության հետ հանդիպումը, որը գլխավորում էր ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Հ. Ռաֆսանջանին այս երկու բանակցությունները նմանեցնում է իրար՝ ասելով, որ երկու կողմն էլ միևնույն բաներն էին ցանկանում՝ ճանապարհներ, երկաթուղիներ, կամուրջներ, գազ և սնունդ: Թեհրանում նախատեսված էր մատուցել համատեղ ընթրիք, բայց հայկական պատվիրակությունը մերժում է ընթրել ադրբեջանական կողմի հետ: Ընթրիքը մատուցվում է առանձին, որի ժամանակ երկու կողմն էլ իրենց բարի կամքն են արտահայտում պատերազմի խաղաղ կարգավորման առնչությամբ:

Այս հանդիպումների կապակցությամբ Հ. Ռաֆսանջանին գրում է. «Պարզվեց, որ պարոններ Մամեդովն ու Պետրոսյանը (Ադրբեջանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար և Հայաստանի նախագահ) նախկինում չեն տեսել միմյանց, չնայած նրանք հեռախոսազրույց են ունեցել: Լողավազանում մենք շրջանաձև նստեցինք: Ես նստեցի նրանց երկուսի

արանքում և խոսեցի նախ, թե ընդհանուր առմամբ որոնք են հակամարտության վնասները և խաղաղության շահերը, ապա՝ երկու կողմերի ստորագրության համար պատրաստված փաստաթղթի տեքստի մասին: Փաստաթղթի բովանդակությունը մեծ մասամբ ընդունվեց երկու կողմից էլ, բայց փաստաթղթի որոշ կետերի և արտահայտությունների վերաբերյալ տարաձայնություններ կային»[5]:

Ռաֆսանջանին նշում է, որ հայկական պատվիրակությունը լիովին հնազանդվում էր նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, ինչը չէր կարելի ասել ադրբեջանական կողմի մասին: Ադրբեջանական մի շարք փորձագետներ կասկածեն հայտնել փաստաթղթի որոշ կետերի շուրջ: Այս կապակցությամբ Իրանի և Ադրբեջանի միջև համագործակցության հռչակագրեր ստորագրվեցին: Իրանցիները ադրբեջանցիներին 500 մլն դոլար տվեցին իրանական ապրանքներ գնելու համար: Քանի որ հակամարտության գոտում կրակը շարունակվում էր, որոշվեց, որ ադրբեջանցիները գիշերը կմնան հայերի հետ հաշտվելու համար:

Հայկական պատվիրակության հետ հանդիպումը տեղի է ունեցել արդեն լրագրողների մասնակցությամբ, որի ընթացքում համաձայնագիրը ստորագրվել է: Հ. Ռաֆսանջանին նշում է, որ երեկոյան առանձին ընթրիք է մատուցվել նաև ՀՀ նախագահի կնոջը, որի ընթացքում պարզել է, որ հայերը բավականին լավ են վերաբերվում Ռուսաստանին և նրանից ակնկալում են մեծածավալ ռազմական օգնություն, նաև լավ հարաբերություններ ունեն Սիրիայի հետ:

Նախատեսված էր, որ երկու պատվիրակությունները կժամանեն հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 8-ին՝ փոխզիջման վերջնական տեքստը հաստատելու և ստորագրելու համար: Մայիսի 7-ին պաշտոնական և հրապարակային արարողությամբ երեք երկրների նախագահները ստորագրում են փաստաթուղթը: Փաստաթղթով որոշվում էր մեկշաբաթյա զինադադար կնքել, որի ընթացքում կողմերը կպայմանավորվեին, որ Իրանի նախագահի ներկայացուցիչ Մ. Վայեզիի՝ տարածաշրջան (Բաքու, Երևան, Լեռնային Ղարաբաղ) ժամանմամբ կրակը կդադարեցվի, և միաժամանակ կբացվեն բոլոր կոմունիկացիոն ճանապարհները՝ տնտեսական կացությունը բարելավելու նպատակով: Հաջորդ օրը՝ մայիսի 8-ին՝ կարճ հարցազրույցից հետո, կողմերը մեկնում են օդանավակայան, և նրանց ուղեկցում է անձամբ Հ. Ռաֆսանջանին: Նա նշում է, որ ինքը սովորաբար չի ուղեկցում հյուրերին օդանավակայան, որովհետև երկուսին ճանապարհելը միշտ ժամանակատար է լինում, սակայն այս անգամ բացառություն է անում: Նա Մեհրաբադ օդանավակայան է հասնում երկու պատվիրակություններից առաջ: Սկզբում ճանապարհում է ադրբեջանական կողմին, ապա՝ հայկական:

Հ. Ռաֆսանջանին գրում է. «Ադրբեջանի վարչապետը զանգահարել էր Բաքվից և խոսել մեր դեսպան պարոն Նահավանդյանի հետ՝ տեղեկացնելով, որ այսօր՝ առավոտյան, հայերը

Հ. Ռաֆսանջանի, Հ. Ալիև

հարձակվել են Շուշի քաղաքի վրա և առաջ են շարժվում: Նա ուզում էր, որ ես հայերին ասեմ դադարեցնել առաջխաղացումը: Օդանավակայանում լուրը փոխանցվեց Յ. Մամեդովին: Ես խոստացա արագ քայլեր ձեռնարկել հակամարտությունը դադարեցնելու համար: Հետո հարցը քննարկեցի հայերի հետ: Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ասաց, որ տեղյակ չէ կատարվածից: Հայկական կողմն ամաչում էր և պնդում, որ դա հավանաբար հրահրել են ադրբեջանցիները, ապա ասում են, որ տեղյակ չեն: Նրանք անմիջապես հեռախոսով խոսեցին Երևանի հետ և պահանջեցին դադարեցնել պատերազմը: Նրանք իրենց զարմանքն ու հիացմունքն էին հայտնում իմ համբերատարության համար, երբ ես դիմանում էի ժամեր տևող ձանձրալի բանակցություններին և ի մի բերում հակառակ կարծիքներ»[6]:

1992 թ. հունիսի 23-ի երեկոյան Ազգային անվտանգության Գերագույն խորհուրդը քննարկում է Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի, Ադրբեջանի, Նախիջևանի, Աֆղանստանի միջև առկա հակամարտությունը, և որոշվում է տեղակայել իրանական դիտորդներ Նախիջևանում և Հայաստանում, օգնել Ադրբեջանին և խնդրել Հայաստանին Թեհրանի գագաթնաժողովից առաջ վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ:

«1993 թ. սեպտեմբերի 8-ի երեկոյան զանգահարեց Հայաստանի նախագահը: Ես քննադատեցի հայկական կողմի ներխուժումը Ադրբեջան, և նա ասաց, որ իրենք նահանջել են Որոտանի շրջանից (Կուբաթլու) և այլևս ոչ մի առաջխաղացում չեն գրանցի, աստիճանաբար կլքեն Ղարաբաղի տարածքը և լավ որոշումների մասին շուտով կհայտարարեն ռուսական բանակցությունների ժամանակ: Ես շեշտեցի, որ եթե Թեհրանի հանդիպումից հետո հայերը գործեն ընդունված որոշումների համաձայն, այդ խոստումները կկատարվեն: Նա ցանկանում էր ինձ հետ մի քանի անգամ ևս հեռախոսազրույց ունենալ, բայց ես հրաժարվեցի»[7]:

Հետագայում Ռաֆսանջանին իր հուշագրություններում բազմաթիվ մանրամասներ է պատմում հայկական և ադրբեջանական կողմերի հետ

ունեցած հանդիպումներից, զրույցներից ու փոխայցելություններից: Հետաքրքիր է, որ Ադրբեջանում Հեյդար Ալիևի նախագահության շրջանից երկու պետությունների միջև նկատվում է հարաբերությունների բարելավում: Հ. Ալիևի հետ հանդիպումների ժամանակ Ռաֆսանջանիին է փոխանցվում մի քարտեզ, որում մանրամասնորեն նկարագրվում է, որ եթե Զանգեզանն անցնի հայկական կողմի վերահսկողության տակ, դա մեծ վնաս կհասցնի նաև իրանական սահմանային շրջաններին՝ այդպիսով դրդելով Իրանին խառնվելու պատերազմական գործողություններին: Ադրբեջանական կողմն իր պատրաստակամությունն է հայտնում իրենց երկրի ամբողջ վերահսկողությունը հանձնելու Իրանին և Ադրբեջանը հռչակելու իսլամական հանրապետություն, քանի որ, առանց իրանական կողմի օգնության, նրանք չէին կարող հաղթել, իսկ հայկական կողմը գուցե հասներ մինչև Բաքու: Ռաֆսանջանին նշում է, որ տվյալ պահին առաջնային խնդիրը հակամարտության դադարեցումն է, իսկ մնացածը հետագայում կորոշվի: Այդ նպատակով դոկտոր Վելայաթին նույն հանդիպմանը զանգահարում է Հայաստանի փոխարտգործնախարարին և Ռաֆսանջանիի ուղերձը փոխանցում Հայաստանի նախագահին: Թվում էր, թե նրանք մի տեսակ սպառնացին հայկական կողմին: Այս մասին հայտնում են նաև Հ. Ալիևը և Հ. Ռաֆսանջանին լրագրողների հետ հանդիպման ժամանակ[8]:

1994 թ. հունիսի 1-ին Հ. Ռաֆսանջանին մասնակցում է Հ. Ալիևի և Այաթոլլահ Ա. Խամենեիի հանդիպմանը: Այդ մասին Հ. Ռաֆսանջանին գրում է. «Հանդիպումից առաջ Այաթոլլահ Խամենեիի հետ խոսեցի պրն Ալիևի հետ բարձրացված հարցերի շուրջ, Լեռնային Ղարաբաղի պատերազմի և Ռուսաստանի՝ իրանա-ադրբեջանական սահմանին ներկայության առաջարկի, ինչպես նաև ադրբեջանական հողում հայկական և ադրբեջանական ուժերի հեռավորության մասին: Հանդիպումը սկսվեց: Պրն Ալիևը և նրա պատվիրակությունը ժամանեցին: Շատ դեպքերում բանակցությունները տարաձայնություններ էին առաջացնում: Բոլորի հետ առանձին բանակցեցինք և հարաբերական համաձայնության եկանք: Բանակցություններն ու արարողությունները տևել են երեկոյան 17:30-21:30: Ադրբեջանցիները շատ խիստ էին տրամադրված: Ըստ ամենայնի, նրանք վախենում են իրենց ներքին հակառակորդներից: Ես պատասխանեցի նրանց այն հարցին և խորհուրդներին, որոնք վերաբերում էին ռուսական առաջարկին, որ մենք դեմ ենք մեր սահմանին ռուսական ուժերի տեղակայմանը:

1994 թ. դեկտեմբերի 20-ին պրն Վահան Բայբուրդյանը՝ Հայաստանի դեսպանը, եկավ ներկայացնելու իր հավատարմագրերը: Նա իր ելույթը արտասանեց պարսկերեն: Խոսեցինք համագործակցության և Իրանի դերի կարևորության մասին: Ես շեշտեցի, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծումից հետո մեր հարաբերությունները կզարգանան օպտիմալ կերպով»[9]:

Հետագայում՝ 1995-1997 թթ., Հ. Ռաֆսանջանին հանդիպումներ է ունենում ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանի և ՀՀ ԱԳ նախարար Ալեքսանդր Արզումանյանի հետ, որոնց ընթացքում կրկին շեշտվում է պատերազմական գործողություններն ավարտելու կարևորությունը: 1997 թ. մայիսի 13-ին տեղի ունեցած հերթական հանդիպման ժամանակ Հ. Ալիևը դժգոհում է Իրանի և Հայաստանի տնտեսական կապերից, բայց միևնույն ժամանակ շեշտում է, որ դա չի խանգարի աջակցել նաև Ադրբեջանին:

Այաթոլլահ Հաշեմի Ռաֆսանջանին այս ոլորտում շատ ակտիվ է եղել մինչև 1997 թ. առաջին կեսը, երբ նա նախագահ էր և դիվանագիտական ուղիներով շփվում էր Ռուսաստանի և հակամարտության կողմերի հետ: Բայց համաշխարհային տերությունները չէին կարող հանդուրժել իրենց ազդեցության անկումը և Իրանի ազդեցության մեծացումը: Այնուամենայնիվ, դիվանագիտական նախաձեռնությունները փաստում են Թեհրանի շահագրգռվածությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում, ինչը, իհարկե, որոշ չափով նվազեց արդեն Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ, երբ իրանական կողմը չեզոքություն պահպանեց՝ նշելով, որ հակամարտության լուծումը պետք է բխի երկու երկրների ժողովուրդների շահերից: Այսպիսով՝ Իրանն այս անգամ իր միջնորդական առաքելությունն ամբողջովին զիջեց Ռուսաստանի Դաշնությանը, որը, չլինելով հարևան պետություն, գուցե առավել շատ շահագրգռված էր սեփական նկրտումներով՝ հավանաբար այլ կերպ նայելով սահմանային իրադրության ու անվտանգության հարցերին:

Հղումներ

1 - Տե՛ս Старченков Г. И., Иран в глобальном и региональном аспектах, Исламская Республика Иран в 90–е годы (экономика, политика, культура), М., Российская Академия Наук, Институт Востоковедения, 1998, էջ 67-68:

2- ردپای آیت الله هاشمی در قره باغ /خاطراتی کمتر شنیده شده از نقش آیت الله در برقراری صلح بین ارمنستان و آذربایجان [rādpayi-I Ayātallāh Hašimī dār qāribaġ/ ĥaţirat-i kāmtār šinidi šudi āz nāqš-i Ayātallāh dār bārqārir-I sulh-i biyn-I Armanistan u Adārbayğan], https://www.khabaronline.ir/news/1439097 (մուտք՝ 07.05.2021).

3 - Նույն տեղում:

4 -Նույն տեղում:

5 - Նույն տեղում:

6 - Նույն տեղում:

7 - Նույն տեղում:

8- Տե՛ս Heydər Əliyev, Müstəqilliyimiz əbadidir, 1-ci kitab (iyun, 1993 - may, 1994), çıxışlar, nitqlər, bəyanatlar, məktublar, müsahibələr, Bakı, Azərnəşr, էջ 145-147:

9- ردپای آیت الله هاشمی در قره باغ /خاطراتی کمتر شنیده شده از نقش آیت الله در برقراری صلح بین ارمنستان و آذربایجان [rādpayi-I Ayātallāh Hašimī dār qāribaġ/ ĥaţirat-i kāmtār šinidi šudi āz nāqš-i Ayātallāh dār bārqārir-I sulh-i biyn-I Armanistan u Adārbayğan], https://www.khabaronline.ir/news/1439097 (մուտք՝ 07.05.2021).

Հայ-թուրքական հարաբերություններ: Ինչ խնդիրներ է լուծում Թուրքիան

Հրանտ Մելիք-Շահնազարյան
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

Սույն թվականի հունվարի 14-ին Մոսկվայում տեղի է ունեցել Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի հատուկ ներկայացուցիչների՝ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանի և դեսպան Սերդար Քըլըչի առաջին հանդիպումը: Այն մասին, որ երկու պետությունները որոշել են հարաբերությունների կարգավորման գործընթաց սկսել, հանրությունը տեղեկացել է Թուրքիայի իշխանություններից դեռևս 2021 թ. դեկտեմբերին: ՀՀ արտգործնախարարությունն այնուհետ շտապել է հաստատելու[1] Թուրքիայի արտաքին գերատեսչության ղեկավար Մեվլյութ Չավուշօղլուի հայտարարությունն այն մասին, որ Երևանն ու Անկարան հատուկ ներկայացուցիչներ կնշանակեն՝ երկու երկրների հարաբերությունները կարգավորելու համար: Նշված հայտարարություններից ուղիղ մեկ ամիս անց Մոսկվայում կայացավ Հայաստանի և Թուրքիայի ներկայացուցիչների վերոնշյալ հանդիպումը, որից հետո կողմերը հայտարարեցին, թե այն անցել է «դրական և կառուցողական» մթնոլորտում: Այդ հանդիպման արդյունքների մասին միակ պաշտոնական տեղեկատվությունն այն էր, որ երկու երկրները «համաձայնել են շարունակել լիարժեք կարգավորմանն ուղղված բանակցությունները՝ առանց նախապայմանների»[2]: Բայց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի և Թուրքիայի իշխանությունները մինչ իրենց ներկայացուցիչների այդ հանդիպումը որոշ հարցերի շուրջ արդեն պայմանավորվածություններ էին ձեռք բերել, օրինակ՝ Երևան-Ստամբուլ թռիչք-ների իրականացման թույլտվությունը հայկական և թուրքական ավիաընկերություններին, կարելի է ենթադրել, որ երկու երկրների օրակարգը բավական ընդգրկուն ու բովանդակային է: Այս տեսանկյունից Ռուբեն Ռուբինյանն ու Սերդար Քըլըչին ոչինչ չորոշող գործիչներ չեն: Նրանք կան, որպեսզի ցույց տրվի, թե իբր կողմերը բանակցում են: Իրականում, սակայն, շատ բան, եթե չասենք՝ ամեն ինչ, վաղուց արդեն որոշված է:

Երևան-Ստամբուլ չվերթերի վերականգնման որոշումն ասվածի միակ ապացույցը չէ: 2021 թ. սեպտեմբերին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել է, որ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու համար Հայաստանը պետք է նոր Սահմանադրություն ընդունի: «Հայաստանի Սահմանադրության տեքստում հղումներ են արվում Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներին: Նրանք պետք է հրաժարվեն դրանից»[3],- ասել է Ալիևը:

Իսկ ահա 2022 թ. հունվարի 27-ին Հայաստանում հաստատվել է Սահմանադրական բարեփոխումների խորհրդի կազմը: Ինչպես և կարելի էր սպասել, այն համալրված է տարատեսակ սաքունցներով և իոանննիսյաններով: Թե ինչով է զբաղվելու այդ խորհուրդը, կտեսնենք առաջիկայում: Բայց արդեն իսկ ակնհայտ է, որ Թուրքիայի հանդեպ մեր ազգային պահանջատիրությունը, այդ թվում նաև՝ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցը, դուրս է բերվել այս իշխանությունների օրակարգից: Այսպես՝ հունվարի 24-ին տեղի ունեցած ասուլիսի ընթացքում վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, թե Հայաստանի Հանրապետությունը երբեք Հայ դատի քաղաքականություն չի վարել: «....պետք է արձանագրենք, որ Ցեղասպանության ճանաչման գործընթացի լոկոմոտիվը միշտ էլ եղել է Սփյուռքն ու Սփյուռքի կազմակերպությունները»[4],- ասել է Փաշինյանը, ինչը, «դիվանագիտական լեզվից» թարգմանած, նշանակում է, որ պաշտոնական Երևանը Թուրքիայի համար այդ տհաճ հարցերի «պատասխանատու» հայկական սփյուռքին է ճանաչում:

Թուրքիան շատ լավ գիտի հայկական սփյուռքի կարողություններն ու այդ կարողություններից իր համար բխող վտանգի չափը: Այդ իսկ պատճառով այս փուլում պաշտոնական Անկարան փորձում է չեզոքացնել Սփյուռքի ազդեցությունը ՀՀ իշխանությունների վրա: Ջուգահեռաբար Թուրքիայի կառավարությունը հայերին որոշակիորեն սիրաշահելու քայլեր է ձեռնարկում՝ պատրաստվելով դեպի Հայաստան ուղիղ չվերթեր սկսելու նաև Վանից ու Կարսից: Այսպես՝ իշխանամերձ «Hürriyet» թերթի՝ Էրդողանի աշխատակազմի բարձրաստիճան աշխատակիցը հայտնել է, թե «կարծիքներ կան այն մասին, որ հատկապես Վանը հայերի համար կարող է զբոսաշրջային կենտրոնի վերածվել: Բացի այդ՝

ծրագրվել է Կարսի մերձակայքի որոշ պատմական կառույցների, այդ թվում՝ կամուրջների ու այլ շինությունների վերակառուցումը: Դրանք հայերի համար մեծ կարևորություն ունեն: Իսկ հայկական սփյուռքի ճնշումը նվազեցնելու նպատակով միաժամանակ կընդլայնվեն նաև առևտրային հարաբերությունները»[5]:

Այս բոլոր գործընթացներն ու հայտարարությունները խոսում են այն մասին, որ Հայաստանի և Թուրքիայի ներկայացուցիչների առաջին հանդիպման վերաբերյալ կողմերի տարածած հաղորդագրությունները հեռու են բանակցային իրական օրակարգի մասին ամբողջական տեղեկատվություն հաղորդելու պաշտոնական Երևանի խոստումներից: Այդ հանդիպումից երեք օր անց՝ հունվարի 17-ին՝ ԱԺ հերթական նստաշրջանի ընթացքում, ընդդիմադիր պատգամավորները փորձեցին որոշակի մանրամասներ պարզել Թուրքիայի հետ բանակցություններում ՀՀ ներկայացուցիչ Ռուբեն Ռուբինյանից, սակայն վերջինս հերթական բախումը սադրեց խորհրդարանում, որից հետո թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր ուժերի և թե՛ հանրության ճնշող մեծամասնության ուշադրությունը շեղվեց դեպի ԱԺ նիստերի դահլիճում տեղի ունեցած հայհոյախառն վեճը…

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացն արագ առաջ է գնում: Այն արդեն արժանացել է մի շարք երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի և ԱՄՆ-ի, ինչպես նաև միջազգային տարբեր կառույցների դրական արձագանքին: Հաջորդ քայլով Թուրքիան փորձելու է դուրս բերել այդ գործընթացն արտաքին խաղացողների ազդեցությունից և Հայաստանի հետ իր խնդիրները կարգավորել առանց այլոց միջամտության: Թուրքական կողմն արդեն հայտարարել է այն մասին, որ երկու երկրների ներկայացուցիչների հանդիպումներն այսուհետև պետք է տեղի ունենան կամ Հայաստանում, կամ Թուրքիայում: Այդ կերպ Էրդողանի կառավարությունը փորձում է ապահովագրել իրեն Հայկական հարցից վերջապես ձերբազատվելու այս գործընթացն աշխարհաքաղաքական որևէ կենտրոնի կողմից տապալվելու ռիսկերից: Իսկ նման վտանգ Թուրքիան իսկապես զգում է: Ավելին՝ Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու Թուրքիայի հիմնական շարժառիթը հենց դա է՝ իր գլխին դամոկլյան սրի պես կախված Հայոց ցեղասպանության գործոնի չեզոքացումը: Անկարայում հրաշալի գիտակցում են, որ Հայկական հարցը տասնամյակներ շարունակ եղել և շարունակում է մնալ այն գործիքը, որի միջոցով իր հիմնական մրցակիցները սահմանափակումներ են դրել Թուրքիայի առջև: Օրինակ՝ Հայկական հարցն է դարձել Թուրքիայի՝ Եվրոպական միությանն անդամակցելու հայտի մերժման հիմնական պատրվակը: Հայոց ցեղասպանությունը ճանաչելու սպառնալիքով է, որ արևմտյան երկրներն ազդում են Թուրքիայի այս կամ այն որոշման վրա: 2008

Ռ. Ռուբինյան, Ս. Քոչարյան

թ., երբ տեղի է ունեցել Հայաստան-Թուրքիա հարաբերությունները կարգավորելու առաջին փորձը, իմ խորին համոզմամբ, Թուրքիան ետ է կանգնել արդեն իսկ ստորագրված արձանագրությունները վավերացնելու իր պարտավորությունից ոչ թե Ադրբեջանի պահանջով, այլ այն բանից հետո, երբ գիտակցել է, որ այդ գործընթացն իր համար չի լուծում Հայկական հարցից ձերբազատվելու խնդիրը: Եվ հիմա դա է պատճառը, որ պաշտոնական Անկարան փորձում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացից դուրս թողնել աշխարհաքաղաքական բոլոր կենտրոններին, որպեսզի վերջիններս հանկարծ չազդեն պաշտոնական Երևանի որոշումների վրա: Իսկ Երևանը, ցավոք, այսօր ոչ թե բանակցում է Թուրքիայի հետ, այլ պարզապես ընդունում Անկարայում և Բաքվում կայացրած որոշումները: Ինչպես արդեն նշեցի, դրա համար է Հայաստանում Սահմանադրության փոփոխման գործընթաց սկսվել, և դրա համար է Փաշինյանը հայտարարում, թե Հայոց ցեղասպանության հարցը Սփյուռքն է բարձրացնում, ինքը դրա հետ կապ չունի:

Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ Թուրքիան չի կարող բացարձակապես մեկուսացնել Հայաստանը արտաքին աշխարհից: Բացի այդ՝ Թուրքիան Հայաստանը չի դիտարկում զուտ որպես մի երկիր, որից միայն անախորժ մեղադրանքներ են հնչում: Ընդհակառակը՝ այսօրվա Հայաստանը Թուրքիայի համար մի շարք հնարավորություններ է պարունակում, որոնցից պաշտոնական Անկարան ամեն կերպ փորձելու է օգտվել: Խոսքը, իհարկե, նախ և առաջ, ՀՀ տարածքով դեպի Ադրբեջան ցամաքային կապ ունենալու թուրք-ադրբեջանական դաշինքի նպատակի մասին է: Բայց ոչ միայն այդ: Տասնամյակներ շարունակ Թուրքիան զրկված է եղել Հարավային Կովկասում որևէ դերակատարում ունենալու հնարավորությունից: Խորհրդային Միության փլուզումից հետո թուրք գործիչները մեր տարածաշրջան վերադառնալու իրական հնարավորություն տեսան, բայց Հայաստանի

դիրքորոշման, ինչպես նաև Հայկական հարցի պատճառով դա նրանց այն ժամանակ չհաջողվեց: Հիմա, սակայն, իրավիճակը փոխվել է: Ընդ որում, այն փոխվել է ոչ թե 44-օրյա պատերազմից, այլ մինչ այդ՝ 2018 թ., Հայաստանում տեղի ունեցած պետական հեղաշրջումից հետո: 2019 թվականից սկսած՝ Թուրքիայի իշխանություններն արդեն բացահայտ խոսում էին հայ-ադրբեջանական հակամարտության մեջ ներգրավված լինելու մասին: Պատերազմի նախաշեմին Թուրքիայի պաշտպանության նախարարն իրենց անգամ հակամարտության կողմ կոչեց: Իսկ բուն ռազմական գործողությունների հետևանքով էլ Թուրքիայի զինված ուժերը հայտնվեցին Արցախում:

Այժմ Թուրքիայի իշխանությունները այս ձեռքբերումներն իրավապես ամրագրելու խնդիր ունեն: Արցախում դիտորդական առաքելություն իրականացնող ռուս-թուրքական համատեղ կենտրոնի մասին ձեռք բերված պայմանավորվածությունն[6] այս առումով, իհարկե, չի կարող բավարարել Էրդողանի կառավարությանը: Նրանք ավելի առաջ են գնացել և ասպարեզ բերել, այսպես կոչված, «3+3»՝ Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա, Իրան և Ռուսաստան երկխոսության ձևաչափը, որի առաջին հանդիպումը կայացել է Մոսկվայում 2021 թ. դեկտեմբերի 10-ին[7]: Թուրքիային խիստ անհրաժեշտ է, որ Հայաստանը որևէ կերպ չխոչընդոտի Հարավային Կովկաս վերադառնալու իր ծրագրերի իրականացմանը: Այդ խնդիրը լուծելու համար նրանք պատրաստ են նաև որոշ առումով սիրաշահելու հայկական կողմին, չնայած դրա անհրաժեշտությունը ՀՀ այս իշխանությունների պարագայում այդքան էլ չկա: Բայց պաշտոնական Անկարան շարունակում է աշխատել այդ ուղղությամբ, և արդեն մարտի 11-13-ը Անթալիայում կայանալիք դիվանագիտական ֆորումի ժամանակ մենք բոլորս կտեսնենք այդ ներկայացման հաջորդ արարը: ■

Հղումներ

1- Տես ՀՀ ԱԳՆ-ն հաստատում է. Հայաստանը Թուրքիայում հատուկ ներկայացուցիչ կնշանակի, https://newsarmenia.am/am/news/politics/HH-AGN-n-hastatum-e-/:

2- Տեղի է ունեցել Հայաստանի և Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների հանդիպումը, https://www.mfa.am/hy/press-releases/2022/01/14/meeting_armenia_turkey/11267:

3- Алиев: Армения должна принять новую конституцию, https://regnum.ru/news/3382833.html.

4- Ըստ Փաշինյանի՝ Ցեղասպանության ճանաչման գործընթացի լոկոմոտիվը միշտ էլ եղել է Սփյուռքը, https://armenpress.am/arm/news/1073854/:

5- Hürriyet. «Առաջիկայում օրակարգ կգա ՀՀ-ից Թուրքիայի այլ նահանգներ ևս թռիչքներ սկսելու հարցը», https://www.ermenihaber.am/am/news/2022/01/25/Hürriyet-Հայաստան-Թուրքիա1/224124:

6- Տես Անկարան ու Մոսկվան համաձայնության եկան Ղարաբաղում Թուրքիայի դիտորդական առաքելության հարցում, https://www.azatutyun.am/a/30977941.html:

7- Տես Մոսկվայում կայացել է «3+3» ձևաչափով առաջին հանդիպումը, https://hetq.am/hy/article/138886:

3 + 3 ձևաչափով առաջին հանդիպումը Մոսկվայում (առանց վրացական կողմի մասնակցության)

ԱՄՆ քաղաքականությունը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համատեքստում

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Հայաստանի հետ սահմանը Թուրքիան փակել է դեռ 1993 թ.՝ որպես աջակցություն Ադրբեջանին Արցախյան առաջին պատերազմում: Այդ պահից ի վեր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն ու սահմանների բացումը դարձել են տարածաշրջանում ԱՄՆ արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Սկսած նախագահ Բուշից՝ այդ առաջնահերթությունը պահպանվել է ԱՄՆ բոլոր նախագահների համար, որոնք փորձել են ներգրավվել և խթանել գործընթացը համապատասխան պայմաններ տեսնելու դեպքում: Այս հանգամանքով պայմանավորված՝ հայ-ամերիկյան հարաբերություններում մշտապես կարևոր հարցերից է եղել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը: Այդ է վկայում հատկապես այն փաստը, որ հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների հաստատման առաջին իսկ պաշտոնական հանդիպման ժամանակ ամերիկյան կողմը միանգամից առաջ է քաշել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցը: Մասնավորապես, 1992 թ. Ջեյմս Բեյքեր-Ռաֆֆի Հովհաննիսյան հանդիպման ժամանակ Բեյքերն առաջարկել է կարգավորել հայ-թուրքական հարաբերությունները՝ տեղեկացնելով, որ Անկարայի նկատմամբ տարածքային պահանջներ չներկայացնելը և սահմանների ճանաչման վերաբերյալ համապատասխան հայտարարություն անելը լուրջ քայլ կլինեն Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու տեսանկյունից: Այս հարցի շուրջ ԱՄՆ նախաձեռնողականությունը չի սահմանափակվել մեկ վարչակազմով, այլ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը մշտապես եղել է ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության օրակարգում ԱՄՆ բոլոր վարչակազմերի համար: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմամբ ԱՄՆ-ն ձգտում է մեծացնելու իր դերն ու ազդեցությունը ՆԱՏՕ-ի իր դաշնակից Թուրքիայի միջոցով՝ նվազեցնելով Ռուսաստանի դերն ու ազդեցությունը տարածաշրջանում: Քանզի այդ հարաբերությունների կարգավորմամբ կբացվեն սահմանները, ինչն իր հերթին կհանգեցնի Հայաստանի կախվածության նվազեցմանը Ռուսաստանից և Իրանից, կհեշտացնի Հայաստանի արտաքին հաղորդակցությունը Եվրոպական միության երկրների հետ և անարգել ելք կապահովի դեպի ծով[1]:

Այստեղ, իհարկե, պետք է նշել, որ ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններն այնքան էլ հարթ չեն, և մի շարք հարցերում նրանց շահերն անգամ հակասում են իրար: Այս մասին խոսվում է նաև բարձր մակարդակով, մասնավորապես ԱՄՆ պետքարտուղար Բլինկենը նշում էր, թե գաղտնիք չէ, որ ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև կան տարբերություններ, բայց Թուրքիան

ԱՄՆ պետքարտուղար Է. Բլինկենը

ՆԱՏՕ-ի անդամ է, և նրանք միասին աշխատում են հարթել այդ տարբերությունները՝ ամրապնդելու համար դաշինքը[2]: Թեև ԱՄՆ ներկայիս նախագահ Բայդենի համար ժողովրդավարությունն արտաքին քաղաքականության կարևոր բաղկացուցիչ է, Թուրքիայում ժողովրդավարության մակարդակի առումով ԱՄՆ ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանը նշում է, որ ԱՄՆ-ն այդ հարցերի մասին բարձրաձայնելու է, բայց իրենք այդ ուղղությամբ աշխատելու են Թուրքիայի և ՆԱՏՕ-ի իրենց այլ դաշնակիցների հետ[3]: Այսպիսով՝ պետք է շեշտել, որ, չնայած ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների լարվածությանն ու առկա խնդիրներին, Թուրքիան ԱՄՆ դաշնակիցն է ու ՆԱՏՕ-ի անդամ, և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը միանշանակ հանգեցնելու է ԱՄՆ շահերի առաջմղմանը տարածաշրջանում Թուրքիայի միջոցով:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման փորձ արդեն իսկ եղել է 2008 թ., այսպես կոչված, «ֆուտբոլային դիվանագիտության» շրջանակներում, որին ԱՄՆ-ն մեծապես աջակցում էր: Հենց սրա շրջանակներում էր, որ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը 2 անգամ այցելեց Հայաստան՝ 2010 և 2012 թթ.: Այդ շրջանում Թուրքիան վարում էր «զրո խնդիր հարևանների հետ» արտաքին քաղաքականությունը, որի շրջանակներում էլ սկսվեց Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը: Կողմերի միջև սկսված բանակցությունների հետևանքով 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրվում են հայ-թուրքական արձանագրությունները, որոնցով նախատեսվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել և բացել ցամաքային սահմանները: Այնուհանդերձ, արձանագրությունների

ստորագրման օրը գործընթացը հետաձգվեց երեք ժամով, քանզի անհամաձայնություն կար ԱԳ նախարարների հայտարարության տեքստի հարցում, և ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնն էր հարթել իրավիճակը, այսպես կոչված, հեռախոսային դիվանագիտությամբ: Թեև, ըստ այլ վարկածի, արձանագրություններն ի վերջո ստորագրվել են ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի շնորհիվ[4]:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար Թուրքիան մշտապես առաջ է քաշել նախապայմաններ: Դեռ 1990-ական թթ. սկզբին Թուրքիայի նախապայմանների թվում էին, բացի Ադրբեջանի և Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչումից, նաև Հայաստանի անկախության հռչակագրի վերախմբագրումը, ՀՀ զինանշանից Արարատ լեռան հեռացումը, որևէ հայտարարության կամ օրենքի ընդունումը Հայաստանի օրենսդրի կողմից այն մասին, որ Հայաստանը հրաժարվում է Թուրքիային որևէ տարածքային պահանջ ներկայացնելուց: Գաղտնազերծված փաստաթղթերը նույնպես պարունակում են տեղեկատվություն այդ նախապայմանների մասին, որոնք Թուրքիայի արտգործնախարարը ներկայացրել է Հայաստանի արտգործնախարարին[5]: Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ Թուրքիան 2008 թ. արձանագրությունների ստորագրումից հետո սկսում է առաջ քաշել նախապայմաններ՝ մասնավորապես կապելով Արցախյան խնդիրն արձանագրությունների վավերացման հետ: Պահանջվում էր նաև ընդունել 1921 թ. Կարսի պայմանագիրը և դադարեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված քայլերը[6]:

Թուրքիայի կողմից նախապայմանների առաջքաշման հետևանքով ՀՀ նախագահի 2018 թ. մարտի 1-ի հրամանագրով դադարեցվում է հայ-թուրքական արձանագրությունների կնքման գործընթացը[7]: Այդպիսով հայկական կողմը ցույց է տալիս, որ, ի տարբերություն Թուրքիայի, պատրաստակամ է հարաբերությունների կարգավորման՝ առանց նախապայմանների:

Հետադարձ հայացք նետելով փակուղի մտած «ֆուտբոլային դիվանագիտությանը»՝ պարզ է դառնում, որ Թուրքիան պատրաստ չէր գնալու զիջումների և հարաբերություններ հաստատելու առանց նախապայմանների՝ առանց առաջ քաշելու Լեռնային Ղարաբաղի խնդիրը և Հայոց ցեղասպանության ճանաչումից հրաժարման հարցը: Այստեղ հայկական կողմը փաստացի հայտնվեց փակուղու առջև: Այդ ժամանակ քննարկվում էր մի շատ հետաքրքիր տարբերակ, պատմական մի լուծում, որը Միացյալ Նահանգների նախագահ Քլինթոնի վարչակազմը կիրառեց սկզբում Իսրայելի և Հորդանանի, այնուհետև՝ նաև Իսրայելի և Եգիպտոսի միջև: Խոսքը որակավորված արդյունաբերական գոտիների (Qualified Industrial Zones) մասին է: Այն ենթադրում էր 50 %-50 % ներդրումով սահմանի վրա գործարանի կառուցում, օրինակ՝ տեքստիլի գործարանի: 50 % ներդրում կատարելու էր Իսրայելը, 50 %՝ Հորդանանը (նույն կերպ՝ նաև Եգիպտոսը Իսրայելի հետ), իսկ աշխատակիցները հավասարապես լինելու էին երկու կողմից. 50 %՝ իսրայելցիներ, 50 %՝ հորդանանցիներ: Այն արտադրանքը, որն արտադրվում էր այդ գործարաններում, Միացյալ Նահանգները հնարավորություն էր տալու առանց հարկերի և տուրքերի ներմուծելու ամերիկյան շուկա: Սա Քլինթոնի վարչակազմի բացառիկ մի գաղափար էր, որով նա փորձեց կողմերին հաշտեցնել կամ հարաբերությունները կարգավորել տնտեսական գործընթացի միջոցով: Սա հետաքրքիր լուծում էր, և հատկանշական է, որ Եգիպտոսի և Իսրայելի, ինչպես նաև Հորդանանի և Իսրայելի հարաբերությունները էապես տարբերվում են Իսրայելի և արաբական աշխարհի այլ երկրների հարաբերություններից: Սա հաջողված տարբերակներից էր: Երբ «ֆուտբոլային դիվանագիտությունը» ձախողվեց, որակավորված արդյունաբերական գոտիների գաղափարը ևս առաջ քաշվեց քաղաքագիտական շրջանակների կողմից որպես լուծման այնպիսի տարբերակ, որը միգուցե կիրառելի լինի Հայաստանի և Թուրքիայի դեպքում[8]:

2020 թ. արցախյան պատերազմից հետո, երբ արդեն բավարարված էր Թուրքիայի գլխավոր նախապայմաններից մեկը, ՀՀ իշխանությունների կողմից սկսեցին հնչել հայտարարություններ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: ՀՀ իշխանությունների՝ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու պատրաստակամության մասին է վկայում այն, որ 2021 թ. սեպտեմբերին Էրդողանը հայտարարեց, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իրեն հանդիպման առաջարկ է արել Վրաստանի վարչապետի միջոցով: Ի պատասխան՝ Էրդողանն առաջ քաշեց նոր նախապայման, այն է՝ Զանգեզուրի միջանցքի տրամադրումը, պնդելով, որ այդ ուղղությամբ հայկական կողմը պետք է հստակ քայլեր ձեռնարկի. «Տարակուսելի է, որ մի կողմից Փաշինյանը հայտարարում է, թե հայկական կողմը չի քննարկում այդ (Զանգեզուրի միջանցքի) հարցը, մյուս կողմից՝ ինձ հետ հանդիպելու ցանկություն հայտնում: Եթե ուզում է հանդիպել Թայիփ Էրդողանի հետ, ապա պետք է հստակ քայլեր ձեռնարկվեն…. Եթե նրանք անկեղծ են Վրաստանի վարչապետի միջոցով երկխոսության գնալու ցանկության մեջ և պատրաստ նոր գործընթաց սկսելու ուղղությամբ քայլերի գնալ, մենք էլ ընդառաջ կգնանք և դիվանագիտությանը ընթացք կտանք»[9]: Սակայն, ըստ Թուրքիայի ԱԳ նախարար Մևլյութ Չավուշօղլուի հայտարարության, «Մենք ամեն հարցում խորհրդակցում ենք Ադրբեջանի հետ և նման քայլերի ենք գնում Ադրբեջանի իմացությամբ: Ոչ ոք թող չկարծի, թե Ադրբեջանից անկախ կարող ենք գործել: Մեկ ազգ, երկու պետություն ենք: Սրանք դրական զարգացումներ են, և բոլորս շահելու ենք»[10]:

Հայաստանի ներկայիս իշխանությունների պնդմամբ՝ իրենք Թուրքիայի հետ հարաբերու-

թյունների կարգավորման հարցում առաջնորդվում են «առանց նախապայման» մոտեցմամբ: Մասնավորապես, ՀՀ ԱԳՆ խոսնակի պնդմամբ, «Հայաստանի Հանրապետությունը մշտապես հայտարարել է, որ պատրաստ է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը՝ առանց որևէ նախապայմանի: Այս առումով ևս պետք է փաստեմ, որ Հայաստանի մոտեցումը որևէ փոփոխություն չի կրել. նույն դիրքորոշումն արտացոլված է նաև ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրում: Մեր տպավորությամբ՝ Թուրքիայի կառավարությունը նույնպես կիսում է առանց նախապայմանի երկխոսություն սկսելու մոտեցումը»[11]: Այդ «տպավորությունները», սակայն, սխալ են, ինչպես ակնհայտ է դառնում Էրդողանի պնդումներից Սյունիքի միջանցքի ստեղծման մասին: Ուստի Հայաստանի առջև նոր նախապայման է դրված, որը, ըստ էության, նշանակում է, որ եթե Հայաստանը բավարարի այն, ապա կհայտնվեն նորերը:

Տարածաշրջանում իր քաղաքականության առաջնահերթություններին հավատարիմ մնալով՝ այս նոր գործընթացով ևս ԱՄՆ-ն խիստ հետաքրքրված է: Մասնավորապես, «Bloomberg»-ի կողմից արտահոսված տեղեկատվության համաձայն, հենց Ջո Բայդենն է հորդորել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին բացել Հայաստանի հետ սահմանը[12]: Խոսքը «Մեծ քսանյակի» հանդիպման շրջանակներում 2021 թ. հոկտեմբերի 31-ին Բայդենի և Էրդողանի հանդիպման մասին է, որի ընթացքում, ըստ պաշտոնական տեղեկատվության, քննարկվել են նաև «դիվանագիտական ջանքերը Հարավային Կովկասում»[13]: Այս ամենից անմասն չմնալով՝ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը և ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջեյք Սալիվանը վերջին շրջանում այս հարցն իրենց ուշադրության կենտրոնում են պահում: Այդ է վկայում այն փաստը, որ վերջին շրջանում իրենց գործընկերների հետ հանդիպումների ու հեռախոսազրույցների ընթացքում քննարկման առարկա են դարձել նաև հայ-թուրքական հարաբերությունները: Մասնավորապես, Սալիվանի՝ Թուրքիայի նախագահի գլխավոր խորհրդական Իբրահիմ Քալինի հետ սեպտեմբերի 22-ի հանդիպման[14], հոկտեմբերի 27-ի[15], նոյեմբերի 19-ի[16] և հունվարի 10-ի[17] հեռախոսազրույցների քննարկման թեմաների շարքում էր Հարավային Կովկասը:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մասին խոսել է նաև Հայաստանում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսին՝ մասնավորապես նշելով, որ «շատ կարևոր է դիտարկել և Թուրքիայի հետ հաշտեցման հեռանկարը նույնպես մտքում պահել, այդ մասին էլ մտածել: Մենք պետք է կրկնենք և հասկանանք, որ դա չի կարող մեկ օրում տեղի ունենալ, դրա համար դիվանագիտական մեծ ջանքեր կպահանջվեն և քննարկումներ: Սակայն շատ քաջալերող է լսել այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք եղել են (Էրդողանի և Փաշինյանի հայտարարությունները): Տեսնենք՝ կլինե՞ն արդյոք հնարավորություններ՝ գործնականում հետամուտ լինելու և այդ բառերից հետո գործողություններ անելու համար»[18]:

Գործողությունները հետևեցին մի քանի ամիս անց, երբ Հայաստանի և Թուրքիայի կողմից նշանակվեցին բանագնացներ: Թուրքիան որպես բանագնաց նշանակեց ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան և ցեղասպանությունը ժխտող Սերդար Քըլըչին: Իսկ հայկական կողմից բանագնաց նշանակվեց Ռուբեն Ռուբինյանը, ով չունի դիվանագիտական անհրաժեշտ փորձ[19]: Նշանակումներից հետո ԱՄՆ պետքարտուղար Բլինկենը իր թվիթերյան էջում ողջունել է այդ քայլը և իր աջակցությունը հայտնել[20]: 2022 թ. հունվարի 3-ին Թուրքիայի արտգործնախարար Չավուշօղլուի հետ հեռախոսազրույցի ընթացքում նա ևս մեկ անգամ ողջունել է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցչի նշանակումը[21]: Իսկ Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի և ԱՄՆ անվտանգության հարցերով խորհրդական Ջեյմս Սալիվանի՝ դեկտեմբերին կայացած հանդիպման ժամանակ վերջինս ողջունել է Հայաստանի և Թուրքիայի կողմից հարաբերությունների կարգավորման համար հատուկ ներկայացուցիչների նշանակումը[22]:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում հաջորդ տեղաշարժը եղավ հունվարի 14-ին, երբ Մոսկվայում տեղի ունեցավ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի հատուկ ներկայա-ցուցիչների առաջին հանդիպումը: Համաձայն ՀՀ ԱԳՆ-ի տարածած տեղեկատվության՝ «կողմերը համաձայնել են շարունակել լիարժեք կարգավորմանն ուղղված բանակցությունները՝ առանց նախապայմանների»: Սպասվում է նաև երկրորդ հանդիպումը, որի ժամկետների պլանավորումը տեղի կունենա դիվանագիտական ուղիներով[23]: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ Թուրքիայի ԱԳՆ-ի տարածած հայտարարության և ՀՀ ԱԳՆ հայտարարության տեքստերը ամբողջովին նույնն էին[24]:

Եզրակացություն

Սկսած 1992 թվականից՝ ԱՄՆ բոլոր նախագահների վարչակազմերի համար հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը եղել է առաջնային: Այս քաղաքական գիծը կարևորվում է նաև նախագահ Բայդենի վարչակազմի կողմից՝ որպես տարածաշրջանային առաջնահերթություն: Այդ քաղաքականության հիմքում այն համոզումն է, որ հայ-թուրքական սահմանի բացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման հետևանքով Հայաստանի համար Մոսկվայից առավել անկախ քաղաքական և տնտեսական միջավայր կձևավորվի: Դա էլ իր հերթին կնշանակի ԱՄՆ դաշնակից Թուրքիայի առավել մեծ ազդեցության ձևավորում Հարավային Կովկասում՝ Մոսկվայի ազդեցության

նվազման հաշվին, ինչն էլ երկարաժամկետ կտրվածքով կարող է հանգեցնել Հայաստանից ռուսական ռազմաբազայի դուրսբերմանը, քանի որ, նման դասավորվածությանն ի հետևանք, փորձ կարվի հիմնավորելու, որ Թուրքիայի կողմից Հայաստանին այլևս վտանգ չի սպառնում, հետևապես Հայաստանում ռուսական ռազմական ներկայությունն անիմաստ է:

Հատկանշական է, որ Հարավային Կովկասի մյուս երկու երկրները՝ Վրաստանն ու հատկապես Ադրբեջանը, արդեն հսկայական քաղաքական և տնտեսական կախվածություն ունեն Թուրքիայից, իսկ այս տարածաշրջանը պատմականորեն եղել է Թուրքիայի կամ Ռուսաստանի ազդեցության ներքո: Այսպիսով՝ ԱՄՆ-ի համար Հարավային Կովկասում ազդեցություն ձեռք բերելու և տարածաշրջան մուտք գործելու միակ պատնեշը հենց թուրքական դարպասն է, քանի որ իրանական և ռուսական դարպասները ԱՄՆ-ի համար փակ են: Այսինքն՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը ԱՄՆ-ի համար չի կրում զուտ երկու հարևան պետությունների միջև հարաբերությունների կարգավորման բնույթ, այլ պայմանավորված է տարածաշրջանում ամերիկյան շահերի սպասարկման տրամաբանությամբ, որի հիմնական նպատակը ռուսական ազդեցության թուլացումն է ամբողջ Հարավային Կովկասում:

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոնը Հայաստանում գործող առաջին և միակ գիտահետազոտական կազմակերպությունն է, որը զբաղվում է ամերիկագիտության ոլորտի ուսումնասիրությամբ:

Հղումներ

1- Տես Սարգսյան Ս., Հայ-ամերիկյան հարաբերությունների ձևավորումը գաղտնազերծված փաստաթղթերում, «Հայկական Քաղաքագիտական Հանդես», 2(9) 2018, № 2 (9), էջ 33-64:
2- Տես Secretary Antony J. Blinken with Efi Koutsokosta of Euronews, U.S. Department of State, December 2, 2021, https://www.state.gov/secretary-antony-j-blinken-with-efi-koutsokosta-of-euronews/, (մուտք՝ 27.01.2022):.
3- Տես Press Gaggle by Principal Deputy Press Secretary Karine Jean-Pierre and National Security Advisor Jake Sullivan En Route Glasgow, Scotland, The White House, November 1, 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/press-briefings/2021/11/01/press-gaggle-by-principal-deputy-press-secretary-karine-jean-pierre-and-national-security-advisor-jake-sullivan-en-route-glasgow-scotland/, (մուտք՝ 27.01.2022):
4- Տես Sargsyan S., The Use of Ambiguity in Mediated Agreements: The Armenian-Turkish Protocols, "Armenian Journal of Political Science", 2(5) 2016, № 2 (5), էջ 79-106:
5- Տես Սարգսյան Ս., «Հայ-ամերիկյան քաղաքագիտական առաջին ֆորումը», https://usarmenia.am, (մուտք՝ 27.01.2022):.
6- Տես Sargsyan S., The Use of Ambiguity in Mediated Agreements: The Armenian-Turkish Protocols, նշվ. աշխ.:
7- Տես Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr, (մուտք՝ 27.01.2022):.
8- Տես Ս. Սարգսյան Ս., «Հայ-ամերիկյան քաղաքագիտական առաջին ֆորումը»,: նշվ. աշխ.:
9- Էրդողանի խոսքով՝ Փաշինյանն իրեն հանդիպելու առաջարկ է արել, «Ազատություն» ռադիոկայան, https://www.azatutyun.am/a/31467657.html, (մուտք՝ 27.01.2022):.
10- Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանակցություններում Թուրքիան կներկայացնի երկրի նախկին դեսպանը ԱՄՆ-ում, https://www.azatutyun.am/a/31612518.html, (մուտք՝ 27.01.2022):.
11- ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Վահան Հունանյանի պատասխանները «Արմենպրես» լրատվական գործակալության հարցերին, Հունվարի 13, 2022, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2022/01/13/answers_Spox/11263, (մուտք՝ 31.01.2022):.
12- Տես Hacaohlu S., Turkey Moves to Normalize Armenia Ties in Bid to Please Biden, Bloomberg, December 13, 2021, https://www.bloomberg.com/news/articles/2021-12-13/turkey-moves-to-normalize-armenia-ties-in-bid-to-please-biden, (մուտք՝ 31.01.2022):.
13- Տես President Joseph R. Biden, Jr. met today with President Recep Tayyip Erdogan of Turkey on the margins of the G20 Summit, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/10/31/readout-of-president-bidens-meeting-with-president-recep-tayyip-erdogan-of-turkey/, (մուտք՝ 31.01.2022):.
14- Տես Statement by NSC Spokesperson Emily Horne on National Security Advisor Jake Sullivan's Meeting with Ibrahim Kalin, Spokesperson and Chief Advisor to the President of Turkey, White House, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/09/22/statement-by-nsc-spokesperson-emily-horne-on-national-security-advisor-jake-sullivans-meeting-with-ibrahim-kalin-spokesperson-and-chief-advisor-to-the-president-of-turkey/, (մուտք՝ 31.01.2022):.
15- Տես նույն տեղում: Statement by NSC Spokesperson Emily Horne on National Security Advisor Jake Sullivan's Meeting with Ibrahim Kalin, Spokesperson and Chief Advisor to the President of Turkey, White House, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/10/27/statement-by-nsc-spokesperson-emily-horne-on-national-security-advisor-jake-sullivans-meeting-with-ibrahim-kalin-spokesperson-and-chief-advisor-to-the-president-of-turkey-2/, (31.01.2022).
16- Տես Statement by NSC Spokesperson Emily Horne on National Security Advisor Jake Sullivan's Call with Ibrahim Kalin, Spokesperson and Chief Advisor to the President of Turkey, White House, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/11/19/statement-by-nsc-spokesperson-emily-horne-on-national-security-advisor-jake-sullivans-call-with-ibrahim-kalin-spokesperson-and-chief-advisor-to-the-president-of-turkey-3/, (մուտք՝ 31.01.2022):.
17- Տես նույն տեղում: Statement by NSC Spokesperson Emily Horne on National Security Advisor Jake Sullivan's Call with Ibrahim Kalin, Spokesperson and Chief Advisor to the President of Turkey, White House, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2022/01/10/statement-by-nsc-spokesperson-emily-horne-on-national-security-advisor-jake-sullivans-call-with-ibrahim-kalin-spokesperson-and-chief-advisor-to-the-president-of-turkey-4/, (01.02.2022).
18- Հարցազրույց Լին Թրեյսիի հետ, https://youtu.be/xHMdUtQrPtI:
19- Տես Սասունյան Հ., Թուրքիայի հետ Հայաստանի անհարկի բանակցությունների թակարդները, https://mediamax.am/am/column/121271/, (մուտք՝ 01.02.2022):.
20- Տես U.S. Secretary of state Antony Blinken's tweet, https://twitter.com/SecBlinken/status/1470999830470311941?s=20, (մուտք՝ 01.02.2022):.
21- Տես Secretary Blinken's Call with Turkish Foreign Minister Cavusoglu, U.S. Department of State, https://www.state.gov/secretary-blinkens-call-with-turkish-foreign-minister-cavusoglu-5/, (մուտք՝ 01.02.2022):.
22- Տես Statement by NSC Spokesperson Emily Horne on National Security Advisor Jake Sullivan's Meeting with National Security Council Secretary Armen Grigoryan of Armenia, White House, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/12/15/statement-by-nsc-spokesperson-emily-horne-on-national-security-advisor-jake-sullivans-meeting-with-national-security-council-secretary-armen-grigoryan-of-armenia/, (մուտք՝ 01.02.2022):.
23- Տես Տեղի է ունեցել Հայաստանի և Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների հանդիպումը, ՀՀ ԱԳՆ, https://www.mfa.am/hy/press-releases/2022/01/14/meeting_armenia_turkey/11267, (մուտք՝ 01.02.2022):.
24- Տես No: 18, 14 January 2022, Press Release Regarding the Meeting of the Special Representatives for the Normalization Process Between Türkiye and Armenia, Ambassador Serdar Kiliç and Deputy Speaker of the Armenian Parliament, Mr. Ruben Rubinyan, RT Ministry of Foreign Affairs, https://www.mfa.gov.tr/no_-18_-turkiye-ile-ermenistan-normallesme-sureci-gorusmeleri-hk.en.mfa, (մուտք՝ 01.02.2022):.

Շիայական շարժումը Ադրբեջանում

Սիրանույշ Վարդանյան
ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի աշխատակից

Ներածություն

1979 թ. Իրանում հեղափոխության հաղթանակից և երկրում իսլամական համակարգի հաստատումից հետո իրապես արմատական փոփոխություն տեղի ունեցավ երկրի արտաքին քաղաքականության ոլորտում: ԻԻՀ արտաքին քաղաքականության հայեցակարգում հեղափոխության արտահանմանն առաջնային տեղ է հատկացվել, որի շրջանակներում երկրից դուրս իսլամական շարժումներին աջակցելն անհրաժեշտություն էր համարվում: Երբ արդեն հեղափոխական կառույցները ձևավորվել էին, Իմամ Խոմեյնին հեղափոխությունն արտահանելու այն գաղափարախոսությունն առաջ քաշեց, ըստ որի՝ հեղափոխության արտահանումը պետք է տեղի ունենա մշակութային, քարոզչական ուղիներով՝ ներկայացնելով իսլամական արժեքներն ու սկզբունքները և դրանք լուսաբանելով «կեղեքված ու ճնշված» մահմեդականների գիտակցության մակարդակը բարձրացնելու նպատակով, առանց այլ երկրների ներքին գործերին ուղղակի և ֆիզիկական միջամտության[1]: Հեղափոխության արտահանման գաղափարին հավատարիմ հիմնական ուժը ԻՀՊԿ-ն էր (Իսլամական հեղափոխության պահապանների կորպուս): Դեռևս 1982 թ. իսլամական հեղափոխության մշակույթն ու արժեքները քարոզելու նպատակով ստեղծվել էր Իսլամական քարոզչության կազմակերպությունը (Sazman-e tabligat-e eslami), որը զբաղվում է տարբեր լեզուներով գրքերի հրատարակմամբ, իսլամական կոնֆերանսների անցկացմամբ: Միևնույն ժամանակ Իրանը շարունակում է համագործակցել բազմաթիվ երկրների ազատագրական շարժումների և ընդդիմադիր առաջնորդների հետ մշակութայինին և քարոզչականին զուգահեռ օգտագործելով դիվանագիտական և ռազմաքաղաքական այլ մեթոդներ: Հեղափոխության արտահանման ուղղություններից էր Մերձավոր Արևելքի իսլամական շարժումների և շիա համայնքների հետ աշխատանքը (Պաղեստին, Լիբանան, Իրաք, Եմեն, Բահրեյն, Պակիստան, Աֆղանստան, Ադրբեջան և այլն), մասնավորապես՝ կազմակերպչական և ֆինանսական աջակցությունը, զենքի մատակարարումը: Իրաքում Սադամ Հուսեյնի վարչակարգի փլուզումից և շիա ժողովրդական աշխարհազորայինների ակտիվացումից հետո Իրանում հայտարարվեց, այսպես կոչված, «Դիմադրության առանցքի»[2] գաղափարախոսության ձևավորման մասին: «Դիմադրության առանցքի» անդամ խմբերն են Լիբանանի «Հեզբոլլահը», Եմենի «Անսարուլլահը», Աֆղանստանի «Լաշգար-է Ֆաթեմյաններ» զորամիավորումը, Ադրբեջանի «Հուսեյնիյուն» «Հուսեյնականներ» զորամիավորումը, Պակիստանի «Լաշգար-է-Զեյնաբյունը» («Զեյնաբականների բանակը»), Իրաքի

«Հաշդ ալ-Շաաբին», Սիրիայի ազգային պաշտպանության ուժերը, Պաղեստինի «Համասը» և Իրանի «Բասիջը» («Իրանի ընչազուրկ ժողովրդի համախմբման կազմակերպություն»):

Այսպիսով՝ Իրանն Ադրբեջանը ևս դիտարկում էր որպես շիայական աշխարհի անքակտելի օղակ և իսլամական հեղափոխության արտահանման առաջնային երկիր: Այս համատեքստում փորձենք առավել մանրամասն խոսել Ադրբեջանում գործող շիայական կառույցների ու կազմակերպությունների բնույթի և գործառույթների մասին: Չնայած ԱՀ բնակչության մոտ 65 տոկոսը կազմում են շիաները, այնուամենայնիվ, ԱՀ-ում իսլամի շիայական ուղղության՝ քաղաքական դաշտ բերելու փորձերը հիմնականում կապված են Իրանի Իսլամական Հանրապետության ազդեցության հետ, քանի որ վերջինս Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու և այդ երկրից եկող սպառնալիքները չեզոքացնելու նպատակով որպես ազդեցիկ լծակ ընտրեց կրոնական գործոնը: 1990-ականներից ի վեր ԱՀ իշխանությունների վարած կոշտ և հակաժողովրդավարական քաղաքականության պատճառով հասարակության շրջանում կրոնի դերի բարձրացման հետևանքով երկրի քաղաքական կյանքում առաջացած վակուումը շատ արագ սկսել էին լցնել իսլամի շիայական ուղղության տարբեր հոսանքները և դրանց գաղափարական հետևորդ գործիչները: Իսկ իսլամական կառույցների գործունեությունը, որն ավելի ակտիվացավ հատկապես 2006 թվականից ի վեր, սկսել էր ավելի լայն արձագանք ստանալ ինչպես սոցիալապես անապահով, այնպես էլ իսլամի մեջ գաղափարական, քաղաքական ու հոգևոր նեցուկ տեսնող շրջանակներում: Իրանը ԱՀ-ում իր կրոնական քաղաքականությունը տարածելու համար հատկապես մեծ ուշադրություն է դարձրել երկրի հարավային շրջաններին, որոնք հիմնականում բնակեցված են թալիշներով: Ադրբեջանի շիայական գաղափարախոսության և դիմադրության հաջորդ կարևոր օջախները գտնվում են Ափշերոնյան թերակղզում, հատկապես Նարդարան ավանում, իսկ

երկրի հյուսիսում կարևոր և նշանակալի կենտրոն է Գանձակը (Գյանջա):

Շիայական կազմակերպությունները Ադրբեջանում

Իրանն իր կրոնական քաղաքականությունը իրականացնում է «փափուկ ուժի» կիրառմամբ, այն է՝ իսլամական քարոզիչների, բարեգործական կազմակերպությունների, Իրանի մշակութային կենտրոնի, կրթական հաստատությունների՝ «մեդրեսեների», շիայական կրոնական գրականության, լրատվամիջոցների միջոցով երկիր ներթափանցող իրանական իսլամական հոսանքների օգնությամբ: ԱՀ-ում գործում են հետևյալ շիայական կազմակերպությունները և կառույցները, որոնք, ենթարկվելով Բաքվի կենտրոնական իշխանությունների բռնաճնշումներին, շատ հաճախ գործում են ընդհատակյա կամ կիսալեգալ կարգավիճակով՝ վայելելով Իրանի աջակցությունը, չնայած այդ մասին պաշտոնական Թեհրանից որևէ հայտարարություն չի հնչում.

- «Խոմեյնիչիլեր թեշքիլաթը» («Խոմեյնականների կազմակերպություն»): Ադրբեջանի ազգային անվտանգության ծառայության տվյալներով՝ շիայական կարևոր կենտրոն Նարդարան գյուղում դեռևս ԽՍՀՄ շրջանում՝ 1980-ական թթ. սկզբին, իրանական հեղափոխության ազդեցությամբ ստեղծվեց շիայական քաղաքական ընդհատակյա առաջին կազմակերպությունը՝ «Խոմեյնիչիլեր թեշքիլաթը»:
- Ադրբեջանի իսլամական կուսակցությունը: Սա թերևս ԱՀ-ում գործող շիայական խիստ կազմակերպված ամենախոշոր ուժն է: Անկախացման առաջին տարիներին ձևավորված կրոնական այս կառույցը քաղաքական դաշտում մինչև օրս շարունակում է որոշ դերակատարություն ունենալ: ԱԻԿ-ի պատմությունը պաշտոնապես սկսվում է 1991 թ. սեպտեմբերի 2-ից, երբ տեղի ունեցավ կուսակցության հիմնադիր կոնֆերանսը: Այն ստեղծվել է 1991 թ. Նարդարանում, որի ակունքներում կանգնած էին «Ադրբեջանի ժողովրդական ճակատի» կազմից դուրս եկած մի խումբ գործիչներ՝ Ալիաքրամ Ալիևի գլխավորությամբ:

Կուսակցության գաղափարախոսության հիմքում այն համոզմունքն է, որ պետությունը չի կարող դուրս գալ ճգնաժամից այնքան ժամանակ, քանի դեռ նրա ղեկավարները չեն դիմել իսլամական արժեքներին և պետական կազմավորման իսլամական նորմերին: Սկզբնական շրջանում ԱԻԿ-ի գլխավոր նպատակն Իրանի Իսլամական Հանրապետության օրինակով երկրում շիայական կառավարության ձևավորումն էր, սակայն, պետական ապարատի ճնշումներով պայմանավորված, 2011 թ. կուսակցության ղեկավար Մովսում Սամեդովի ձերբակալությունից հետո կուսակցությունը վարում է առավել մեղմ քաղաքականություն՝ չհրաժարվելով իր սկզբունքներից:

- Ջումա մզկիթը: Այն 2000 թվականից ղեկավարում է Թեհրանում կրթություն ստացած իմամ Իլգար Իբրահիմօղլուն: Ջումա համայնքը հրաժարվել է իսլամական պաշտոնական կառույցների վերահսկողությունից և միշտ հանդես է եկել Ադրբեջանի կառավարության, մարդու իրավունքների խախտումների և կոռուպցիայի բացահայտ քննադատությամբ: Ջումա համայնքը մեղադրվում է Իրանի հետ ամուր կապեր ունենալու և նաև արմատական լինելու մեջ: Մզկիթը ուրբաթօրյա աղոթքների ժամանակ իր շուրջն է հավաքում շատ ավելի մեծ թվով հավատացյալների, քան Կովկասի մուսուլմանական վարչության վերահսկողության տակ գտնվող «պաշտոնական» մզկիթները:
- «Իմամ Խոմեյնի Իմդադ» կոմիտեն (Իմամ Խոմեյնիի անվան օգնության կոմիտե): Այն ակտիվ գործունեություն էր ծավալում հատկապես փախստականների շրջանում: Այս կառույցի գործունեության մեջ առավելապես շեշտադրված էր բարեգործական ուղղությունը, սակայն, բացի նյութական օգնությունից, այն ստանձնեց շիայական գաղափարների տարածումը:
- «Ֆյազիլյաթ» («Առաքինություն») կուսակցությունը: 2005 թ. հունիսի 20-ին ԱԻԿ-ի նախկին անդամները անցկացրին իրենց համագումարը և հայտարարեցին կուսակցության ստեղծման մասին՝ Հաջի Գյունդուզ Հաջիևի նախագահությամբ: Կուսակցությունը ստեղծվեց ԱԻԿ-ի պառակտման հետևանքով: Այն ունի մոտ 2000 անդամ:
- «Հեզբոլլահը» («Ալլահի կուսակցություն»): Մինչև 2000 թվականը «Հեզբոլլահի» Բաքվի մասնաճյուղի ղեկավարն էր Տարիել Ռամազանովը: Այն մի քանի տասնյակ մարդկանցից կազմված խումբ էր: Այնուհետև «Հեզբոլլահը» իր գործունեությունը ծավալել է հարավում՝ Լենքորանում և հարակից գյուղերում: Այն Ադրբեջանում գործել է գաղտնի պայմաններում: 2009 թ. Ադրբեջանի հատուկ ծառայությունները ձերբակալում են Ադրբեջանի «Հեզբոլլահի» անդամներին՝ ահաբեկչություն նախապատրաստելու մեղադրանքով: «Հեզբոլլահի» անդամները 2008 թ. կուսակցության ղեկավար Իմադ Մուղնիի սպանության մեջ մեղադրել են Իսրայելին և հայտարարել պատասխան գործողությունների մասին: Մեղադրվող կողմի տվյալներով՝ այս փուլում տեղեկություններ են հավաքվել երկրի ռազմավարական օբյեկտների և

Ադրբեջանի իսլամական կուսակցության խորհրդանշանը

Բաքվում Իսրայելի դեսպանատան վերաբերյալ:

- «Իմամի» («Իմամներ») կրոնական կազմակերպությունը:

Այն հիմնել են այաթոլլահ Խամենեիի հետևորդները: Այս կազմակերպության առաջնորդներից Ավազագա Էմանուլլաևը, խոսելով կազմակերպության նպատակների մասին, ասել է. «.... գլխավոր խնդիրը Յարդրմլիում և Լերիկում իսլամական հասարակություն ստեղծելն է»: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ ԱՀ հարավային շրջանների մի շարք գյուղերում ևս դպրոցականների շրջանում ձևավորվել է «Գանջ Իմամիլյար» («Երիտասարդ իմամներ») կազմակերպությունը: 2001 թ. մարտի վերջից կազմակերպության անդամներն անցան ընդհատակյա գործունեության:

- «Զեյնաբիլյար» («Զեյնաբի կողմնակիցներ». Զեյնաբը Մուհամմեդ մարգարեի ավագ դուստրն էր) միությունը: Այն գործում էր Իրանի հետ սահմանամերձ շրջաններում, որի ղեկավարը Իրանի քաղաքացի է:

- «Ահլ-է Բեյթ» («Մարգարեի ընտանիք») կառույցը: Կենտրոնակայանը գտնվում է Թեհրանում: Կազմակերպության գլխավոր նպատակն է խթանել իսլամի շիայական ուղղության տարածումն ամբողջ աշխարհում և համապատասխան կոնֆերանսների ու սեմինարների անցկացումը, շիայական կրոնական գրականության տրամադրումը դպրոցներին, ինչպես նաև Ադրբեջանում իրանամետ կառույցների գործունեության համակարգումը:

- «Մուսուլմանական միավորումը»: Այս կրոնական կազմակերպությունը հիմնվել է 2015 թ. Նարդարան ավանում Թալեհ Բաղիրզահեի գլխավորությամբ: Վերջինս ծնվել է Բաքվում 1984 թ.: 2005-2010 թթ. կրոնական կրթություն է ստացել Իրանի Ղոմ քաղաքում: ԱՀ վերադառնալուց հետո ակտիվորեն հանդես է գալիս երկրում կրոնական սահմանափակումների, այդ թվում՝ գլխաշորի արգելքի դեմ: Կրոնական կազմակերպության անդամները իրանցի այաթոլլահ Ալի Խամենեիին համարում են իրենց գերագույն հոգևոր առաջնորդը և մերժում են իշխանությունների հովանավորչությունն ու աջակցությունը վայելող և «պաշտոնական իսլամը» Ադրբեջանում ներկայացնող Կովկասի մուսուլմանների վարչության (ԿՄՎ) ղեկավար Ալլահշուքյուր Փաշազադեին: Շարժումը հանդես էր գալիս ԱԻԿ-ի անդամների, ինչպես նաև այլ քաղբանտարկյալների ազատ արձակման պահանջով, ուսումնական հաստատություններում հիջաբի արգելքի և երկրում բռնատիրական կարգերի հաստատման դեմ: Նարդարանում ձևավորվող հավանական ընդդիմադիր իսլամական ուժի սպառնալիքը չեզոքացնելու նպատակով կառավարությունն օգտագործեց 2015 թ. հերթական ցույցերը՝ խիստ վերահսկողություն սահմանելու համար, իսկ շարժման առաջնորդ Թ. Բաղիրզադեն կալանավորվեց ԱՀ իշխանությունների կողմից:



Ջումա մզկիթը

Հուսեյնական շարժումը

Իրանա-ադրբեջանական հարաբերությունների լարման պայմաններում բավական ակտիվացավ հատկապես «Հուսեյնիյյուն» (ադրբ.՝ «Hüseyniyyun», «Hüseynçilər», հայ.՝ «Հուսեյնականներ») ռազմականացված շիայական կազմակերպությունը, որը դիտարկվում է որպես վերոնշյալ «Դիմադրության առանցքի» մաս: Այս խմբավորումը պաշտոնապես կազմավորվել է 2015 թ. վերջին և 2016 թ. սկզբին Իրանի Ղոմ և Մաշհադ քաղաքներում սովորող Ադրբեջանի Հանրապետության 14 ուսանողներից՝ Սիրիայում ԴԱԻՇ-ի դեմ պայքարելու նպատակով: Այն իր անվանումը ստացել է ԻՀՊԿ երբեմնի առաջնորդ Ղասեմ Սոլեյմանովի կողմից:

«Հուսեյնիյյուն» շարժման առաջնորդն է Թոհիդ Իբրահիմբեյլին: Նրա ընտանիքը ծագումով Լենքորանից է, որը հետագայում հաստատվել է Իրանի Մաշհադ քաղաքում: Նա Իլհամ Ալիևի վարչակարգի կոշտ քննադատն է և հայտարարել է, որ շարժման նպատակը դիմադրության միջոցով Ադրբեջանի Հանրապետության շիաների հզորացումն է:

Իբրահիմբեյլին նշված 14 ուսանողներին հավաքել է Իսկանդեր Հուսեյնովի՝ Ղոմի աշխատավայրում՝ Նուր («Լույս») թարգմանչական ինստիտուտում, որից հետո՝ հրահանգել նրանց տեղափոխել Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսի մոտ գտնվող զորամաս: Դամասկոսում գտնվելու ժամանակ Իբրահիմբեյլին նշել է, որ մտադիր են նախապատրաստվել ոչ միայն ԴԱԻՇ-ի դեմ պայքարին, այլև Ադրբեջանում զինված հակամարտությանը: 25-օրյա պարապմունքներից հետո նրանց բաժանել են 4-5 հոգանոց խմբերի[3]: «Հուսեյնիյյուն» շարժման կառուցվածքի, ծրագրերի և ղեկավարության մասին տեղեկությունները սակավ են: Հայտնի է, որ 2013 թ. Թոհիդ Իբրահիմբեյլին հանդիպել է Իրանի առաջնորդ Սեյյեդ Ալի Խամենեիի հետ որպես «Ադրբեջանի Հանրապետության մարտնչող հոգևորականների ասամբլեայի» նախագահ: Հանդիպման ընթացքում նրանք խոսել են Ադրբեջանի Հանրապետությունում շիա բանտարկյալների վիճակի մասին: Իսկ արդեն 2017 թ. Թոհիդ Իբրահիմբեյլին Ջենջանում ներկա է

գտնվել Նարդարանի նահատակների հուշահամալիրի բացման արարողությանը, որտեղ հանդես է եկել 2015 թ. ԱՀ ՆԳՆ հատուկ նշանակության ոստիկանական ուժերի՝ Նարդարանի շիաների վրա հարձակման մասին ելույթով[4]: Այս խմբավորումն ունի տարածաշրջանում իրանական կառավարության կիսառազմական մյուս ուժերի՝ «Դիմադրության առանցքի» բոլոր հիմնական հատկանիշները, օրինակ՝ դեղին ու կանաչ գույների օգտագործումը, սեղմած բռունցքում հրացանի առկայությունը: Նրա անվան ընտրությունը ևս հետաքրքիր պատմություն ունի. «Մոհարրամի սգո»[5] և այլ կրոնական ծեսերի ժամանակ «Ադրբեջանը հուսեյինների երկիրն է» կարգախոսի վանկարկումը հիմք դարձավ խմբավորման համար ընտրելու հենց «Հուսեյնիյյուն» անվանումը, որը 2017 թ. ԻՀՊԿ երբեմնի առաջնորդ Ղասեմ Սոլեյմանիի հետ հանդիպման ընթացքում ճանաչվեց իբրև խմբավորման պաշտոնական անվանում: «Հուսեյնիյյուն» շարժումը հայտարարել էր, որ իր միակ նպատակը Սիրիայում ահաբեկչական ծայրահեղականներին հակազդելն է, և մտադիր չէ ընդլայնել իր գործունեությունը Ադրբեջանի Հանրապետությունում: Չնայած դրան՝ այդ շարժումը բնութագրվում է որպես Իրանի նոր «վստահված ուժ» այս անգամ Ադրբեջանի Հանրապետությունում, որը մեծ նմանություն ունի Դիմադրության առանցքի» վերը նշված մյուս ուժերի հետ: Փաստացի, հաշվի առնելով կրոնական կառույցների նկատմամբ ԱՀ իշխանությունների վարած կոշտ քաղաքականությունը, «Հուսեյնիյյուն» միավորման՝ որպես կազմակերպված ռազմական կազմակերպության գոյությունը նշանակալի քաղաքական հարված է ԱՀ իշխող վարչակարգին: «Հուսեյնիյյուն» զորամիավորման՝ Սիրիայում գտնվող անդամները ԱՀ վերադառնալուց հետո հիմնականում բանտարկվել են կամ ենթարկվել ԱՀ կառավարության բռնաճնշումներին: Նրանց թվում են՝ Էլմիր Ջահեդովը, որը ձերբակալվել էր ԱՀ կառավարության անվտանգության ծառայության կողմից 2018 թ. հուլիսի 3-ին Գանձակի (Գյանջա) նահանգապետի դեմ մահափորձ կատարելու համար:

➢ Վահիդ Իբրահիմբեյլին, որը մեղադրվում է Ադրբեջանի Հանրապետության կառավարության դեմ համառ և արմատական ջանքեր գործադրելու մեջ» և նախկինում ոստիկանության կողմից բերման էր ենթարկվել Բաքվում Իսրայելի դեսպանատան մոտ բողոքի ցույցի ժամանակ ու յոթ օրով կալանավորվել:

➢ Ֆալեք Վալիևը, որը մեղադրվում է «հանցավոր խմբի («Հուսեյնիյյուն») անդամ լինելու, «Ադրբեջանի Հանրապետության սահմաններից դուրս ահաբեկչական նպատակներով վերապատրաստում իրականացնելու» և «Ադրբեջանի Հանրապետության օրենքներից դուրս զինված խմբավորումների գործունեությանը մասնակցելու» մեջ: 2020 թ. Ռուսաստանի Դաշնությունում հայտնաբերվել է նրա նստավայրը: Նա ձերբակալվել է միջազգային հետախուզման նպատակով փոխադարձ իրավական օգնության շրջանակներում և արտահանձնվել Ադրբեջանի Հանրապետությանը: Վալիևը Գյանջայում կատարած ծանր հանցագործությունների համար դատարանի վճռով դատապարտվել է ութ տարվա ազատազրկման:

➢ Թալեհ Գոյուշովը, որն ակտիվորեն մասնակցել է 2021 թ. հուլիսի 10-ին Գյանջայում տեղի ունեցած բողոքի ակցիաներին: Ձերբակալվել է Պետական անվտանգության ծառայության կողմից և ենթարկվել քրեական պատասխանատվության:

Հատկանշական է Սյունիքի շուրջ Իրանի և Ադրբեջանի Հանրապետության միջև դիվանագիտական վեճերից հետո Հուսեյնական շարժման հայտարարությունը, որում մասնավորապես նշված է. «Սիրելի՛ ադըր-բեջանցիներ, Ալիևի վարչակարգը Ադրբեջանը ներքաշում է մեծ ճահճի մեջ: Իսրայելի վարչակարգը և Էրդողանի այլանդակ ծրագրերը կարող են շուտով հրկիզել Ադրբեջանը.... Մեզ օտար բանակներ և ահաբեկիչներ պետք չեն: Ադրբեջանի ժողովուրդը, հատկապես մեր երիտասարդությունը, չպետք է դառնա Ալիևի ընտանիքի հում երազանքների զոհը...»[6]:

Այսպիսով՝ թեև Ադրբեջանը աշխարհիկ պետություն է, որտեղ մեծ է Թուրքիայի և Իսրայելի ազդեցությունը, Իրանը հետևողական և արդյունավետ քաղաքականություն է վարում՝ փորձելով իր կրոնական ազդեցությունը տարածել վերջինիս վրա՝ ֆինանսավորելով ընդդիմադիր շիայական խմբերին: Գիտակցելով երկրում իսլամի ակտիվացմամբ պայմանավորված ներքին և արտաքին վտանգները՝ Ադրբեջանի իշխանություններն եռանդագին փորձեցին թուլացնել կրոնի դիրքերը, ինչը դրսևորվեց տարբեր պատրվակներով կրոնական սահմանափակումների և վերահսկողության գործիքների կիրառմամբ: Փաստորեն, Ադրբեջանի աշխարհիկ իշխանությունները, հասարակության շրջանում իսլամական գիտելիքների տարածումից և իսլամական արժեքների ու կենսակերպի աստիճանական որդեգրումից անհանգստացած, բացահայտ հակակրոնական քաղաքականություն են վարում: ■

Հղումներ

1- Տես Экспорт исламской революции, 18.01.2020, https://bit.ly/35Kau20(մուտք՝ 15.01.2022):

2- «Դիմադրության առանցքը» Իրանի Իսլամական Հանրապետության, Սիրիայում Բաշար ալ-Ասադի կառավարության և Լիբանանի «Հեզբոլլահի» միջև չգրված դաշինք է: Կոալիցիայի կազմում են նաև իրաքյան շիա աշխարհազորայինները, Ասադին աջակցող սիրիացի աշխարհազորայինները և եմենցի Անսար ալ-Իսլամը: Չնայած գաղափարական տարաձայնություններին՝ նրանք համագործակցում են ԱՄՆ-ի և Իսրայելի գործունեության ու տարածաշրջանում արևմտյան միջամտության դեմ պայքարում:

3- Տես İbrahimbəyli İranda dini təhsil alan şəxslərin iştirakı ilə "Hüseyniyyun" (Hüseynçilər) adlı silahlı dəstə yaradıb (Իբրահիմբեյլին ստեղծել է «Հուսեյնիյյուն» («Հուսեյնականներ») կոչվող զինված խմբավորում՝ Իրանում կրոնագիտություն սովորող մարդկանց մասնակցությամբ), 26.07.2018, http://ikisahil.az/post/101226-news-101226 (մուտք՝ 11.01.2022):

4- شیخ توحید ابراهیم بیلی در یادواره شهدای نارداران در زنجان: نارداران در آسیای میانه و قفقاز، نماد دشمنی با صهیونیسم، آمریکا و نماد مقاومت است. (Շեյխ Թոհիդ Իբրահիմբեյլին՝ ի հիշատակ Զենջանում Նարդարանի նահատակների. Կենտրոնական Ասիայում և Կովկասում Նարդարանը սիոնիզմի, ԱՄՆ-ի հետ թշնամության և «Դիմադրության առանցքի» խորհրդանիշն է), https://bit.ly/3ovbvSa (մուտք՝ 12.01.2022):

5- Մահմեդական լուսնային օրացույցի առաջին ամիսը:

6- فعالیت جنبش "حسینیون" در آذربایجان («Հուսեյնիյյուն» շարժման գործունեությունը Ադրբեջանում), https://avapress.com/fa/252095 (մուտք՝ 11.01.2022)

Ուղտը չոքեց ղազախների դռանը

Վարդան Հակոբյան
Դիվանագետ, վերլուծաբան

Հերթը հասավ Ղազախստանին: Այն, ինչը վաղուց սպասվում էր, սկսվեց անսպասելիորեն, ինչպես առաջին ձյունը: Սակայն ակնհայտ էր, որ ամբոխի գործողությունները նախապատրաստված ու կազմակերպված էին: Դրանց համար ազդանշան դարձավ նոր տարվա նախօրեին մեքենաների լիցքավորման գազի գնի բարձրացումը: «Խեղճ» ղազախները, տոնական սեղանները թողած, դուրս եկան «տարերային» բողոքի: Ստատիստի դերում հանդես եկող բազմահազարանոց քաղքենիությունը բողոքում էր կոռուպցիայի, սոցիալական անարդարության դեմ, անպատվում Նազարբաևին և նրա ընտանիքի անդամներին, նրա բարձրաստիճան կողմնակիցներին երկիրը թալանելու համար, պահանջում ժողովրդավարական բարենորոգումներ և նման դեպքերում ընդունված այլ կարգավորումներ: Այդ պայմաններում ընդամենը մեկ օր անց հայտնվեցին հարյուրավոր փոքրիկ ջոկատներ՝ հնգյակներ, որոնք իրար մեջ էին բաժանել հարձակման թիրախները և գործում էին կազմակերպված: Նրանք հարձակվում էին ռազմավարական նշանակության օբյեկտների, քաղաքապետարանների, ոստիկանության, ազգային անվտանգության և այլ պետական հիմնարկների, ՋԼՄ-ների գրասենյակների վրա: Ջինաթափ էին անում ոստիկաններին, ծեծում կամ սպանում նրանց: Իսկ քաղաքային խուժանը նույնքան կազմակերպված թալանում էր խանութները և բանկերը:

Երկրի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաևը բավական արագ գնահատեց ստեղծված իրավիճակը և հայտարարեց, որ տեղի ունեցողը պետական հեղաշրջման լավ նախապատրաստված փորձ է: Դրան, ըստ Տոկաևի, մասնակցում էին ահաբեկիչներ, այդ թվում՝ արտասահմանից, որոնց հիմնական հարվածն ուղղված էր Ալմա-Աթիին, որի գրավումը ճանապարհ կբացեր ողջ երկրի գրավման համար: Հունվարի 5-ին նախ երկրի արևմտյան և հարավային շրջաններում, ապա ողջ տարածքում Տոկաևը արտակարգ դրություն հայտարարեց, անհապաղ լուծարեց կառավարությունը և պաշտոնից հեռացրեց Ազգային անվտանգության խորհրդի ղեկավար Ն. Նազարբաևին՝ իր ձեռքը վերցնելով վերջինիս պաշտոնը: Նա նաև հայտարարեց, որ գործելու է առավելագույնս կոշտ: (Այստեղ տեղին կլիներ Ղազախստանի նախագահի վճռական քայլերը համեմատել 2014 թ. Ուկրաինայի և 2018 թ. Հայաստանի ղեկավարների՝ փողոցային խուժանի նկատմամբ թավշյա վերաբերմունքի հետ, բայց այդ թեման կարոտ է առանձին անդրադարձի): Չնայած երկրի ունեցած ուժային հնարավորություններին (60-հազարանոց բանակ և ավելի մեծաթիվ լավ պատրաստված ոստիկանական ուժեր)՝ թե՛ բանակային, թե՛ ոստիկանական և թե՛ անվտանգության ծառայության որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ կասկածելի կրավորականություն դրսևորեցին

ռազմավարական օբյեկտների պաշտպանության և կարգուկանոնի վերահաստատման գործում: Հասկանալով, որ չի կարող ամբողջությամբ վստահել նրանց, նախագահը դիմեց ՀԱՊԿ-ի օգնությանը: ՀԱՊԿ զորքերի (2300 զինվոր) արագ ժամանումը և անմիջապես օպերատիվ գործողությունների անցնելը սթափեցրին տատանվողներին և հնարավորություն տվեցին Տոկաևին գործելու ավելի վստահ ու վճռական և մեկ շաբաթում կարգավորելու իրավիճակը: Որքան ժամանակ դժվար է ասել:

Գնահատելով իրավիճակը, նշելով, որ Ղազախստանն ապրեց իր անկախության 30 տարիների ամենածանր ճգնաժամը, Տոկաևը, սակայն, չանդրադարձավ այդ ճգնաժամի իրական պատճառներին, ներքին ու արտաքին կազմակերպիչներին և նրանց հետապնդած նպատակներին, անպատասխան թողեց մի շարք հարցեր, որոնց պատասխանները լույս կսփռեին տեղի ունեցածի վրա: Չանդրադառնալ, սակայն, չի նշանակում անտեղյակ լինել կամ չիմանալ այդ հարցերի պատասխանները: Նա չի շտապում դա անելու՝ չբարդացնելու համար հետագայում տարբեր քաղաքական ուժերի հետ իր հարաբերությունները թե՛ ներքաղաքական դաշտում, թե՛ արտաքին ոլորտում: Դա, սակայն, վերլուծական շրջանակներում ծնում է իրարամերժ մեկնաբանություններ. մի կողմից ասվում է, թե տեղի ունեցածը երկու նախագահների կազմակերպած խաղն է՝ քաղաքական դաշտը վերադասավորելու նպատակով, մյուս կողմից, որ Տոկաևը օգտագործեց այս ամենը Նազարբաևին և նրա մերձավորներին խաղից դուրս մղելու և իր իշխանությունն ամրապնդելու նպատակով: Մի կողմից ենթադրում են, թե այս ճգնաժամը ծրագրված էր ՌԴ-ի և Չինաստանի կողմից՝ ջրի երես հանելու արևմտամետ

ընդդիմությանը և չեզոքացնելու նրան, իսկ մյուս կողմից, որ սա Արևմուտքի փորձն էր՝ օգտագործելով ազգայնական և հակառուսական ու հակաչինական ուժերին դուրս բերելու Ղազախստանը նրանց ազդեցության ոլորտից: Վարկածները բազմաթիվ են, և դրանցից յուրաքանչյուրն ունի իր փաստարկներն ու հիմնավորումները:

Լինելով անկախ Ղազախստանի կերտման ճարտարապետ Ն. Նազարբաևի հավատարիմ գաղափարակիցը և աշխատելով նրա հետ անկախության առաջին օրերից՝ Տոկաևը (ի դեպ, երկուսն էլ պաշտպանում են ավագ ժուզին) քաջատեղյակ է այն բոլոր գործընթացներին, որոնք տեղի են ունեցել Ղազախստանում, ճանաչում է քաղաքական, տնտեսական և ուժային բարձրագույն էլիտայի բոլոր ներկայացուցիչներին, գիտի նրանց ով և ինչ լինելը: Մի խոսքով՝ քաջածանոթ է երկրի ներքին դրությանը: Ինչ վերաբերում է երկրի արտաքին հարաբերություններին նրա տեղեկացվածությանը, ապա բավական է ասել, որ, լինելով խորհրդային դիվանագետ, անկախացումից հետո նա իր կարիերան սկսել է որպես Ղազախստանի փոխարտգործնախարար 1992 թ., 1994 թ. նշանակվել է նախարար, 2011 թ.՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ: 2001 թ. ստացել է քաղաքական գիտությունների դոկտորի կոչում:

Փորձենք ինքներս գտնել մեզ հուզող հարցերի պատասխանները: Դրա համար վերադառնանք ղազախ ժողովրդի հայր հռչակված Ն. Նազարբաևին, որը, ինչպես վերը նշեցինք, կերտել է Ղազախստանի Հանրապետությունը:

ԽՍՀՄ փլուզումից հետո Ղազախստանի Խորհրդային Հանրապետության ղեկավար Նուրսուլթան Նազարբաևը դարձավ հսկայական տարածքով՝ 2,7 մլն ք/կմ, 17 մլն բնակչությամբ, օգտակար հանածոների պաշարներով հարուստ անկախ պետության նախագահ: Սակայն 12 հազար կմ երկարությամբ պետական սահմաններով, հարուստ պաշարներով պետության տարածքը, անկախությունն ու ինքնիշխանությունը պետք էր պաշտպանել հարևաններից և մանավանդ խոշոր տերություններից՝ Ռուսաստանից, Չինաստանից և ԱՄՆ-ից:

Ղազախները կազմում էին իրենց նորանկախ պետության բնակչության 47-49 տոկոսը միայն: Բացի այդ՝ ռուսները (1970-ական թթ. նրանք թվաքանակով գերազանցում էին ղազախներին), ուկրաինացիները, գերմանացիները, հրեաները առավել կրթված, հմուտ ու բանիմաց մասնագետներ էին և ապահովում էին կադրային կազմը բոլոր բնագավառներում, զբաղեցնում բարձր պաշտոններ: Այս ազգերի ներկայացուցիչներն էին հիմնականում կառուցել ու ղեկավարում սոցիալիստական Ղազախստանը: Անկախանալու պահին բնակչության ընդամենը կեսը կազմող ղազախները պետք է վերցնեին նրանց ձեռքից այդ պետականությունը և տիրեին դրան: Ղազախական էլիտան մտադիր չէր նրանց հետ կիսել երկրի իշխանությունն ու հարստությունը: Իսկ դրան հասնելու միակ ճանապարհը ազգային գաղափարն էր: Սակայն ղազախ ժողովուրդը կազմված էր երեք

Խժդժություն Ալմա-Աթիում

տարբեր ժուզերից՝ հորդաներից, որոնք մինչև 20-րդ դարի սկզբները տարբեր ծագում, ավանդույթներ և մտածելակերպ ունեցող քոչվոր ցեղախմբեր էին: Նրանցից մեկն իր ծագումը կապում էր Չինգիզ խանի մոնղոլների, մյուսը՝ թուրքերի, իսկ երրորդը՝ արաբների հետ: Այդ հորդաները տարբերվում էին նաև իրենց գործառույթներով. մեկը իշխում էր, մյուսը անասուն էր արածեցնում, իսկ երրորդը զինվորական էր: Ի դեպ, «ղազախ» ինքնանվանումը նշանակում է «քոչվոր»: Միավորել այդ հորդաների ժառանգներին մեկ ազգային գաղափարախոսությամբ, նույնականացնել որպես ժողովուրդ, մեղմ ասած, դժվար էր: Ռուսաստանի կայսրությունում նրանց ղրղզներ էին անվանում, իսկ 1920-ական թթ. այդ տարածքում ձևավորվեց ղրղզական խորհրդային ինքնավար հանրապետություն՝ ներառված Խորհրդային Ռուսաստանի կազմում: Եվ միայն 1936 թ. ձևավորվեց Ղազախստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը ԽՍՀՄ կազմում: Նշենք նաև, որ դեռ 16-րդ դարից ընթացող պայքարն այդ երեք ժուզերի՝ հորդաների միջև երբեք չի դադարել: Նույնիսկ խորհրդային տարիներին ստիպված էին հաշվի առնել նրանցից յուրաքանչյուրի շահերը:

Այս հպանցիկ պատմական էքսկուրսը նրա համար էր, որ հասկանալի դառնա Ն. Նազարբաևի և նրա գործընկերների, այդ թվում՝ Տոկաևի առաջ ծառացած խնդիրները ճակատագրի բերումով, ճիշտ կլինի ասել, հասարակական-սոցիալական փորձարարությունների մեծ սիրահարներ բոլշևիկների կամքով ստեղծված այդ հսկա պետության պահպանման ու զարգացման գործում:

Նախ և առաջ պետք էր կարգավորել հարաբերությունները երեք հորդաների միջև, որոնցից ամեն մեկն իր բաժինն էր պահանջում, հավասարակշռել նրանց շահերը: Պետք էր բաժանել ազգային սեփականությունը և երկրի կառավարման լծակները նրանց միջև այնպես, որ ոչ միայն բավարարեին նրանց ցեղային ինքնասիրությունը, այլև ներգրավեին նրանց միասնական պետականության կառուցման գործընթացում, ինչպես ասում էր Նազարբաևը,

անհրաժեշտ էր «ինտեգրել էթնոսոցիալական խմբերը համաղազախստանյան սոցիումի մեջ», ասել կուզե՝ ազգ ձևավորել:

Այս գործընթացը հանգեցրեց ղեկավարության կողմից որոշակիորեն խրախուսվող ազգայնական տրամադրությունների, այլազգի քաղաքացիների նկատմամբ անհանդուրժողականության մեծացման, ինչի հետևանքով հարյուրհազարավոր ռուսներ, գերմանացիներ և այլք արտագաղթեցին երկրից: Ղազախ բնակչության տոկոսային հարաբերակցությունը սկսեց աճել: Բայց այդ արտագաղթի հետևանքով երկիրը զրկվեց որակյալ կադրերից: Նավթի ու գազի արդյունահանման, տնտեսության զարգացման համար մասնագետներ էին պետք: Եվ 1993 թվականից Նազարբաևը հարյուրավոր երիտասարդների, մրցութային կարգով, պետության հաշվին ուղարկում է արտասահման՝ սովորելու, և իր կառավարման ընթացքում հասցնում 15 հազար մասնագետներ պատրաստել: Այդ երիտասարդները, մեծ ասամբ կրթություն ստանալով արևմտյան համալսարաններում, վերադառնում էին ոչ միայն մասնագիտական գիտելիքներով, այլև գաղափարաքաղաքական նոր հայացքներով և հավակնություններով: Նրանք համալրեցին հիմնականում ազգայնականների շարքերը, լավ տիրապետում են օտար լեզուների, բայց չեն կարող ղազախերենով որևէ մասնագիտական թեմայով որևէ հոդված գրել կամ ելույթ ունենալ: Ղազախերենը այդ հնարավորությունը չի տալիս: Շեքսպիր կամ Էյնշտեյն, Դեկարտ կամ Չերչիլ ղազախերեն չես թարգմանի: «Համաղազախական սոցիում» ձևավորելու համար շատ կարևոր է սեփական լեզվի զարգացումը, առանց որի՝ ազգային ինքնագիտակցություն չես ձևավորի: Խորհրդային տարիներից առ այսօր գիտական, քաղաքական, վարչական, տնտեսվարման լեզուն ռուսերենն է: Փոխարինելով այն անգլերենով՝ այդ հարցը չես լուծի: Պետությունը ջանք ու միջոցներ չի խնայում այս հարցում ևս: Ղազախ գիտնականներին հանձնարարված է եռանդուն աշխատանք տանել այդ ուղղությամբ, ղազախերենով ուսուցումը դարձնել գերակա, կիրիլիկ այբուբենը փոխարինել լատիներենով (ըստ երևույթին՝ թուրքական տարբերակով):

Կարևոր խնդիրներից էր նորանկախ պետության, հասարակության կառավարումը: Խորհրդային համակարգն իր կոշտ վարչարարությամբ փլուզվել էր: Ժողովրդավարական բարեփոխումները, որ արագ ընթանում էին ԽՍՀՄ եվրոպական մասի նախկին հանրապետություններում, չէին ընկալվում դեռևս պահպանվող հորդաների կողմից, օտար էին նրանց ավանդույթներին ու բարքերին: Երեք ժուսերի ներկայացուցիչներից կազմված իշխանական վերնախավում չկար միասնություն և փոխադարձ վստահություն: Հասարակությանը հսկելու և կառավարելու միակ միջոցը ռազմականացված գերատեսչության, այսինքն՝ ոստիկանական ուժեղ համակարգի ստեղծումն էր: Առանց դրա՝ Ղազախստանը, ինչպես և գրեթե նույն խնդիրներն ունեցող միջինասիական մյուս հանրապետությունները, կգլորվեր քաղաքացիական տևական պատերազմի գիրկը: Հունվարյան իրադարձությունները հաստատեցին դա: Չնայած Նազարբաևի կողմից մի շարք ռեֆորմների, սահմանադրական փոփոխությունների իրականացմանը և հասարակության ժողովրդավարացման վեհերոտ փորձերին՝ ոստիկանապետությունը դեռևս մնում է իշխանության միակ հենարանը: Իզուր չէ, որ Ղազախստանը ոստիկանապետության համբավ ունի:

Ինչ վերաբերում է տնտեսական զարգացմանը, ապա կարճ ասենք, որ Նազարբաևի նախագահության ընթացքում Ղազախստանի ՀՆԱ-ն աճել է 15 անգամ, աղքատությունը՝ կրճատվել 10 անգամ, միջին աշխատավարձը կազմել է 600, իսկ թոշակի միջին չափը՝ 220 ԱՄՆ դոլար: Սրանք նախկին խորհրդային հանրապետությունների համար տպավորիչ ցուցանիշներ են: Սակայն եթե այս ցուցանիշները կրկնակի բարձր լինեին, դա չէր նշանակի, թե ամբոխը Նազարբաևին և իշխանություններին չէր մեղադրի կոռուպցիայի ու թալանի մեջ և դուրս չէր գա բողոքի:

Այսպիսով՝ կարող ենք առանձնացնել Ղազախստանի հետևյալ խոցելի բնութագրական կողմերը, որոնք կարող են թիրախ դառնալ ներքին և արտաքին հարձակումների համար.

- հասարակության բաժանվածությունը երեք հիմնական ցեղախմբերի և նրանց միջև մրցակցությունը՝ երկրի սեփականությանը տիրելու և իշխանական համակարգում որոշիչ դիրքեր գրավելու համար,
- հակասությունները իշխող դասակարգի ներսում և դրանք հարթելու քաղաքական և իրավական մեխանիզմների բացակայությունը,
- քաղաքական համակարգի սաղմնային վիճակը և հասարակության կառավարումը հիմնականում ուժային միջոցներով,
- արտաքին հարաբերություններում քաղաքական վերնախավի՝ տարբեր կողմնորոշումներ ունեցող առանձին գործիչների և նրանց հետևող էթնոսոցիալական խմբերի ծայրահեղ անհանդուրժողականությունը «միմյանց նկատմամբ»:

Նշված հանգամանքները վկայում են այն մասին, որ ղազախական պետականության կմախքը պահող հիմնական հանգույցները չափազանց թույլ են, և ներքաղաքական ցնցումներից այն կարող է փլուզվել ու տեղիք տալ արյունալի բախումների: Հունվարյան պետական հեղաշրջման փորձը ցույց տվեց, որ եթե Կ. Տոկաևը այդ հանգույցները չամրացներ ՀԱՊԿ խաղաղապահների օգնությամբ, քաղաքացիական պատերազմն անխուսափելի կլիներ:

Այժմ անդրադառնանք ղազախական իրադարձությունների արտաքին կողմին:

Նազարբաևը, լավ գիտակցելով երկրի առջև ծառացած այս խնդիրներն ու մարտահրավերները, ի սկզբանե հայտարարեց, որ վարելու է բազմավեկտոր արտաքին քաղաքականություն, և դա միակ ճանապարհն է՝ չեզոքացնելու կամ գոնե մեղմելու Ղազախստանում իրենց շահերը հետապնդող խոշոր տերությունների ճնշումը:

Փոքր-ինչ անդրադառնանք այդ քաղաքականության

որոշ յուրահատկությունների: Նազարբաևի բազմավեկտորությունն արևելյան երանգ ունի: Դեռ խորհրդային տարիներից նա լավ հասկացել էր, որ իշխանությունը պահելու, երեք ժուզերի միջև, ինչպես և Կրեմլի հետ հարաբերությունները կարգավորելու համար պետք էր բավարարել նրանցից յուրաքանչյուրի պահանջները: Պարզ ասած՝ նրա սկզբունքը հետևյալն էր՝ ամեն մեկին մի բան տուր, որ չհավակնեն ամբողջին, և որպեսզի քեզ չթելադրեն, ինքդ բաժանիր ու որոշիր խաղի կանոնները: Եվ, որ ամենակարևորն է, այդպիսի վարքագծով կարելի է դառնալ ընդունելի բոլոր կողմերի համար, ապահովել սեփական կարիերան և պահել իշխանությունը: Բազմավեկտորությունը դարձել էր նրա մտածելակերպի առանցքը, նրա՝ որպես քաղաքական գործչի հիմնական հատկանիշը: Նույնիսկ մարդկանց հետ հարաբերություններում նա բազմավեկտոր էր:

Այդպիսին էր նաև Նազարբաևի արտաքին քաղաքականությունը: Այն հավասարակշռում է երկկողմ հարաբերությունները յուրաքանչյուր խոշոր տերության հետ՝ բավարարելով յուրաքանչյուրի սպասելի պահանջներից որևէ մեկը՝ առանց հաշվի առնելու ՂՀ-ի նկատմամբ նրանց հարաբերությունների հավասարակշռությունը: Այսպես, հրապուրելով ռուսներին եվրասիականության գաղափարով, պետք էր հաշվի առնել ԱՄՆ-ի և Չինաստանի տեսակետները դրա վերաբերյալ: Նա ձեռնամուխ եղավ «մետաքսի ճանապարհի» վերականգնման չինական նախագծի իրականացմանը, և դա լարվածություն առաջացրեց ՌԴ-ի և ԱՄՆ-ի հետ հարաբերություններում, որոնք դուրս էին մնում այդ ճանապարհից: Նազարբաևը ոգեշնչվում էր Էրդողանի՝ թուրքական աշխարհի ընդլայնման գաղափարներով, ակտիվ դերակատար էր Թուրքական պետությունների կազմակերպությունում (ԹՊԿ)՝ այդպիսով մտահոգության տեղիք տալով Արևմուտքին ու ռուսներին և զայրացնելով Չինաստանին ու Իրանին: Սակայն Նազարբաևի բազմավեկտորությունը այդ տերությունները հանդուրժում էին և երբեմն նույնիսկ խրախուսում, մինչև պատրաստ կլինեին իրականացնելու իրենց մտադրությունները Կենտրոնական Ասիայում: Նրանք ժամանակ էին շահում: Բայց ԱՄՆ-ի զորքերի՝ Աֆղանստանից դուրս գալուց հետո պարզ դարձավ, որ այդ ժամանակը սպառվել է: «Դրօշակ»-ի 2021 թ. 9-րդ համարում անդրադառնալով այդ իրադարձությանը՝ նշել էինք, որ Միացյալ Նահանգների զորքերի դուրսբերումը ոչ թե փախուստ էր, այլ լավ հաշվարկված մարտավարական քայլ: Դրա նպատակն էր Աֆղանստանը դարձնել իսլամական ահաբեկիչների բազա՝ իրենց իսկ թողած զենք ու զինամթերքի հսկայական պաշարներով, որոնք ցանկացած պահի կարող էին օգտագործվել տարածաշրջանի երկրներում իրավիճակն ապակայունացնելու համար: Իսկ ռազմավարական նպատակն էր Ռուսաստանի շուրջ Բալթիկից մինչև Կասպից ծով ապակայունացման գոտին շարունակել ողջ Կենտրոնական Ասիայով: Այդ գոտին կընդգրկի նաև Չինաստանի արևմուտքը և Իրանի արևելքը: Ուստի կասկած չկա, թե ով էր կանգնած Ղազախստանում հունվարյան իրադարձությունների կազմակերպիչների ետևում: Կասկած չի հարուցում նաև այն, որ ՌԴ-ի և ՉԺՀ-ի համար ռազմաքաղաքական ու տնտեսական առումով բացարձակապես ձեռնտու չէ այդ երկրի ապակայունացումը:

Վերլուծելով ղազախստանյան էլիտայի՝ տարբեր կողմնորոշումներ ունեցող հատվածների վարքագիծը այդ օրերին՝ Կ. Տոկաևը իհարկե պարզել է, թե որտեղից է փչում քամին: Վստահ կարելի է ասել, որ Տոկաևի նման փորձառու քաղաքագետը ոչ միայն պարզել է դա, այլև վաղուց կանխատեսել էր: Այս հարցում կասկածներ չունի նաև թուրքական հետախուզությունը, որի գործակալական լայն ցանցը Ուկրաինայում տեղեկացրեց, որ ղազախական ընդդիմությունը Ուկրաինայում շտաբ է հիմնել և կազմակերպում է իսլամիստական քաղաքական խմբավորումների թափանցումը երկիր հարավից, ակտիվացրել է Արևմուտքի միջոցներով գործող որոշ կառույցների, որոնք Ղազախստանում պետք է կազմակերպեն «գունավոր հեղաշրջում»: Թուրքիան, որը հավակնում էր ԹՊԿ-ի միջոցով իր խաղի կանոնները հաստատելու Կենտրոնական Ասիայում, խաղից դուրս մնաց ու ծանր է տանում ՌԴ-ի և ՀԱՊԿ-ի՝ խաղի մեջ մտնելը: Սակայն Թուրքիան հույս ունի, որ իրավիճակն ամբողջությամբ դեռ չի կարգավորվել, և կարող են նոր բռնկումներ լինել, այդ թվում նաև՝ հարևան թյուրքական հանրապետություններում: Եվ այդ հույսերը անհիմն չեն: Թյուրքական հանրապետությունների սահմաններին կուտակված են «Իսլամական պետության» մոտ 6 հազար գրոհայիններ, օր օրի ծանրանում է դրությունը Տաջիկստանի սահմաններին, մասնավորապես՝ աֆղանստանյան հատվածում: Այսինքն՝ սկսվում է ռազմաքաղաքական շարունակական ճնշումը Ռուսաստանի վրա նաև հարավից: ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարների խորհրդակցության ժամանակ Վ. Պուտինը նշեց, որ իրենք հասկանում են, որ հունվարյան իրադարձությունները Ղազախստանում տակավին վերջին փորձը չեն՝ ապակայունացնելու իրավիճակը տարածաշրջանի երկրներում, և կազմակերպությունը (այսինքն՝ ՌԴ-ն) թույլ չի տա գունավոր հեղափոխություններ իրականացնել իրենց երկրներում: Այս վերջին կոշտ հայտարարությունը նշանակում է, որ նա քաջատեղյակ է, թե ով և ինչ նպատակներով է ապակայունացնում տարածաշրջանը: Իսկ մեզ համար պարզ է դառնում, որ լարվածությունը Կենտրոնական Ասիայում հիմնական խաղացողների միջև գնալով սրվելու է:

Այնպես որ Նազարբաևի հետ ղազախական քաղաքական թատերաբեմից հեռանում է նաև բազմավեկտորությունը: Հիրավի, հունվարյան իրադարձությունները փորձություն էին Կասիմ-Ժոմարտ Տոկաևի համար, ահազանգ, որ եկել է ժամանակը՝ որոշելու, թե բազմաթիվ ուղղություններից որն է ընտրելու Ղազախստանը: Շուտով միջազգային այս կամ այն հարցերի վերաբերյալ նրա հայտարարություններից, քաղաքական շփումներից պարզ կդառնա, թե ուր է գնալու Ղազախստանը:

Պարսից ծոցի երկրների և Եգիպտոսի արտգործնախարարների կարևոր հանդիպումը Էլ-Ռիադում

Սոնա Տոնիկյան
ԵՊՀ արաբագիտության ամբիոնի աշխատակից

Անցյալ տարվա դեկտեմբերին արաբական մամուլը հանգամանալից անդրադարձավ Եգիպտոսի ԱԳ նախարար Սամեհ Շուքրիի այցին Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Էլ-Ռիադ: Ժամանումից կարճ ժամանակ անց նա հանդիպեց Պարսից ծոցի համագործակցության խորհրդի իր գործընկերներին և առաջին անգամ մասնակցեց խորհրդի նիստին: Այս մասին մամուլի հաղորդագրությունների մեծ մասը նմանատիպ վերնագրեր ուներ. «Եգիպտոսի ԱԳ նախարարի այցը Սաուդյան Արաբիա ուղղված է Ծոցի համագործակցության խորհրդի երկրների հետ գործողությունների համակարգմանը և խորհրդակցությունների անցկացման մեխանիզմի գործարկմանը»: Ինչո՞վ էր կարևոր այդ այցը: 2017 թվականին որոշ արաբական երկրներ՝ Եգիպտոսի գլխավորությամբ, խզեցին հարաբերությունները Կատարի հետ՝ վերջինիս մեղադրելով ահաբեկչությունը սատարելու մեջ: Անցյալ տարվա հունվարին Պարսից ծոցի արաբական երկրները կարգավորեցին իրենց հակամարտությունը Կատարի հետ և խորհրդի գագաթնաժողովի ժամանակ հաշտություն կնքեցին: Եգիպտոսի ԱԳ նախարարի մասնակցությամբ սկիզբ դրվեց նաև Եգիպտոսի և Կատարի հարաբերությունները բնականոն ընթացքի վերադարձնելու գործընթացին: Կարևոր էր նաև այն փաստը, որ այս հանդիպմանը մասնակից երկրները հանդես եկան տարածաշրջանում իրենց դերը մեծացնելու և օտար պետությունների, գլխավորապես Իրանի և Թուրքիայի միջամտություններին դիմակայելու վճռականությամբ: Եգիպտոսի արտգործնախարար Սամեհ Շուքրին առաջին անգամ էր մասնակցում Եգիպտոսի և Պարսից ծոցի համագործակցության խորհրդի երկրների քաղաքական խորհրդակցությունների մեխանիզմի գործարկմանը նվիրված հանդիպմանը՝ Պարսից ծոցի համագործակցության խորհրդի երկրների իր գործընկերների և խորհրդի գլխավոր քարտուղարի մասնակցությամբ:

Ծոցի համագործակցության երկրների և Եգիպտոսի արտգործնախարարների մամլո ասուլիսը

Պարսից ծոցի համագործակցության խորհրդի երկրների արտգործնախարարները 2021 թ. դեկտեմբերի 12-ին Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Էլ-Ռիադում՝ Գլխավոր քարտուղարության կենտրոնակայանում, անցկացրին խորհրդի 150-րդ նախապատրաստական նստաշրջանը, որը նվիրված էր Պարսից ծոցի 42-րդ գագաթնաժողովի կազմակերպական խնդիրներին: Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդում, որը ստեղծվել է 1981 թվականին, ընդգրկված է 6 երկիր (Կատար, Սաուդյան Արաբիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Բահրեյն, Քուվեյթ և Օմանի Սուլթանություն):

Եգիպտոսի արտգործնախարար Սամեհ Շուքրիի մասնակցությունը նպատակաուղղված էր Եգիպտոսի և Պարսից ծոցի երկրների միջև քաղաքական խորհրդակցությունների մեխանիզմի գործարկմանը, որի միջոցով Եգիպտոսը փորձում էր ավելի արագ վերականգնել արաբա-եգիպտական դերակատարությունը տարածաշրջանում՝ ի համեմատ նախորդ շրջանի, և էլ ավելի ամրապնդել Եգիպտոսի և Պարսից ծոցի երկրների միջև հարաբերությունները արաբական տարածագոտու անվտանգությանն առնչվող մի շարք ոլորտներում: Հանդիպմանը քննարկվել են Պարսից ծոցի համագործակցության խորհրդի և Եգիպտոսի միջև հարաբերությունները, տարբեր ոլորտներում փոխգործակցության և դրա ընդլայնման ուղիները, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային հարթակներում զարգացումներն ու ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Քննարկվել են նաև արաբական երկրների գործերին

օտար երկրների միջամտությունների և դրանցից զգալիորեն ձերբազատվելու խնդիրները: Խոսվել է հատկապես մերձավորարևելյան տարածաշրջանում Իրանի և Թուրքիայի միջամտությունների մասին:

Հանդիպմանը հաջորդած մամուլի ասուլիսի ժամանակ Շուքրին հույս է հայտնել, որ խորհրդատվական շրջանակը կնպաստի տարածաշրջանում կայունության ամրապնդմանը՝ նշելով, որ այն կունենա մեխանիզմներ՝ նախարարների և բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով պարբերաբար խորհրդակցություններ անցկացնելու և հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերը քննարկելու համար: Սամեհ Շուքրին ընդգծել է համակարգման ակտիվացման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով տարածաշրջանում աննախադեպ մարտահրավերները:

Իր հերթին Սաուդյան Արաբիայի արտգործնախարար Ֆեյսալ բին Ֆարհանը նույն ասուլիսի ժամանակ ասել է, որ Պարսից ծոցի երկրների և Եգիպտոսի միջև համակարգումը նորություն չէ, շարունակական բնույթ է կրում և մեծ կարևորություն ունի, իսկ մեխանիզմի գործարկումը ընդամենը եղածի ինստիտուցիոնալացումն է:

Մյուս կողմից՝ Եգիպտոսի արտգործնախարար Սամեհ Շուքրին ձգտում էր ցույց տալու, որ իր հանդիպումը Պարսից ծոցի համագործակցության խորհրդի արտաքին գործերի նախարարների հետ ընդգծում էր Եգիպտոսի ջրային շահերի պահպանման անհրաժեշտությունը և Նահդայի ամբարտակի

Եգիպտոսի արտգործնախարար Սամեհ Շուքրին

հիմնախնդրի կարևորությունը Եգիպտոսի համար: Սաուդյան Արաբիային պատկանող «MBC Egypt» հեռուստալիքով Ամր Ադիբի ներկայացրած «Ալ-Հիքայա» ծրագրին տված հեռախոսազրույցի ժամանակ Շուքրին ասել է, որ հանդիպման ընթացքում քննարկվել են նաև զարգացումները Եթովպիայում և իրավիճակը Սուդանում՝ ի լրումն Եմենում, Աֆղանստանում, Լիբիայում և Սիրիայում ընթացող զարգացումների: Քննարկվել են նաև կայունության ամրապնդման, տնտեսական համագործակցության ընդլայնման և ահաբեկչությանը դիմակայելու ուղիները: ■

Հայկական ռազմական ուժի պատմությունից (մաս 2)

Անի Մելքոնյան
Պատմաբան

Արշակունյաց դինաստիայի թագավորության շրջանում հայոց կանոնավոր բանակի թիվը մոտավորապես 100-120.000 էր՝ հետևակ և հեծելազոր: Հայոց թագավորը և նախարարները որոշակի թվով մշտական հեծելազոր էին պահում, որոնք միավորվելով կազմում էին հայոց այրուձին, իսկ ամբողջական բանակը հավաքվում էր ըստ անհրաժեշտության: Թագավորի հեծելազորը տեղակայվում էր Հայոց աշխարհի ռազմավարական կարևոր կետերում, մասնավորապես՝ Ուստան Հայոց և Բանակ արքունի կոչվող վայրերում: Արքայական ուստանի պաշտպանությունն իրականացնում էր արքունիքին կից հատուկ հեծյալ ջոկատներից կազմված ուստանիկ այրուձին, իսկ թագավորի անձի պաշտպանությունը՝ ընտրյալ նետաձիգներից բաղկացած և մշտապես արքունիքում գտնվող մաղխազական այրուձին: Զորանամակում նշված նախարարական տների հեծելազորի ընդհանուր թիվը կազմում էր 55.000, իսկ երբեմն հասնում էր 85.000-ի: Ըստ իրենց զորքերի քանակի՝ ավագ նախարարները համարվում էին բյուրավորներ (Սյունյաց և այլք), այսինքն՝ 10.000-ից ավելի զինվորներ ունեցողներ, և հազարավորներ (Գուգարաց, Աղձնյաց, Բզնունյաց, Բագրատունի, Խորխոռունի և այլք), այսինքն՝ 1.000-9.000 հեծյալներ ունեցողներ: Ավելի քիչ հեծյալներ ունեցողները հարյուրավորները, հիսնավորները (Տայգրյան, Սոդացի, Պատսպարունի և այլք) և տասնավորներն էին: Հայկական բանակի հիմնական սպառազինությունը կազմում էին նետ ու աղեղը, նիզակը, վահանը, պարսատիկը, տեգը, սակրը, կարևոր նշանակություն ունեին քարանետ և պարսպակործան մեքենաները: Հայկական բանակի կազմում կային նաև հետախուզական զորամասեր:

Արշակունյաց թագավորության անկումից հետո իր ինքնության պահպանման առաջին լուրջ կռիվը հայ ժողովուրդը մղեց 451 թ. մայիսի 26-ին Ավարայրի դաշտում: Իհարկե, ռազմական հաղթանակ հայությունը չտարավ. շատերն այն անվանեցին «բարոյական հաղթանակ», շատերը՝ պարտություն: Ոմանց համար Վարդանանց պատերազմը լոկ կրոնական պատերազմ էր, շատերն էլ այն համարում են ինքնության կռիվ: Վարդանանց պատերազմի մասին կարելի է անվերջ խոսել, նշենք միայն, որ դարեր շարունակ Վարդանի ու Վարդանանց կերպարները հայ ժողովրդի համար հերոսականության խորհրդանիշ են եղել, իսկ Վարդանանց նշանաբանը՝ «մահ իմացյալ անմահություն է»՝ յուրահատուկ պատգամ իր ազատության համար պայքար մղող հայ ժողովրդին:

Թագավորությունը կորցրած Հայաստանում վարդանանց ապստամբությունը վերջինը չէր. 481 թ. բռնկվեց մի նոր ապստամբություն, որը Վահան Մամիկոնյանի անունով հայտնի է որպես Վահանանց ապստամբություն: 481 թ. Արևելյան Հայաստանում

կազմվում է կառավարություն. Սահակ Բագրատունին նշանակվում է մարզպան, Վահան Մամիկոնյանը՝ սպարապետ, Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսը՝ մեծ դատավոր: Պարսից մարզպան Ատրվշնասպի՝ Հայաստան ներխուժման լուրը ստանալով՝ հայ ապստամբները պատրաստվում են դիմադրության: Հայ զորականները, հասնելով Վարազակերտ գյուղ, տեղեկանում են, որ պարսից 7.000-անոց զորքն անցել է Արաքս գետը: Հայ զորականների՝ 400 հոգուց բաղկացած զունդը բանակում է Արարատի լանջին՝ Մասյացոտն գավառի Ակոռի գյուղի մոտ: 481 թ. տեղի ունեցած Ակոռիի ճակատամարտում պարսից ուժերը ջախջախվում են, Ատրվշնասպը սպանվում է:

Պարսից արքունիքը նոր բազմաքանակ զորք է ուղարկում, որը 482 թ. մայիսին հասնում է Հեր և Զարևանդ գավառների սահմանը: Վահան Մամիկոնյանի գլխավորած հայոց զորքը շտապում է Արտազ գավառ: Ավարայրի դաշտի մոտակայքում՝ Ներսեհապատ գյուղի մոտ, տեղի է ունենում նոր ճակատամարտ, որն ավարտվում է հայերի հաղթանակով:

481-484 թթ. հայոց զորքը փաստացի կարողացավ իր պայմանները թելադրել պարսից արքունիքին, ինչը հանգեցրեց հայերի առաջ քաշած պայմաններով Նվարսակի հաշտության պայմանագրի կնքմանը:

5-րդ դարի 80-ական թթ. հայոց զինական ուժի ապստամբության շնորհիվ Մեծ Հայքի Արցախ և Ուտիք ու հարակից նահանգներում հիմնվեց հայկական թագավորություն, որտեղ 484 թ. գահ է բարձրանում Հայկազուն-Սիսակյան Առանի՝ Առնշահիկների տոհմից սերող Վաչագան Բարեպաշտը:

5-6-րդ դարերում թե՛ բյուզանդական, թե՛ պարսկական տիրապետության դեմ տեղի ունեցան

մի շարք ապստամբություններ: 7-րդ դարում Հայաստանն անցավ Արաբական խալիֆայության տիրապետության տակ, սակայն նոր նվաճողների դեմ ևս հայոց զինական ուժը շարունակ ապստամբում էր: Հայ ժողովուրդը 8-9-րդ դարերում ապստամբեց արաբական լծի դեմ: Այս շրջանում իրենց ռազմական ուժը պահպանած հայ նախարարական տները՝ Սյունիները, Բագրատունիները, Մամիկոնյանները և Արծրունիները, կանգնած էին ապստամբությունների ղեկավար դիրքերում: Այդ օրերին կազմավորված Արմինիա փոխարքայության առաջին արաբ ոստիկանի դաժան հարկահանությանն ու կրոնական հալածանքներին հայերը պատասխանեցին ապստամ-բությամբ, որը գլխավորում էր իշխան Սմբատ Բագրատունին: Ճակատամարտը տեղի է ունենում 703 թ. հունվարին Վարդանակերտ ավանում: Լուսաբացին ապստամբները գրոհում են թշնամու զորքի վրա, որը, սարսափելի սառնամանիքին գիշերելով բաց երկնքի տակ, կորցրել էր մարտունակությունը: Ձախջախված արաբների փախուստի պահին սառույցը կոտրվում է, և նրանցից շատերը խեղդվում են Երասխի ջրերում:

Հայերը արաբների դեմ ապստամբում են նաև 748 թ. Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանների գլխավորությամբ: Ապստամբությունն արձագանք է գտնում նաև Սասնո աշխարհում՝ Խութում, որտեղ ապստամբությունը ղեկավարում էր Հովհանը, որի գլխավորությամբ քաջարի սասունցիները սպանում են այնտեղ նշանակված արաբ կառավարչին: Խալիֆայությունը ստիպված էր Հովհանին նշանակել «Լեռան» կառավարիչ: Դրանով իսկ Սասուն գավառը, որ մինչ այդ մտցվել էր Ջազիրա նահանգի կազմի մեջ, միանում է Արմինիային՝ անցնելով հայոց իշխանի իրավասության ներքո: Խալիֆայության դեմ հերթական անգամ հայկական ռազմական ուժերն ապստամբեցին 774-775 թթ. Շիրակի Կումայրի գյուղից՝ Արտավազդ Մամիկոնյանի գլխավորությամբ: Հայ ռազմիկները Շիրակում հարձակվում են արաբ գլխավոր հարկահանի վրա, խլում հավաքված ամբողջ հարկը: Փոքր-ինչ ուշ ապստամբության ղեկավարությունն անցնում է Մուշեղ Մամիկոնյանին, որի ղեկավարած ռազմական ուժերը ջախջախում են Տարոն ներխուժած արաբներին: Հայկական ջոկատները Բագավան գյուղի մոտ ջախջախում են Դվինի 4.000-անոց արաբական կայազորին: Հայ ապստամբական ուժերի թիվն աստիճանաբար մեծանում հասնում է 5.000-ի:

Արաբական խալիֆայության դեմ հայերի առավել հուժկու ապստամբությունը տեղի ունեցավ 850-855 թթ.: 850 թ. հայկական զորքերը Բագարատ Բագրատունու և Աշոտ Արծրունու ղեկավարությամբ արաբներին դուրս քշեցին Տարոնից, արաբական մի ուրիշ զորախումբ էլ ջախջախվեց Վասպուրականում: 851 թ. սասունցի զորականները Հովսան Խութեցու և դավադրաբար ձերբակալված Բագարատ Բագրատունու որդիների՝ Աշոտի ու Դավիթի գլխավորությամբ Տարոնում ոչնչացրին զավթիչներին: Յուսուֆը փորձեց թաքնվել Ս. Փրկիչ եկեղեցու գմբեթում, սակայն ապստամբները

գտան նրան և մահապատժի ենթարկեցին:

852 թ. խալիֆը հայ ապստամբների դեմ ուղարկում է իր դաժանությամբ հայտնի թյուրք վարձկան զորավար Բուղային: Թշնամին ասպատակում է Բաղեշը, Խութը և Սասունը: Ձերբակալված Աշոտ Արծրունու եղբայր Գուրգեն Արծրունին 852 թ. «Արյան լճի» ափին 900 ռազմիկներով պարտության է մատնում Բուղայի 15.000-անոց զորքին: Պարտված թշնամին խուճապահար փախչում է Վասպուրականից: 853 թ. Բուղան ներխուժում է Արցախ և մի շարք խայտառակ պարտություններ կրում Արցախում: Արցախցի հայոց իշխան Եսայի Աբու-Մուսեի քաջարի մարտիկները Տող գյուղի մոտ գտնվող Քթիշ ամրոցը մոտ մեկ տարի անառիկ են պահում: Արցախում ու Վասպուրականում կրած շարունակական պարտություններից հետո 855 թ. խալիֆը վերջնականապես խայտառակված Բուղային Հայաստանից ետ է կանչում:

Բագրատունիների գլխավորությամբ հայ ռազ-միկների ու նախարարական տների պայքարը ի վերջո հանգեցրեց Հայաստանի անկախության վերականգնմանը և 885 թ. Բագրատունյաց թագավորության հռչակմանը: Արտաշեսյան և Արշակունյաց թագավորությունների ավանդույթներին հետևելով՝ Բագրատունի արքաները հատուկ ուշադրություն էին դարձնում բանակին. «Աշոտ I-ի օրոք հայկական բանակի թիվը 40 000 էր, իսկ նրա հաջորդ Սմբատ I-ի ժամանակ հասավ 60 000-ի: Աշոտ III Ողորմածի օրոք զորքի թիվը հասավ 80 000-ի, իսկ Գագիկ I-ի օրոք՝ 100 000-ի: Բագրատունյաց բանակը կազմված էր արքունական և մարզպանական գնդերից»[1]

Բագրատունյաց թագավորության անկումից (1045 թ.) հետո Հայաստանում իրենց տիրապետությունը

հաստատած բյուզանդացիները ցուցաբերեցին հանցավոր անհեռատեսություն և 1065 թ. ցրեցին հայկական բանակը, ինչը ողբերգական եղավ ոչ միայն Հայաստանի, այլև հենց ի՛ր՝ Բյուզանդիայի համար: Քիչ թե շատ պահպանված իշխանական զորագնդերի շնորհիվ հայկական պետականությունը գոյատևեց մինչև մոնղոլական արշավանքները: Մոնղոլներն աստիճանաբար վերացրին հայ նախարարական տները՝ հայ ազնվականությանը, որից հետո սկսվեց շուրջ 600 տարի ձգված՝ հայ ժողովրդի պատմության ամենածանր՝ ստրկական շրջանը:

Հայկական ռազմական ուժի պատմության մի նոր շրջան սկսվեց 19-րդ դարի երկրորդ կեսին՝ ազգային-ազատագրական զինյալ պայքարի փուլով, որն առաջնորդող քաղաքական կուսակցությունները կազմավորեցին կամավորական ջոկատներ, որոնք, կանոնավոր բանակ չլինելով հանդերձ, կարողացան որոշ չափով զսպել թուրք և քուրդ կեղեքիչներին: Ազգային-ազատագրական պայքարի առավել հերոսական էջերից են Սարգիս Կուկունյանի խմբի 1890 թ. արշավանքը, Սասունի 1894 թ. ապստամբությունը, Վանի 1896 թ. հերոսական պաշտպանությունը: Ծավալներով և հաջողությամբ առանձնահատուկ էր 1897 թ. հուլիսի 25-ին Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) գլխավորությամբ տեղի ունեցած Խանասորի արշավանքը: Արշավանքը նախաձեռնողն ու իրականացնողը «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունն էր: Թուրքական իշխանությունների ձեռքին գործիք դարձած մազրիկ ցեղին պատժելու գործողությունը հաղթականորեն ավարտվում է հուլիսի 25-ին:

Հայ ռազմիկներն աչքի ընկան նաև 1904 թ. Սասունի ապստամբության, 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ:

Հայկական ռազմական ուժը իրեն փայլուն դրսևորեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թե՛ Կովկասյան ռազմաճակատում՝ ռուսական բանակի կազմում մասնակցելով ռազմական գործողություններին, և թե՛ Արևմտյան Հայաստանում՝ ցեղասպանության ողբերգական օրերին Վանում, Տարոն-Սասունում, Գարահիսարում, Մուսա լեռան վրա ու Եդեսիայում կազմակերպելով ինքնապաշտպանություն: Առաջին աշխարհամարտի հենց սկզբում ՀՅԴ-ն ձեռնամուխ եղավ հայկական կամավորական ջոկատների կազմավորմանը. նպատակը իհարկե մեկն էր՝ ռուսական բանակի կազմում մասնակցել Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: «Սկզբնական շրջանում կազմակերպվեցին կամավորական չորս՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ ջոկատները, որոնց հրամանատարներն էին Անդրանիկը (Օզանյան), Դրոն, Համազասպը (Սրվանձտյան), Քեռին (Արշակ Գավաֆյան): Ավելի ուշ ստեղծվեցին 5-րդ (հրամանատար՝ Վարդան (Մեհրաբյան)), 6-րդ հնչակյան (հրամանատար՝ Գրիգոր Ավշարյան, որի զոհվելուց հետո 1915 թ. նրան փոխարինեց Հայկ Բժշկյանը) և 7-րդ (հրամանատար՝ Հովսեփ Արղության) կամավորական ջոկատները: Կամավորների ընդհանուր թիվը հասնում էր 6.000-ի, որի մեջ կային նաև կանայք: Հայ կամավորական ջոկատները գործում էին ռուսական զինվորական հրամանատարության ներքո»[2]: Հայկական կամավորական ամենամեծ ջոկատը 1-ինն էր՝ 1.200 հոգուց բաղկացած, Անդրանիկի հրամանատարությամբ: Այս ջոկատը «Անդրանիկի գլխավորությամբ 1915 թ. ապրիլի 2-ին Սալմաստ գավառի կենտրոն Դիլման քաղաքի մատույցներում ջախջախիչ պարտության մատնեց Խալիլ բեյի (վերջինս Էնվերի հորեղբայրն էր, 1918 թ. Բաքվի հայության կոտորածի կազմակերպիչներից) հրամանատարությամբ՝ թվական մի քանի անգամ գերակշռություն ունեցող թուրքական 3-րդ դիվիզիային: Այս ճակատամարտը բեկում մտցրեց թուրքական զորքերի առաջխաղացման մեջ, քանի որ Դիլմանի ճակատամարտում թուրքերի կրած պարտությամբ ձախողվեցին Անդրկովկաս ներխուժելու և Իրանն ու Աֆղանստանը Անտանտի դեմ հանելու գերմանա-թուրքական ռազմաքաղաքական պլանները: Բացի այդ, կասեցվեց Վանի վրա գրոհող Ջևդեթ-բեյի զորամասին օգնություն հասցնելու հնարավորությունը: 1915 թ. մայիսի 17-ին Վարդանի Արարատյան գունդը՝ կազմված 2-րդ, 3-րդ և 4-րդ կամավորական ջոկատներից, մտավ Վան: Հայ կամավորականները համառ մարտեր մղելով առաջացան դեպի Մուշ և Բիթլիս: Մարտերի թեժ պահին՝ 1915 թ. հուլիսին, Կովկասյան բանակի շտաբից նահանջի հրաման ստացվեց: Հայ կամավորականները կազմակերպեցին այդ տարածքների մազապուրծ 200.000 հայերի էվակուացիան՝ նրանց ուղեկցելով մինչև ռուս-թուրքական սահմանը: Սակայն շուտով ռուսական Կովկասյան բանակը նորից անցավ հարձակման, որին մասնակցեցին հայ կամավորական ջոկատները:

Անդրանիկի ջոկատը, ռուսական 4-րդ կորպուսի կազմում, 1916 թ. հունվարի սկզբներին Վանից շարժվելով Մուշի, Բիթլիսի ուղղությամբ, համառ, արյունահեղ մարտեր մղեց թշնամու գերազանցող ուժերի դեմ և մասնակցեց բազմաթիվ հայկական գյուղերի, քաղաքների ազատագրմանը: Անգամ սաստիկ սառնամանիքը չխանգարեց ազատագրել Բիթլիսը, ինչը ռուսական հրամկազմը անհնարին էր համարում: 1915-1916 թթ. հայ կամավորականների անմիջական մասնակցությամբ ռուսական Կովկասյան բանակն ազատագրեց հայաթափված Արևմտյան Հայաստանի մեծ մասը՝ Վան, Բիթլիս, Բաբերդ, Երզնկա, Էրզրում»[3]:

Հայկական կամավորական ջոկատներն աչքի ընկան իրենց մարտիկների բացառիկ խիզախությամբ. «Կատարելով առաջապահ, հետախուզական և պահակազորային ծառայություններ՝ հայ կամավորականներն ակտիվ մասնակցություն ունեցան Սարիղամիշի, Էրզրումի, Դիլմանի, Ռևանդուզի և այլ ճակատամարտերին, Բերկրի-Կալայի, Վանի, Խնուսի, Բիթլիսի և Էրզրումի ազատագրմանը: Նրանք մեծ դեր կատարեցին նաև արևմտահայ գաղթականության կյանքը փրկելու և ազատագրված տարածքներում

վերաշինության գործում: Հայ կամավորներից շատերը մարտի դաշտում ցուցաբերած արիության համար պարգևատրվեցին մարտական շքանշաններով և մեդալներով: Օրինակ՝ միայն 2-րդ կամավորական խմբի անձնակազմից (հրամանատար՝ Դրո) 1914-1916 թթ. Գեորգիևյան խաչով պարգևատրվել են 76 կամավորական, որից երկուսն՝ առաջին աստիճանի: Ռազմի դաշտում զոհվեց ավելի քան 700 կամավորական»[4]:

1917 թ. հոկտեմբերի 25-ին բոլշևիկները Պետրոգրադում իրականացրին պետական հեղաշրջում և գրավեցին իշխանությունը: Դրա հետևանքով առանց այդ էլ Ռուսաստանից կտրված Այսրկովկասը հայտնվեց անիշխանության ճիրաններում: Իրավիճակն ավելի բարդացավ Երզնկայի 1917 թ. դեկտեմբերի 5-ի զինադադարից հետո, երբ արագացավ ռազմաճակատի քայքայումը: Ռուսական զորքերը հեռացան ճակատից, և մի քանի հարյուր կիլոմետրանոց ռազմաճակատի պաշտպանությունն ընկավ հայկական փոքրաթիվ ուժերի վրա: Այս պայմաններում, դեռևս 1917 թ. նոյեմբերի 19-ի հրամանով, նոր կազմավորված Հայկական կորպուսի հրամանատար էր նշանակվել գեներալ Թ. Նազարբեկյանը: Կորպուսի կոմիսարն էր Դրոն, իսկ առաջին դիվիզիայի հրամանատարը՝ գեներալ Մ. Սիլիկյանը: Հայկական կամավորական ջոկատները փաստորեն միավորվեցին մեկ կորպուսի մեջ, բայց դրանց կազմում հայ մարտիկների ձեռք բերած փորձը «հետագայում, մանավանդ Հայաստանի անկախության շրջանում, մեծ չափով օգտակար եղավ հայ ժողովրդի և հանրապետության պաշտպանության գործում»[5]:

1918 թ. հունվարի 28-ին, խախտելով Երզնկայի զինադադարը, թուրքական 5.000-անոց բանակը՝ Մեհմեդ Վեհիբ փաշայի հրամանատարությամբ, հարձակման անցավ և, զարգացնելով հաջողությունը, հասավ Էրզրում (Կարին), որտեղ ինքնապաշտպանության ղեկավար էր նշանակվել զորավար Անդրանիկը: Վերջինիս չհաջողվեց կազմակերպել Էրզրումի ինքնապաշտպանությունը: Փետրվարի 27-ին զորքն ու ժողովուրդը նահանջեցին՝ մարտի 2-ին հասնելով Սարիղամիշ: 1918 թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ միության երկրների միջև կնքվում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որով Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային է զիջում Արևմտյան Հայաստանը, Կարսը, Արդահանը և Բաթումը: 1918 թ. մարտի 24-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշը, ինչը նշանակում էր, որ թշնամին մոտենում է Երևանին: Երևանում խուճապ էր: Ինչ էր մնում անել Երևանում գտնվող ղեկավար գործիչներին՝ Արամին, Դրոյին ու Մ. Սիլիկյանին, եթե ոչ պատրաստվել ինքնապաշտպանության և թշնամուն դիմավորել Սարդարապատում, Բաշ-Ապարանում ու Ղարաքիլիսայում: Այս իրադարձությունների մասին, իհարկե, շատ ենք խոսել և թեմայի վրա շատ կանգ չառնելու համար նշենք միայն, որ ճիշտ ղեկավարման շնորհիվ հայկական փոքրաթիվ բանակը հաղթանակ տարավ իրեն թվապես գերազանցող թուրքական զորքի նկատմամբ: 1918 թ. մայիսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում հայությունը սեփական ուժերով դիմադրեց իրեն ռազմապես գերազանցող թուրքական բանակին և հաղթանակ տարավ: Արամի, Դրոյի ու Սիլիկյանի շնորհիվ հայերը կարողացան «….զենքը ձեռքներին պահպանել փոքրիկ հողակտորը՝ միակ քաղաք Երևանը և Սուրբ Էջմիածնի եկեղեցին….»[6]:

Մայիսյան հերոսամարտերը բացառիկ նշանակություն ունեցան հայության համար: Դրանք ոչ միայն վերջինիս փրկեցին բնաջնջումից, այլև հնարավոր դարձրին Հայաստանի անկախության վերականգնումը՝ ծնունդ տալով Հայաստանի առաջին հանրապետությանը:

Հայաստանի առաջին հանրապետության բանակը փաստորեն պետք է կազմավորվեր արդեն գոյություն ունեցող զորամասերի հիմքի վրա: Հայաստանի ռազմական նախարարության կազմավորումը սկսվել է դեռևս 1918 թ. հունիսի կեսերից, իսկ նույն թվականի հուլիսին ՀՀ առաջին ռազմական նախարար նշանակվեց գեներալ-լեյտենանտ Հովհաննես Հախվերդյանը, որին 1919 թ. մարտի 27-ին փոխարինեց Քրիստափոր Արարատյանը: Վերջինիս էլ 1920 թ. ապրիլի 3-ին փոխարինեց Ռուբեն Տեր-Մինասյանը: Հանրապետության անկման շրջանում՝ 1920 թ. նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 2-ը, Ռուբեն Տեր-Մինասյանին փոխարինեց զորավար Դրոն (Դրաստամատ Կանայան): 1919 թ. մարտին կազմավորվեց կառավարությանը կից ռազմական խորհուրդը, որի նախագահն էր գեներալ Թ. Նազարբեկյանը: Վերջինիս վրա նույն թվականի «ապրիլի 24-ի կառավարության հրահանգով դրվեց նաև ՀՀ զորքերի գլխավոր հրամանատարի՝ հայկական բանակի սպարապետի պարտականությունը»[7]:

Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունն ու խորհրդարանը ուշադրության կենտրոնում էին պահում բանակը՝ որպես հայկական պետականության և հայ ժողովրդի ֆիզիկական գոյության երաշխավորի: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում նաև Հայաստանի ազատագրման ու պաշտպանության համար զոհված հերոսների ընտանիքներին: Ձինված ուժերի նկատմամբ առանձնահատուկ ուշադիր վերաբերմունքի ու դրանց դերը կարևորելու արդյունք էր, որ «1919 թ. հուլիսի 8-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է զինվորական նախարարի զեկուցումը զինվորների ռոճիկը 33%-ով ավելացնելու մասին: Ընդունված որոշման մեջ ընդգծվում է, որ, համաձայն 1919 թ. հունիսի 5-ի օրենքի, հուլիսի 1-ից սկսած պետք է ավելացնել զինվորների ռոճիկը 33%-ով, և այդ նպատակով մինչև 1919 թ. վերջը զինվորական նախարարության հաշվին պետք է բացել հաշիվ 1. 896. 840 ռ. չափով»[8]: Թե՛ որպես իշխող ուժ, թե՛ որպես ազգային կուսակցություն՝ Դաշնակցությունը, կարևորելով բանակաշինությունը, միաժամանակ կարևորում էր նաև բանակի ազգային դիմագիծն ու համաժողովրդական բնույթը: Հենց

այս նպատակով էր, որ «Հ.Յ.Դ. 9-րդ ընդհանուր ժողովը զորքի մասին հատուկ որոշում կայացրեց: Զորքի մասին տված Դրոյի զեկուցման հիման վրա ընդունվեց համապատասխան որոշում Հայաստանի բոլոր քաղաքացիների երկամյա զինվորական ծառայության և կանոնավոր համաժողովրդական բանակի կազմակերպման, բանակը բոլոր առումներով հայացնելու, հրամանատարական կազմի վերակազմության …. մասին»[9]:

1918-1920 թթ. հայկական բանակը կարևոր դեր խաղաց Հայաստանը թե՛ արտաքին և թե՛ ներքին թշնամիներից պաշտպանելու գործում: Այն Բասարգեչար-Զոդ և Վեղի հատվածներում հաջողությամբ զսպեց Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող և երկրում շարունակ խռովություններ բարձրացնող թուրք-թաթար տարրերին:

Հայկական բանակի վրա իր քայքայիչ ազդեցությունն ունեցավ նախ՝ 1920 թ. բոլշևիկյան մայիսյան հակապետական խռովությունը, ապա՝ հայ-թուրքական պատերազմի ժամանակ նույն բոլշևիկների՝ դասալքության քարոզը, որի նպատակն էր ամեն կերպ հասնել Հայաստանի Հանրապետության պարտությանը: Ինչպես ցույց են տալիս հետագա իրադարձությունները, հայ բոլշևիկները պարտաճանաչ կերպով կատարեցին իրենց վրա դրված պարտականությունը և, օգտագործելով Կարսի նահանգի քաղաքական ու ռազմական ղեկավարությունների վատ փոխհարաբերություններն ու հակասությունները, հասան իրենց նպատակին՝ ապահովելով Հայաստանի պարտությունը թուրք-հայկական պատերազմում: Նահանգի ռազմաքաղաքական ղեկավարությունն իր տեղում չէր, կրտսեր սպայական կազմում էլ հիմնականում ռուսական կամ Կարմիր բանակում ծառայած զինվորներ էին, ուստի Կարսի հայկական զինուժը հեշտությամբ ընկավ թուրք-բոլշևիկյան թակարդը, և ամենևին պատահական չէր, որ Հայաստանի վերաբերյալ իրենց դավադիր ծրագրերն իրականացնելու համար քեմալա-բոլշևիկյան ուժերի կողմից որպես թիրախ նախ և առաջ ընտրվեց հայոց բանակը. «Այն որպես առաջնային թիրախ ընտրելը պայմանավորված էր երկու հանգամանքով. պետությունը օտար ներխուժման առաջ պաշտպանվելու անընդունակ դարձնելու համար անհրաժեշտ էր նախ քայքայել և կազմալուծել բանակը, երկրորդ հանգամանքն այն էր, որ հայկական բանակի նախկին ռուսաստանյան սպայակազմի գերակշռող մասն իրեն առաջվա նման համարում էր Ռուսաստանի, այլ ոչ թե Հայաստանի զորական… Հակապետական գործունեություն ծավալելու համար ամենևին երկրորդական չէր նաև այն հանգամանքը, որ հայկական բանակի կրտսեր զինվորականների շարքերում հանդիպում էին նախկինում Կարմիր բանակում ծառայած հայ զինվորներ, կրտսեր պետական ծառայողներ»[10]: Ինչևէ, Կարսի անկումից և հայ-թուրքական պատերազմում կրած պարտությունից հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին, Հայաստանը խորհրդայնացվեց:

1988 թ. փետրվարի 20-ին Ստեփանակերտի հրապարակում սկսվեց Արցախյան շարժումը, որը լայն թափով տարածվեց՝ ընդգրկելով նաև Հայաստանի խորհրդային հանրապետությունն ու Սփյուռքը:

Արցախյան շարժման խաղաղ ցույցերին Ադրբեջանը պատասխանեց բռնությամբ և հայ բնակչության նկատմամբ ռազմական ուժ կիրառելով: 1990 թ. հունվար-փետրվար ամիսներին Ադրբեջանը սկսեց հարձակումներ նաև Հայաստանի Հանրապետության սահմանների վրա: Արցախի և Հայաստանի սահմանամերձ շրջանների բնակչության պաշտպանության համար թե՛ Հայաստանում և թե՛ Արցախում սկսեցին կազմավորվել կամավորական ջոկատներ, որոնք հետագայում դարձան հայկական երկու պետությունների բանակի հիմքը: Հայկական ինքնապաշտպանական ջոկատները արժանի հակահարված տվեցին Ադրբեջանի հարձակումներին. «Այդպիսի ջոկատներից էին «Սասունցի Դավիթը», «Մուշը», «Սասունը», «Մալաթիան», «Արաբոն», «Մեծն Տիգրանը», «Զորավար Անդրանիկը», «Մխիթար Սպարապետը», «Սասնա Ծռերը», «Հայոց Ազգային Բանակը» (ՀԱԲ), «Անկախության բանակը» և այլն»[24]: Այս ջոկատներից բացի՝ հայոց բանակի (ՀՀ և Արցախի զինված ուժեր) կազմավորման ակունքներում էին նաև 1990 թ. սեպտեմբերին կազմավորված Երևանի հատուկ գունդը և Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջևանի ու Մեղրու ինքնապաշտպանական վաշտերը, Արցախում կազմավորված մի շարք կամավորական ջոկատներ ու վաշտեր, ինչպես նաև ՀՅԴ Շուշիի առանձնակի գումարտակը, որը Արցախի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանումներից մեկն էր: Մինչև պատերազմի ավարտը՝ 1994 թ. մայիսի 12-ի զինադադարը, հայոց բանակը համալրվում էր նաև աշխարհազորով՝ կամավորական ջոկատներով:

1992 թ. հունվարի 28-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» որոշումը, որով դրվեց հայկական ազգային բանակի ստեղծման հիմքը: «Դեռևս 1991 թ. դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության պաշտպանության առաջին նախարար էր նշանակվել Վազգեն Սարգսյանը: 1992 թ. մայիսին պաշտպանության նախարարությունը «Զինապարտության մասին» օրենքով հիմք դրեց բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կարգին»[11]:

Հայոց բանակի նոր կազմավորված զորամասերն իրենց առաջին հանդիսավոր երդումը տվեցին 1992 թ. մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում:

Հայաստան վերադարձան և բանակաշինության գործին լծվեցին խորհրդային բանակի բազմաթիվ հայ սպաներ, որոնց «թվում էին գեներալներ Գ. Դալիբալթայանը, Մ. Հարությունյանը, Ն. Տեր-Գրիգորյանցը, Ք. Իվանյանը, Յու. Խաչատուրովը, Ա. Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս) և շատ ուրիշներ»[12]: Բանակաշինության գործում անուրանալի ավանդ ունեցան պաշտպանության նախարարներ Վազգեն Սարգսյանը, Վազգեն Մանուկյանն ու

Սերժ Սարգսյանը: Հայոց բանակը հզորացման ու արդիականացման կարևոր ճանապարհ անցավ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կառավարմամբ:

Իր գոյության ողջ ընթացքում հայոց բանակը ոչ միայն զսպեց ադրբեջանական ագրեսիան, այլև հարկ եղած դեպքերում միշտ ցավոտ հակահարված տվեց Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության տարածքների նկատմամբ ոտնձգություններին:

Արցախյան առաջին պատերազմում տարած հաղթանակից հետո հայոց բանակի մարտական ուղու փառահեղ էջերից է 2016 թ. քառօրյա պատերազմը: Հայկական զինված ուժերը բացառիկ վարպետությամբ կասեցրին Ադրբեջանի ծրագրած «բլից կրիգ»-ը, ինչի շնորհիվ պատերազմի 4-րդ օրը Ադրբեջանը ստիպված էր հրադադար խնդրել:

Կազմավորման օրվանից հայկական բանակը համաժողովրդական սիրո և հոգածության ներքո էր: Հայաստանի Հանրապետության ղեկավարությունն ուշադրության կենտրոնում էր պահում հայոց բանակի սպառազինման, մատակարարման, բժշկական օգնության և բազմաթիվ այլ հիմնախնդիրներ:

Ապրիլյան պատերազմից հետո հայ քաղաքական կուսակցություններից ՀՅԴ-ն առաջ քաշեց «ազգ-բանակ» հայեցակարգը, ինչպես նաև բանակին կից՝ ՊՆ-ի ենթակայության տակ գործող կանոնավոր աշխարհազորի ստեղծումը, որը, սակայն, չիրականացավ 2018 թ., այսպես կոչված, «թավշյա հեղափոխության» պատճառով: Այնուամենայնիվ, կանխազգալով մոտալուտ պատերազմի վտանգը, ՀՅԴ-ն 2019 թ. հիմնեց «Կամավորական շարժում» հասարակական կազմակերպությունը, որի կազմում ընդգրկվեցին ՀՅԴ Շուշիի առանձնակի գումարտակի մարտիկները, երիտասարդ դաշնակցականներ ու ոչկուսակցականներ: «Կամավորական շարժում»-ն իրեն փառքով պսակեց 2020 թ. պատերազմում:

2018 թ. Հայաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխության» հետևանքով իշխանությունը կենտրոնացավ մի խմբի ձեռքում, որը շարունակ ծաղրում էր «ազգ-բանակ» հայեցակարգը և հայ-թուրքական «բարեկամություն» քարոզում: Հիմնականում դասալիքներից բաղկացած իշխանական այս խմբի կողմից առաջին ու ամենածանր հարվածները հասցվեցին հայոց բանակին. ձերբակալվեցին կամ վարկաբեկվեցին բանակաշինության գործում կարևոր դեր ունեցած մի շարք սպաներ, արհեստավարժ ու ռազմական գործի գիտակ հրամանատարները փոխարինվեցին փորձի պակաս ունեցող, կարիերիստ ու անվճռական զինվորականներով, սկսվեց բանակի կազմաքանդումը: Այս ամենով հանդերձ՝ հայկական բանակը, աշխարհազորն ու կամավորները 2020 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին հերոսական կռիվ մղեցին թշնամու դեմ, սակայն Քարվաճառում, Շուշիի մատույցներում, Հադրութում, Կովսականում ու հայկական Արցախի այլ բնակավայրերում անպատմելի սխրանքներ գործող հայոց զորքի թիկունքն ամուր չէր. ի պաշտոնե հայկական բանակի հաղթանակն ապահովելու պարտավորություն ունեցող իշխանությունը հայոց հերոսական բանակի թիկունքում դավադիր գործարքների մեջ էր թշնամու հետ, և 2020 թ. նոյեմբերի 9-ին հերոսաբար մարտնչող զորքի թիկունքում այդ իշխանության ղեկավար Նիկոլ Փաշինյանը կապիտուլյացիոն համաձայնագիր ստորագրեց: Հայոց բազմահազարամյա պատմության մեջ սա միակ դեպքն է, երբ հայոց բանակին թիկունքից հարվածեց Հայաստանի ղեկավարը՝ ի պաշտոնե հայոց բանակի գերագույն գլխավոր հրամանատարը, ինչը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ և դեռ ունենալու է երբեք քաջության ու հայրենասիրության պակաս չունեցած հայ զինվորականության համար:

Հազարամյակներ շարունակ հայ ազգի ու Հայաստանի ճակատագիրը վճռել է հայոց զինական ուժը, որն իր անգերազանցելի հերոսականության ու նվիրումի շնորհիվ ապահովել է հայ ժողովրդի հարատև գոյությունը արևի տակ: Այսօր ևս հայության ճակատագիրը հայ զինվորականության ձեռքում է. սեփական իշխանության կողմից դավաճանված ու բախտի քմահաճույքին թողնված հայն ու Հայաստանը կգոյատևե՞ն արդյոք և ի՞նչ կարգավիճակով՝ վերջին խոսքը հայ զինվորականությանն է:

Հղումներ

1. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, էջ 49:
2. http://www.genocide-museum.am/arm/28.10.2020.php.
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 11:
6. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Գ. Գալոյան, Եր., 2000, էջ 34:
7. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Եր., 2009, էջ 66:
8. Նույն տեղում, էջ 115-116:
9. Նույն տեղում, էջ 121:
10. Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Զինվորական դավադրության վարկածը, «ՎԷՄ» համահայկական հանդես, Եր., 2018, թիվ 4 (64), էջ 317-318:
11. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Եր., 2013, էջ 101:
12.http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia of _armenian _history_Hayoc_azgayin_banak.

ա) Գրականություն
1. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Գ. Գալոյան, Եր., 2000:
2. Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Եր., 2013:
3. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981:
4. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, Եր., 2016:
5. Մովսիսյան Ա., Տիգրան Մեծ. թագավորներից մեծագույնը, Եր., 2010:
6. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Եր., 2009:
7. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

բ) Մամուլ
1. Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Զինվորական դավադրության վարկածը, «ՎԷՄ» համահայկական հանդես, Եր., 2018, թիվ 4 (64):

գ) Համացանցային նյութեր
1. http://www.genocide-museum.am/arm/28.10.2020.php.
2. http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_Hayoc_azgayin_banak.

Միլլի շարժումը Կ. Պոլսի «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի էջերում (1919-1920 թթ.) (մաս 3)

Մարիամ Հովսեփյան
ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու

Տիգրան Զավենի և «Ճակատամարտ» օրաթերթի մոտեցումն այն էր, որ հայ քաղաքական կյանքում որոշումներ կայացնողները պետք է իրատես լինեն, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային հանգամանքները չվերլուծեն՝ ռոմանտիզմի դիրքերից ելնելով, այլ համադրեն տվյալ ժամանակահատվածում դիվանագիտական դաշտում առկա օբյեկտիվ իրողություններն ու բոլոր ներգրավյալ կողմերի շահերը՝ առաջ տանելով Հայկական հարցը և կարևորելով համահայկական շահերի միասնությունն ու համագործակցությունը: Ահա թե ինչ էր գրում այս կապակցությամբ «Ճակատամարտը». «Մեր ժողովուրդը կը հառաչէ այն սրբազան միութեան ետևէն, զոր կը ծնի ամեն ժողովուրդ, երբ կը տեսնէ իր գոյութիւնն ու ազատութիւնը իրական վտանգի տակ: Մեր պատմութիւնը չպիտի ներէ մեր այն բոլոր առաջարկներուն, որոնք չեն դիւրացներ, չեն փութացներ արդէն ուշացած համագործակցութիւնը»[1]: Կարծես մեր օրերի համար են ասված այս խոսքերը: Չէ՞ որ առ այսօր հայությունն անցյալի սխալներից չի կարողանում համապատասխան հետևություններ անել ներկայի ու ապագայի համար՝ անհատական կամ խմբային շահը գերադասելով պետականամետ մտածողությունից և պետական շահից:

Կ. Պոլսում հրատարակված «Ժամանակ» օրաթերթը նույնպես ամեն օր անդրադառնում էր Միլլի շարժմանը և դրա ղեկավար Մուստաֆա Քեմալի գործունեությանը՝ այն կապելով Հայկական հարցի և հայության ապագայի հետ: Մինչև 1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները հիմնականում լրահոսի կամ ստացված թուրքական պաշտոնական տեղեկատվության շրջանակներում էր դա ներկայացվում, իսկ սակավաթիվ խմբագրականներում կամ վերլուծական հոդվածներում էլ օրաթերթն իր հավատն էր արտահայտում Հայկական հարցի շուրջ համաձայնական ուժերի խոստումների նկատմամբ, հույսն ավելի շատ դնում էր Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի ու նրա կողմնակիցների տված խոստումների վրա: Թերթը քեմալականներին սկզբնապես լուրջ գործոն չէր համարում Թուրքիայի կյանքում և միայն իշխանական կառույցների հետ էր կապում առաջիկա բանակցությունները Սևրի պայմանագրով և վիլսոնյան սահմաններով ապագա Հայաստանի վերաբերյալ: Մեջբերենք բնորոշ վերլուծականներից մեկից մի պարբերություն՝ ասվածը հիմնավորելու համար: «Քաղաքական կացությունը և Հայաստանի խնդիրը» հոդվածում Արտաշես Գալփակճյանը 1919 թ. սեպտեմբերի 26-ին իր վերլուծությունն ամփոփում էր այսպես. «Ի՛նչ որ ալ

պատահի, քաղաքականութիւնը ո՛ր կողմ ալ դառնայ, Հայաստան իր պատմական հողերուն վրայ պիտի կազմուի, քանի որ Ամերիկայի համակրութիւնը կը վայելենք: Ուրեմն անհոգ ու անտարբեր կրնանք դիտել մեր շուրջը ծայր տուող ազգային կամ հակազգային շարժումները, ունենալով նաև այն զգուշութիւնն ու խոհականութիւնը, որոնք կը պահանջուին ամեն հայու գտնուած տեղւոյն մասնաւոր պայմաններէն»[2]: «Ժամանակը», սակայն, աստիճանաբար սկսում էր գիտակցել քեմալականներից սպասվող վտանգը հայության համար և անգամ սեպտեմբերի վերջից նոր բաժին է բացում՝ «Ազգային շարժումը» խորագրով: Այդ բաժնում հիմնականում զետեղվում էին թուրքական թերթերից թարգմանաբար ներկայացվող լուրեր Միլլի շարժման ծրագրերի ու ձեռնարկների մասին: Այդ խորագրի ներքո օրաթերթում սկզբնական շրջանում տպագրվում էին նաև կառավարական շրջանակների մերժողական տեսակետները քեմալականների գործունեության մասին, բայց տարեվերջին այլևս որևէ բացասական գնահատական չենք գտնի՝ թուրքերի կողմից արտահայտված, քանի որ Մուստաֆա Քեմալն արդեն գրեթե զավթել էր երկրի իշխանությունը, և փաստացի նրա կամքով էին կատարվում կառավարության պաշտոնյաների վերադասավորումները: Այս ամենը փոխում է «Ժամանակի» հայացքը հայրենի երկրում քաղաքական անցուդարձի վերաբերյալ: 1919 թ. հուլիսի 20-ին, օրինակ, թերթը, իր իսկ բնորոշմամբ, շահեկան տեղեկություններ էր հաղորդում Մուստաֆա Քեմալ փաշայի արարքների մասին՝ մանրամասներ ներկայացնելով, թե ինչպես և ինչու էր նա կառավարության կողմից ճանաչվել ապստամբ և հակասահմանադրական տարր՝ զրկվելով զինվորական պաշտոնից և արժանանալով ձերբակալման հրամանի[3]: Օսմանյան խորհրդարանի ընտրությունների նախաշեմին արդեն «Ժամանակը»

տպագրում է թուրքական կառավարության այն հայտարարությունը, որով հավանություն էր տրվում քեմալական շարժման իրականացրած ձեռնարկներին: Այդ փաստաթղթում նշվում էր, թե Միլլի շարժման նպատակն էր «օսմ. շահերու և սահմաններու պահպանութիւնը, և կառավարութիւնը մասնակից է այդ զգացումներուն»[4]: Հոդվածագիրը փաստում էր, որ կառավարությունը հայտարարության մեջ կրկնում էր այն խոսքերը, որոնք «գաւառի շարժման պարագլուխները կը յեղյեղեն երկու ամիսներէ ի վեր՝ իրաւունք, հաւասարութիւն, արդարութիւն»[5], իսկ, մյուս կողմից, տևական ժամանակ արևմտահայ գավառից մայրաքաղաք ժամանողները պատմում էին այդ շարժման ներկայացուցիչների կողմից ռազմամթերքի փոխադրման, գաղտնի ժողովների մասին ու հայերի հասցեին ուղղված սպառնալիքներով լի պատմություններ[6]: «Յետին թուրք գիւղացին գիտէր ու կ'ըսէր. «Քանի մը շաբաթ ալ համբերեցէք ու կը տեսնէք».... Թուրքիոյ սահմաններէն անդին և ասդին տեղի ունեցած դէպքերու ոգին և շարժառիթը նոյնն է: Այսօրուան մտայնութիւն ալ 1915-ի մտայնութենէն չտարբերիր, միայն պատերազմին արդիւնքը և Եվրոպայի ու Ամերիկայի ոյժը և հոն տիրող ընդհանուր ոգին են, որ մասամբ կը սանձեն այն մարդերը, որոնք բեմ կ'ելլեն դարձեալ՝ յոյս դնելով անմտաբար հուրի և սուրի քաղաքականութեան վրայ»[7],- գրում էր Ա. Մ.-ն: Հոդվածագիրն ու թերթի խմբագրակազմը փաստորեն չէին պատկերացնում, որ երկրում թափ առած նոր շարժման ղեկավարները կրկին դիմելու էին երիտթուրքերի մեթոդին, այն է՝ Հայկական հարցը լուծել հայերին իսպառ ոչնչացնելով հենց եվրոպական ու ամերիկյան հասարակությունների ու նրանց քաղաքական ղեկավարների լուռ համաձայնությամբ կամ հանդիսատես լինելու պայմաններում: Եվ դա այն դեպքում, երբ «Ժամանակը» թուրքական թերթերից թարգմանաբար տպագրում էր Կարին-Էրզրումում և Սեբաստիա-Սվազում քեմալականների գումարած համաժողովներում նրանց առաջնորդի ելույթները՝ ուղղված հայության ֆիզիկական գոյության ու կյանքի ապահովության իրավունքների դեմ, և դրանք ներկայացնում էր առանց մեկնաբանության և նույնիսկ չնշելով, որ Մուստաֆա Քեմալը հանդես էր գալիս հայությանը վարկաբեկող սուտ, մերկապարանոց հայտարարություններով: Օրինակ՝ պարբերականը լուրերից մեկում միայն ներկայացնում էր Սվազի համաժողովում Քեմալի խոսքերն այն մասին, թե իբր հայերը գրավել էին արևելյան հատվածներում թուրքերի հողերը՝ սկսելով ջարդի քաղաքականություն. «Արևելքի մէջ մեր նահանգները հայոց վայրագութիւններուն և զուլումներուն ասպարէզ եղած են, ուստի իրաւունքներու պաշտպան միութիւններ կազմուեցան՝ ազգային պատիւը փրկելու համար»[8]: Նմանատիպ մեկ ուրիշ լուրի մեջ կրկին Սեբաստիայի համաժողովին անդրադարձ կար, որում թուրքական պարբերականը տպագրել էր հատված Քեմալի ելույթից[9]: Նա համաժողովի մասնակիցներին հորդորում էր միանալ իրենց շարժմանը, որպեսզի փրկեին իրենց հայրենիքը, որ «մէկ կողմէն՝ օտար գրաւումներու կ'ենթարկուի, միւս կողմէն ալ՝ օտար տարրեր, ինչպէս՝ հայերը, յոյները, կը դիմեն չափազանցութեան, և մինչև իսկ, կ'ըսէ, թէ հայերը իրենց ջարդի քաղաքականութիւնը կը շարունակեն օսմանեան սահմաններուն մօտ»[10]: «Ժամանակը», կրկին առանց որևէ մեկնաբանության կամ վերլուծության, տպագրել էր նաև Սեբաստիայի համաժողովում քեմալականների ընդունած որոշումները: Դրանցում նրանք մատնանշում էին.

- Մուդրոսի զինադադարի ստորագրման օրվա դրությամբ թուրքական սահմաններում մնացած բոլոր «օսմ. հողերը, ուր իսլամները մեծամասնութիւն կը կազմեն, ո՛չ մէկ պատճառով»[11] չանջատել իրենց հայրենիքից:
- Թուրքիայի ամբողջականությունը և անկախությունը կպահպանվեն, եթե տիրապետող դառնան «ազգ. ոյժը և վարչութիւնը»[12]:
- Այտնի, Մանիսայի և Պալըքեսիի ճակատներում համախմբված թուրք ազգային ուժերը պետք է ընդդիմանան օսմանյան որևէ երկրի գրավման և մանավանդ անկախ Հունաստանի կամ Հայաստանի «կազմութեան նպատակ ունեցող արարքներուն» [13]:
- Բոլոր ոչ իսլամ ժողովուրդները, որոնց հետ միևնույն հայրենիքում ի սկզբանե ապրել են թուրքերը, պետք է պահեն իրենց իրավունքները, բայց մի պայմանով, այն է՝ «յիշեալ տարրերուն պիտի չտրուին այնպիսի՛ առանձնաշնորհումներ»[14], որոնք կխանգարեն թուրքերի քաղաքական տիրապետությանն ու ընկերային հավասարակշռությանը:
- Եթե օսմանյան կառավարությունը հարկադրված լինի տալու երկրի մի մասը, ապա իրենք կձեռնարկեն միջոցներ՝ խալիֆայությունը և երկրի ամբողջականությունը «անվթար պահելու համար»[15]:
- Կենտրոնական կառավարությունը պարտավոր է հպատակվել ազգային կամքին (այսինքն՝ Միլլի շարժմանը), քանի որ այս որոշումները կայացնելու ժամանակաշրջանում «ամեն ազգ իր ճակատագիրը որոշելու իրաւունքը կը վայելէր»[16]:

«Ժամանակ» օրաթերթի՝ այս ժամանակահատվածում տպագրած նյութերի մեջ երբեմն հանդիպում

ԺԱՄԱՆԱԿ

1919

ՕՐ Ա Թ Ե Ր Թ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԻԽԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՒԼԷԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆ

ՅԱՐՄԱՐ

էին փոքրիկ վերլուծություն կամ մեկնաբանություն պարունակող հոդվածներ և լուրեր: Դրանցից մեկում անդրադարձ էր կատարվում Սեբաստիայում քեմալականների հրատարակած «Իտարեի միլլիե» թերթի խմբագրականում գրված այն նախադասությանը, թե Միլլի շարժումն ուղղված չէ արևմտահայ գավառի դեմ՝ նշելով, որ նման պնդումը ծիծաղելի անամոթություն է[17]: Չէ՞ որ Մուստաֆա Քեմալը Սեբաստիայի համաժողովի բացման խոսքում, «յիշատակելէ յետոյ թուրքերու կրած ջարդը հայերէ, կ՚ըսէ նաև, որ հայերն ընդարձակ Հայաստանի ցանկութիւններ կը տածեն, և խիստ ոճով կը յարձակի Համաձայնական կառավարութեանց դէմ»[18]: Թերթը գրում էր, թե միայն անմիտները կարող էին հավատալ, որ Քեմալի շուրջ հավաքված խումբն որևէ կապ չուներ «Իթթիհատի» հետ կամ էլ հայության նկատմամբ այդ կուսակցության որդեգրած քաղաքականության շարունակողը չէր[19]: Խմբագրությունը տպագրում էր այս տեսակետին համահունչ թարգմանական բազմաթիվ նյութեր: Օրինակ՝ 1919 թ. հոկտեմբերի 30-ին «Թան» թերթում տպագրված թղթակցությունից մեջբերված հատվածում նշվում էր, որ Միլլի շարժումն իր էությամբ բացարձակապես իթթիհատական էր, իսկ դրա ղեկավարներն աչքի էին ընկնում անկուր հանդգնությամբ[20]: Զինադադարից հետո «Թրքահայաստանի գաւառները վերադառնալ փութացած»[21] հայերն ապրում էին սարսափի մեջ՝ քեմալականների պահվածքի պատճառով: Նրանք ջանում էին հեռանալ ապահով բնակավայրեր, քանի որ հուսահատության էին մատնվել Միլլի շարժման իրականացրած սպանությունների, կիսասոված կյանքով գյուղերում ապրելու փոխարեն քաղաք գնալ չկարողանալու պատճառով[22]: Հենց քեմալականների կողմից նաև խորհրդարանական ընտրությունների կազմակերպման ու անցկացման գործընթացի վրա վերահսկողության հաստատումն էր այն հիմնական պատճառը, «Ժամանակի» կարծիքով, որ պատրիարքարանը և արևմտահայության մեծամասնությունը որոշում ընդունեցին չմասնակցելու կամ ձեռնպահ մնալու դրանց մասնակցելուց: Այս առիթով ահա թե ինչ էր գրում թերթը. «Միլլի շարժումն հետևանքով այլևս քուէարկութեան ազատութիւնը կորսուած է, և ընտրութիւնը պիտի կատարուի իթթիհատականներու ճնշումին և ազդեցութեան տակ, և հաւանական է, որ հայկական գործերով արատաւորուած անձեր պիտի գան՝ աթոռ ունենալով իբրև երեսփոխան»[23]:

Անդրադառնալով օսմանյան խորհրդարանի ընտրություններին մասնակցությունից հրաժարվելու հանգամանքներին՝ պարբերականը, բացի Միլլի շարժումը որպես խանգարիչ գործոն բնութագրելուց, առանձնացնում էր մի քանի էական պատճառ: Դրանք էին.

- Հայ ընտրողներից շատերը սպանվել էին, իսկ ողջ մնացած և հայրենի բնակավայրեր վերադարձածների մեծամասնությանը թուրքական իշխանությունները թույլ չէին տալիս վերատիրանալ


ԹԱՆ

Կ ՊՈԼԻՍ 8/21 ՄԱՐՏ 1919

ԱՌՕՐԵԱՆ ԳԱԶԵԹԷ

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ՓԱՂԱՂԱՆՆԵՐ

Journal JAMANAK Stambul

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱԿԱՏԱԳԻՐԸ

ԱՌՕՐԵԱՆ ՇՈՒՍԱԿ

ԵԼԵՒԹԵՐԻՈՍ ՎԵՆԻԶԵԼՈՍ

իրենց գույքին ու տներին և իրենց զգալ իբրև երկրի լիարժեք քաղաքացիներ:

- Նախորդ խորհրդարանի պատգամավորները ոչ միայն կառավարությանը պատասխանատվության չէին կանչել իրենց երեսփոխան ընտրած հայերի սպանության համար, այլև կարիք չէին տեսել անգամ հարցնելու, թե ինչ էին եղել արևմտահայերը, ովքեր ու ինչու էին նրանց կյանքը խլել, ուստի «այս կերպով խորհրդարանն իր սահմանադրական գոյութեան իրաւունքը կորսնցուց հայոց համար»[24]:
- Էրզրումի, Բայազետի, Տիգրանակերտի և Խարբերդի պատգամավորներից շատերը հայերի կոտորածն էին վարել կամ գործակցել ու մնացել էին անպատիժ:
- Հայ պատգամավորներին հարկադրել էին լռել իրենց ժողովրդի կոտորածի և տեղահանության մասին՝ այդպիսով «ժխտելով իրենց գոյութեան իրաւունքը»[25]:
- Զինադադարից հետո ընտրելու իրավունք ունեցող հայ կանանց ու աղջիկներին, նաև որբերին իսլամադավանները հիմնականում դեռևս չէին վերադարձնում հայ համայնքին:
- Թուրքական ռազմական դատարանները «արդարութեան նպատակին իրագործման բոլորովին հակառակ ընթացք մը ունեցան»[26], և երաշխավորությամբ բանտերից ազատ արձակվեցին կամ իրենց նախկին պաշտոններին կարգվեցին հայոց ջարդերի մեջ մեղադրվող հանցագործները[27]:

Թուրքական «Իֆհամ» և «Վագըթ» պարբերականների խմբագիրների հետ հանդիպման ժամանակ Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը, բացի վերոհիշյալ պատճառներից, մատնանշել էր ևս մեկ-երկու հանգամանք, որոնցով պայմանավորված՝ արևմտահայությունը ձեռնպահ էր մնալու ընտրություններին մասնակցության հարցում[28]: Պատրիարքը մասնավորապես ասել էր. «Նոր կազմուած դահլիճը մինչև ցարդ միայն պաշտօնական յայտարարութեամբ զբաղեցաւ, որով չենք գիտեր, թէ ի՛նչ դիրք պիտի բռնէ մեր ազգին հանդէպ, որպէսզի մենք ալ մերինը ճշդենք: Ընտրութեանց խնդրոյն մեր մասնակցութիւնը անկարելի է նիւթապէս, քանի որ ժողովուրդը ցրուած

է, և մեր ազգը ցարդ նկատուած է օտար տարր մը այս երկրին մէջ: Երկրին միւս տարրերուն հետ հաւասար իրաւունք վայելելու համար պատերազմէն առաջ պահանջք ըրինք: Հիմա երկրին երեսը իբր մարդ ապրիլ կ'ուզենք»[29]:

Պատահական չէր, որ Զավեն արքեպիսկոպոսը և հայ մյուս հարանվանությունների ղեկավարները համատեղ հայտարարություն-դիմում էին ներկայացրել Անտանտի երկրներին, որ նրանք ուշադրություն դարձնեին Թուրքիայում խորհրդարանական ընտրությունների ընթացքում կատարվող զեղծարարություններին, խախտումներին, քեմալականների ճնշմամբ իրականացվող ընտրակեղծարարությանը և հայերին ստիպելով դրանց մասնակից դարձնելու երևույթներին: «Ժամանակը» հրապարակումների միջոցով ցույց էր տալիս թուրքական իշխանությունների, հասարակական կառույցների և մամուլի անհանդուրժողական կեցվածքն այս իրողությունների հանդեպ: Թերթում կարդում ենք, որ «հոգևոր պետերու՝ Համաձայնական տէրութեանց ներկայացուցիչներուն մօտ կատարած դիմումը իթթիհատի թմբուկը զարնող թուրք մամուլին և անկէ առաջնորդուող խմբակին գործին չեկաւ»[30]: Թերթը գրում էր, թե այդ դիմումի պատճառն այն էր, որ նա և ցեղասպանությունից փրկված արևմտահայությունը հասկանում էին քեմալականների բուն ցանկությունը. «Գաւառի հայութիւնը իրաւունք ունի վախնալու, որովհետև գիտէ ու կը տեսնայ, թէ այդ կազմակերպութիւնը մէկ անուանափոխութիւնն է իթթիհատին, որ հայութեան բնաջնջումը պատրաստեց: Եւ այս է պատճառը Զաւէն պատրիարքի դիմումին, որ կատարեց իր ազգին անունով և անոր կամքով»[31]: Ըստ հոդվածագրի՝ պատրիարքարանը համոզված էր, որ այդ նոր իթթիհատական կազմակերպությունը կամ Միլլի շարժումը դեռ չէր կոտորում իրենց բնակավայրեր վերադարձող հայերին, քանի որ սպասում էր Փարիզի համաժողովի որոշմանը Թուրքիայի ճակատագրի վերաբերյալ՝ ասելով. «Եթէ Հաշտութեան ժողովը մեր շահերուն հակառակ բան մը պարտադրէ մեզի, կամ ստիպուինք մաս մը հող թողուլ մեր երկրէն, պիտի դիմադրենք: Միլլիի ձեռնարկը աւելի ապագայի պատրաստութիւն է՝ ուղղուած թէ՛ Եւրոպայի և թէ՛ այս երկրին ոչ իսլամ տարրերուն, մասնաւորապէս հայոց դէմ: Մէկ խօսքով՝ Թուրքիա կ'ըսէ, թէ Հաշտութեան ժողովը չէ, որ պիտի որոշէ իմ ճակատագիրը, այլ ես պիտի որոշեմ զայն»[32]: Արևմտահայությունն էլ, նշում էր հոդվածագիր Ա.Մ.-ն, իր գոյությունն ապահովելու խնդիր ուներ, ինչով էլ թելադրված էր հոգևոր պետերի գրած դիմում-նամակն Անտանտի ղեկավարներին[33]:

Համաձայնական ուժերի հետ կապելով Հայկական հարցի լուծումը՝ «Ժամանակը» պատասխանատվության էր կանչում Թուրքիայի կառավարությանը. «Թուրք կառավարութիւնը ո՛ւէ ատեն պարտական պիտի ըլլայ պատահած այս անսնախընթաց եղեռնին համար, ցորչափ չի մաքրեր իր հաշիւը սոնքացող ոճրագործներուն հետ»[34]: Հեղինակը նաև գրում էր հայոց պահանջատիրության մասին. «Մենք մեր հայրենի երկիրը՝ Հայաստանը, պահանջելու պահուն պիտի պահանջենք, և միշտ, պատժուիլը ոճրագործներուն և հատուցումը մեր բոլոր վնասներուն.... Մեր այդ պահանջքը չի նշանակեր չկամութիւն թուրք ազգին գոյութեան մասին»[35]: Այդ պահանջների իրագործման համար էական դեր էր խաղալու, թերթի կարծիքով, անկախ ու միացյալ Հայաստանի հռչակումը, ինչն ամրագրվել էր Վուդրո Վիլսոնի իրավարար վճռում: Նա միաժամանակ մտավախություն էր հայտնում, որ հայ ժողովրդի՝ անկախ հայրենիքում ապրելու իրավունքը թուրքական իշխանությունները չոտնահարեին նոր ջարդերով, ինչպես արել էին դարեր շարունակ, երբ հայը փորձել էր պաշտպանել իր պատիվը, կյանքը և ունեցվածքը[36]:

«Ժամանակի»՝ միջազգային և տարածաշրջանային քաղաքական անցուդարձի կանխատեսումներն ավելի իրատեսական էին դարձել հատկապես 1920 թվականի վերլուծական հոդվածներում: Թեև օրաթերթը հանգամանորեն կամ թեկուզ թռուցիկ կերպով չէր անդրադարձել Թուրքիայի կյանքում վճռորոշ նշանակություն ունեցող «Ազգային ուխտ»-ին, սակայն ուշադրության կենտրոնում էր պահել արևմտահայ գավառում կատարվող դեպքերն ու հայության վերսկսված կոտորածները, ինչպես նաև Փարիզի խաղաղության համաժողովում Հայաստանի առաջին հանրապետության ու Թուրքիայի շահերի հակասությունները, հայ-թուրքական ռազմական բախումները, Հայկական հարցի զարգացումները: «Ժամանակը» ներկայացնում էր Արևմտյան Հայաստանի բնակավայրերում քեմալականների կողոպուտները, ավերն ու ջարդը: Գրում էր, որ նրանք թույլ չէին տալիս հայությանը գաղթել ու փրկվել կոտորածի քաղաքականությունից: Տեղերում քեմալական ուժերն սպանում էին հայերին, իսկ այդ շարժման քաղաքական առաջնորդներն այդ ընթացքում դիվանագիտական մարտեր էին մղում աշխարհի հզորների հետ՝ կարողանալով նրանց շահագրգռել հանուն թուրքական նպատակների իրագործման:

«Ժամանակը», հիմնվելով թուրքական մամուլի տեղեկությունների վրա, ծանուցում էր, որ օսմանյան խորհրդարանում Անատոլիայի արևելյան նահանգների ներկայացուցիչները ժողով էին արել և հայտարարություն ընդունել՝ «պաշտպանելու» իրենց նահանգների ժողովուրդների իրավունքները[37]: Նրանք հայտարարում էին. «Կարելի չէ, որ արևելեան նահանգները Հայաստանի վերածուին: Մինչ յայտնի է, թէ հայկական զուլումները մարդկութեան երեսը կը կարմրցնեն և աշխարհի մէջ չլսուած աստիճանի մը հասած են, խաղաղութեան համաժողովը արդեօք արևելեան նահանգները Հայաստանի վերածելու որոշում տալով կ'ուզէ, որ այդ տեղերը իսլամներու համար մէյ մէկ սպանդանոցնե՞ր ըլլան»[38]: Ինչպես պարբերականի բազմաթիվ հրապարակումներն էին այս շրջանում վկայում, քեմալականներն իրենց ղեկավարի նման մշտապես ստում էին, դիմում կեղծիքների ու հորինված

«փաստերի», երբ խոսքը վերաբերում էր Հայկական հարցին կամ կոտորածներին, որոնք իբրև թե հայերն էին կազմակերպել թուրքերի հանդեպ: «Ժամանակը» այս առումով գրում էր, որ Մուստաֆա Քեմալը գերազանցել էր Թալեաթին և Էնվերին՝ հայության ջարդերն անպատիժ իրականացնելով այնպիսի ժամանակահատվածում, երբ միջազգային համաժողովներում որոշվում էր Թուրքիայի ապագան[39]: Հոդվածագիր Ա.Մ.-ն եզրակացնում էր, որ Միլլի շարժման ծրագիրն էր համաձայնության գալ Անտանտի երկրների հետ թուրքերի «ըմբռնած կերպով, հայերին յուսահատեցնել և հեռացնել իրենց նպատակէն»[40]: Նա առաջարկում էր հայությանը համախմբվել, գտնել ինքնապաշտպանության միջոցներ, ի թիվս որոնց՝ հույների հետ միավորված պայքարը քեմալականների դեմ, մինչև կլուծվեր Հայկական հարցը հօգուտ հայության[41]: Մեկ այլ հոդվածում էլ հայ քաղաքական գործիչներին խորհուրդ էր տալիս ուշադիր հետևելու Թուրքիայում և տարածաշրջանում կատարվող իրադարձություններին, իրավիճակային փոփոխություններին և հարմար պահի օգտվելու դրանցից՝ հայության դրությունը բարվոքելու համար[42]: Հոդվածագրի միջոցով այդ առաջնորդող հոդվածում թերթը պահանջում էր հիշել ու չկրկնել ցեղասպանության տարիներին դաժանաբար սպանված հայ նախորդ քաղաքական էլիտայի սխալները[43]: Օրվա ազգային գործիչներին հիշեցնում էր, որ սրի և արյան վրա հենվող, կոտորածներ պլանավորող ազգերի հետ փոխհամաձայնության գալու փորձերն ապարդյուն են, մանավանդ թուրքերի և ադրբեջանցիների դեպքում[44]: «Ջինադադարէն յետոյ հայոց ենթարկուած աղէտին վրայ գոնէ երևութապէս ցաւող թուրքերն այսօր կը ցաւին, թէ ինչո՛ւ քրիստոնեայ տարրը ամբողջապէս չջնջուեցաւ այս երկրին մէջ: Անոնք կ՚ըսեն, թէ թուրքը միայն թուրքին բարեկամ կրնայ ըլլալ, իրենք ներքին ոչ իսլամ տարրերու հետ ամեն կապ խզուած կը տեսնեն և շատ փոքր կապով մը կապուած կ՚զգան զիրենք արտաքին աշխարհի հետ, սպասելով, որ Եւրոպա վճռէ Թուրքիոյ ճակատագիրը, և այն ալ՝ իրենց ըմբռնած կամ ուզած ձևով»[45],- կարդում ենք թերթի վերոհիշյալ խմբագրականում:

Ամփոփելով Կ. Պոլսի առաջատար կամ առավել բարձր վարկանիշ ունեցող երկու պարբերականների՝ Միլլի շարժման ու դրա առաջնորդ Մուստաֆա Քեմալի գործունեությանն առնչվող հոդվածների ուսումնասիրությունը՝ կարող ենք փաստել կամ եզրակացնել հետևյալը.

- Թե՛ «Ճակատամարտը», թե՛ «Ժամանակը» կարևոր տեղ են հատկացրել այդ թեմաներին՝ գիտակցելով, որ Թուրքիայի և Հայկական հարցի ապագան մեծապես կախված էր քեմալականների ծրագրերի հաջողությունից կամ տապալումից:
- «Ճակատամարտը» հիմնականում վերլուծական հոդվածների միջոցով է արտահայտել իր դիրքորոշումը հիշյալ թեմաների վերաբերյալ, այնինչ «Ժամանակը» խուսափել է սեփական գնահատականները Միլլի շարժման վերաբերյալ պարզորոշ ներկայացնելուց և միայն 1920 թ. փետրվարից է տպագրել վերլուծական հոդվածներ այդ հարցերի շուրջ, երբ արդեն Թուրքիայում քեմալականների հաղթանակը պաշտոնապես գրանցվել էր օրենսդիր ու գործադիր իշխանական համակարգերում, և այլևս կարիք չէր զգացվում հայ հանրությանը զգուշացնելու նրանց բուն նպատակների մասին, ուղիներ հուշելու առաջիկա քայլերի առումով:
- Թեև «Ճակատամարտը» սկզբնապես չի պատկերացրել քեմալականների գործելակերպի հիմնական առաջնահերթությունները, ինչպես նաև այն, որ Միլլի շարժումը կարողանալու էր կարճ ժամանակում զավթել երկրի իշխանությունը, բայց շուտով ըմբռնել է Թուրքիայի «Ազգային ուխտ»-ի հետապնդած նպատակները՝ հրապարակումներով անդրադառնալով դրանց և ընթերցողների ուշադրությունը բևեռելով քեմալականների համաթուրքական և Հայկական հարցի դեմ ուղղված հեռահար ծրագրերի վրա, իսկ «Ժամանակ» օրաթերթում չենք գտնի այդ թեմային նվիրված որևէ հոդված, ինչը լուրջ բացթողում էր քաղաքական կոնկրետ ուղղվածություն ունեցող պարբերականի համար:
- Այս ամենով հանդերձ՝ երկու օրաթերթն էլ փորձել են բացահայտել քեմալականների գործողությունների շարժառիթները և իրենց խորհուրդներով ու առաջարկներով հայոց պետականությունն ու հայ հասարակությանը հնարավորինս զերծ պահել Միլլի շարժման գործունեության կործանարար հետևանքներից:

Հղումներ

1- «Ճակատամարտ», 1920, թիվ 380:
2- Նույն տեղում:
3- «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիվ 3644:
4- Տես նույն տեղում, 1919, թիվ 3588:
5- Նույն տեղում, 1919, թիվ 3643:
6 - 7- 8 - 9 - Նույն տեղում
10- Տես նույն տեղում, 1919, թիվ 3640:
11- Նույն տեղում:
12- Նույն տեղում, 1919, թիվ 3641:
13 - 14 - 15 - 16 - 17- 18 - 19 - 20 - նույն տեղում:
21- Տես նույն տեղում, 1919, թիվ 3669:
22 - 23 - Նույն տեղում:
24- Նույն տեղում, 1919, թիվ 3646:
25 - 26 - 27 - 28 - 29 - 30 - Նույն տեղում:
31- Նույն տեղում, 1919, թիվ 3655:
32 - 33 - 34 - Նույն տեղում:
35- Նույն տեղում, 1919, թիվ 3723:
36 - 37 - Նույն տեղում:
38- Տես նույն տեղում, 1920, թիվ 3766:
39- Նույն տեղում:
40- Նույն տեղում, («Մենք մեզի պաշտպանենք»):
41 - 42 - 43- Տես նույն տեղում, 1920, թիվ 3743:
44 - 45 - Նույն տեղում:

Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Այսպէս է գլխաւոր տիտղոսը շատ կարևոր գիրքի մը՝ «Հայոց պատմութեան հոլովոյթում» ենթախորագրով, հրատարակուած 2020 թ. Երևան («Դրօշակ»ի մատենաշար, թիւ 1): Ան հրատարակուած է Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի պատմութեան հիմնարկին (ինստիտուտին) որոշումով և «Լուսակն» հրատարակչականին կողմէ: 212 էջերու մէջ ադամանդի պէս սեղմուած-խտացուած այս հատորը հեղինակութիւնն է պատմական գիտութիւններու դոկտոր, պրոֆեսոր Արարատ Մ. Յակոբեանի: Խմբագրութիւնը կատարած է նոյնպէս պատմական գիտութիւններու դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ռ. Ստեփանեանը: Առաջաբանին մէջ վերջինս իրաւամբ դիտել կու տայ, որ «Իր ամփոփիչ խօսքում մենագրութեան հեղինակը գտնում է, որ պէտք է շարունակել կենսունակ պահել ազգային արժէք համարուող այդ գաղափարը, նաև որպէս Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ու դատապարտման, հայ ժողովրդի հայրենազրկման, պահանջատիրութեան ու փոխհատուցման համար պայքարի հեռագնայ գործնական ազդակ ու կռուան, իբրև համայն հայութեանը իր մեծ հայրենիքում հաւաքուած տեսնելու, արարելու, զարգանալու ու բարգաւաճելու նպատակ: Եւ մեր կարծիքով՝ հէնց նման դաստիարակիչ առաքելութեան ու պատգամի է միտուած Ա. Յակոբեանի յաջողուած սոյն աշխատութիւնը» (էջ 6-7):

Թէև գիրքը լոյս տեսած է մեր պատմութեան ամենէն ամօթալի պարտութիւններէն՝ 44-օրեայ պատերազմէն առաջ, բայց ան առաւել կարևորութիւն կը ստանայ այսօր, քանի որ ընթերցողը անոր էջերէն վերահաստ կ՚ըլլայ, թէ շատ բան չէ փոխուած ըլլայ ներազգային ճակատի վրայ, ըլլայ միջազգային ճակատներուն վրայ՝ մեր ներքին տարակարծութիւններու յաղթահարման ու արտաքին ուժերու գնահատման տեսակէտէն: Միւս կողմէ՝ կարդալէ ետք այս հատորը չես կրնար անգամ մը ևս չհաստատուիլ քու այն անխախտ համոզումիդ մէջ, որ Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարը այն միակ առանցքն է, որուն շուրջ կրնայ այս ազգը համախմբուիլ ու գոյատևել:

Ընթերցողին աճող հետաքրքրութիւնը գոհացնելու համար ջանամ ամփոփ ներկայացնել գրքին բովանդակութիւնը, մէջբերել որոշ յատկանշական դիտումներ, մատնանշել կարգ մը յաւելեալ կէտեր, որոնք կրնային տեղ գտած ըլլալ այնտեղ, բայց մնաւանդ վեր առնել անոր անառարկելի արժէքը: Բայց անկէ առաջ գիտնանք, թէ ով է Արարատ Յակոբեանը: Իրմէ խնդրած ու ստացած ամփոփ կենսագրականին մէջ կը կարդանք, որ ան ծնած է 1947 թ. փետրուար 26-ին ՀՀ Արմաւիրի մարզի Ապագայ գիւղը, ակունքները՝ պատմական Սասունէն: 1971 թ. ԵՊՀ պատմութեան բաժանմունքը աւարտելէ ետք աշխատանքի է անցած Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմութեան հիմնարկին մէջ, ուր ալ պաշտպանած է թեկնածուական և դոկտորական ատենախօսութիւնները: 2005-2013 թթ. գլխաւորած է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) պատմութեան և քաղաքագիտութեան ամբիոնը ու ստացած է պրոֆեսորի գիտական կոչում: Անոր գիտական հետաքրքրութիւնները կ՚ընդգրկեն Հայաստանի 20-րդ դարու հասարակական-քաղաքական պատմութեան առանցքային բազմաթիւ հիմնահարցեր: Հրատարակած է 20-է աւելի մենագրութիւն, 100-է աւելի գիտական յօդուածներ՝ նուիրուած Առաջին հանրապետութեան, հայ քաղաքական կուսակցութիւններու, հայ պարբերական մամուլի, Հայկական հարցի, Մոսկուայի ու Կարսի պայմանագրերու, ստալինեան քաղաքական բռնաճնշումներու պատմութեան և արդիական հնչեղութեան տարաբնոյթ այլ հիմնահարցերու լուսաբանմանն ու գնահատականին:

Ա. Յակոբեանի այս հատորը կը բաղկանայ 18 գլուխներէ, որոնք կը յաջորդեն «Մուտք» խորագրով ներածականի մը ու կ՚աւարտին «Վերջաբանի փոխարէն», կրնանք ըսել՝ յաւելեալ գլուխով մը, որ կ՚ամփոփէ հեղինակին միտք բանին: Առաջին գլուխը նուիրուած է Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարի պատմական ակունքներուն, այդպէս ալ խորագրուած է: 2-16-րդ գլուխները մանրամասնօրէն կը ներկայացնեն այդ գաղափարի հոլովոյթը ազգային կուսակցութիւններու յառաջացումէն մինչև 1921 թուականը, այսինքն՝ 35-40 տարուան փոթորկալից ժամանակաշրջանի մը մէջ: Վերջին գլուխը նոյն տեսլականին մասին կը խօսի Հայաստանի խորհրդայնացումէն ետք, իսկ ներկայ իրավիճակին կ՚անդրադարձուի «Վերջաբանի փոխարէն» գլուխին մէջ: Աղբիւրները, որոնցմէ առատ մէջբերումներ կատարուած են, կը յիշատակուին էջատակի յղումներով, մինչդեռ ցանկալի պիտի ըլլար նաև վերջաւորութեան ունենալ անոնց ցանկը: Աւելցնեմ, որ նոյնպէս օգտակար կ՚ըլլար գլխաւոր

իրադարձութիւններու, խորհրդաժողովներու և դաշնագրերու ցուցակի մը ներառումը:

Առաջին գլուխին մէջ Արարատ Յակոբեան կը յիշատակէ մեր պատմական թագաւորութիւնները, որոնք «իրենց մէջ մարմնաւորել են Միացեալ Հայաստանի ֆիզիքական և քաղաքական բովանդակութիւնը» (էջ 12), և իրաւամբ կը նշէ, մէջբերումը կատարելով Ռուբէն Տէր-Մինասեանի մէկ յօդուածէն, որ ամբողջական Հայաստանի անառարկելի պահանջը կը բխի նոյն ինքն «մեր ժողովուրդի և Հայաստանի պատմութենէն»: Ապա կ'աւելցնէ, այս անգամ Ա. Այվազեանի բառերով՝ «Հայոց պատմութիւնը Հայաստանի ռազմավարական անձեռնմխելի պաշարն է: Այն պարունակում է կայուն պետութիւն և հասարակութիւն կերտելու ամուր հիմք, որն է հայկական չորսհազարամեայ քաղաքակրթութիւնը և նրա արդիւնք հանդիսացող հայոց զօրեղ, ընդգծուած իւրօրինակ ինքնութիւնը» (էջ 11): Յետոյ դիտել կու տայ, որ «հետագայ դարերում, արտաքին ու ներքին ոչ նպաստաւոր գործօններով ու հանգամանքներով պայմանաւորուած, Հայաստանը կորցրեց իր անկախ պետականութիւնը, ուստիւ տարածքային ամբողջականութիւնը: Հայաստանի անկախութեան կորստից յետոյ էլ ազատութեան ու անկախութեան գաղափարները մնացին ժողովրդի դիցաբանութեան, հերոսապատումների, հոգևոր բնոյթի երկերի ու ձեռագրերի մէջ: Մի խօսքով՝ դրանք նիւթական մշակոյթի, պատմական յիշողութիւնների ձևերով դարերի ընթացքում փոխանցուեցին սերնդէ-սերունդ և հասան մինչև մեր ժամանակները» (էջ 11-12): Հուսկ, անդրադառնալով Բագրատունեաց և քանի մը դար ետք Կիլիկեան հայկական պետականութեան կորուստին, կը յարէ, որ «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը դառնում է հայ կրօնական ազգ-համայնքի հոգևոր կենտրոնը՝ շեշտը դնելով առայժմ հոգևոր Միացեալի վրայ. «իբրև հայրենի հողի վրայ գոյատևող պետականազուրկ կրօնական համայնք»», ինչպէս կը նշէ Գ. Խուտինեան նոյն հարցին նուիրուած իր յօդուածով (էջ 13): Այս գլուխը կ'աւարտի յիշատակումովը 17-րդ դարու երկրորդ կէսէն մինչև 1878 թուականը՝ Մահտեսի Մուրատ Բաղիշեցիէն, Յակոբ Դ. Ձուղայեցի կաթողիկոսէն, Իսրայէլ Օրիէն մինչև Շահամիր Շահամիրեան («Որոգայթ փառաց»), Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոս, Խրիմեան Հայրիկ («Երկաթէ շերեփը»), Ալիշան, Նալբանդեան, Ռաֆֆի և ուրիշներ, որոնք, Գ. Լազեանի բառերով, «կը յուսային ոչ միայն ազատագրուիլ պարսկական և թրքական լուծէն, այլև վերստեղծել Հայաստանի անցեալ փառքը, դառնալու համար ազատ ու անկախ պետութիւն» (էջ 15):

Երկրորդ գլուխը կը վերաբերի ազգային կուսակցութիւններու դիրքորոշումներուն: Կը սկսի հետևեալ պարբերութեամբ. «Հայրենիքի ազատագրութեան և պետականութեան վերականգնման գաղափարաբանութիւնը նոր որակ է ստանում 19-րդ դարի 80-ական թթ. երկրորդ կէսից, երբ ձևաւորւում են հայ ազգային

Արարատ Յակոբեան

կուսակցութիւնները: Հայրենիքի ազատագրութեան հրամայականով դարավերջին ասպարէզ իջած հայ աւանդական երեք կուսակցութիւնների համար էլ առաջնային խնդիրը Թուրքահայաստանի՝ Արևմտեան Հայաստանի ազատագրութիւնն էր: Հայ քաղաքական կուսակցութիւնների ասպարէզ իջնելն ինքնին ենթադրում էր նախորդ՝ խօսքի՝ մտքերի ու գաղափարների տարածման շրջանից անխուսափելիօրէն անցում կատարել դէպի գործի շրջան» (էջ 19-20): Կը նշուի հիմնումը Արմենական կուսակցութեան (Վան, 1885), Հնչակեան կուսակցութեան (Ժընև, 1887) և ՀՅ Դաշնակցութեան (Թիֆլիս, 1890), որոնցմէ առաջինն ու երրորդը սկզբնապէս կը հետապնդէին Արևմտեան Հայաստանի ազատագրումը, մինչ երկրորդը մէջտեղ կու գար «Մեծ Հայաստանի» (ամբողջ Մեծ Հայքը ներառող) ծրագրով: «Այս կապակցութեամբ Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան առաջին հեղինակներից Մ. Վարանդեանը փաստում է, որ Դաշնակցութեան ռահվիրաները, իբրև զգաստ իրապաշտներ, հանդէս եկան աւելի համեստ, սահմանափակ ծրագրով, քանզի Քրիստափորի ու Ձաւարեանի նման ընկերները լաւ կ'ըմբռնէին, «թէ որքան յանդուգն ու ցնորական պիտի երևէր անկախ Հայաստանի պահանջը նման զարհուրելի (նկատի էր առնում թուրք-քրդական հարևանութեամբ միջավայրը՝ Ա. Հ.) պայմաններու մէջ»» (էջ 22): Սակայն 1907 թ. չորրորդ Ընդհանուր ժողովին արդէն Անդրկովկասի ալ ինքնավարութեան պահանջը մաս պիտի կազմէր ՀՅԴ ծրագրին՝ «20-րդ դարասեմի նոր իրողութիւններով պայմանաւորուած» (էջ 22): Յակոբեան դիտել կու տայ, թէ «Դա ճանապարհ էր բացելու յաջորդ քայլի՝ Միացեալ և Անկախ Հայաստանի ստեղծման համար: Ուստի Հ.Յ. Դաշնակցութիւնն արտաքուստ չափաւոր, բայց հեռատես ու հետևողական ծրագրային պահանջներով աւելի շատ նպաստ է բերել Հայաստանի անկախութեան գործին, քան հնչակեանները՝ «Մեծ Հայաստան» ստեղծելու աղմկայարոյց, ցուցադրական պահանջով ու գործելակերպով» (էջ 23):

Այստեղ կ՚արժէ դիտել տալ, որ հետաքրքրական պիտի ըլլար գոնէ յիշել մշակոյթի, յատկապէս ազգային-յեղափոխական երգերու, ինչպէս նաև դաստիարակութեան դերակատարութիւնը ազատագրական գաղափարի մշակման ու տարածման մէջ, մանաւանդ որ ֆետայական շարժումը ի՛նք աղբիւր պիտի հանդիսանար նման մշակոյթի զարգացման՝ շարունակելով Պատկանեաններու, Նալբանդեաններու աւանդը:

Այդ թուականներէն մինչև 1918 թուականը՝ համաշխարհային մեծ վերիվայրումներուն ու իրադարձութիւններուն ընդմէջէն, անկախութեան գաղափարն ալ պիտի ունենայ իր հոլովոյթը՝ ազգերու ինքնորոշման իրաւունքէն մինչև քաղաքական անկախութիւն, որ պիտի նուիրագործուէր Մայիսեան հերոսամարտերով: Պատմաբանը անկէ ետք ցոյց կու տայ այն անհեթեթ դիրքորոշումը, որ հայութեան որոշ հատուածներ պիտի ցուցաբերէին իրողութիւն դարձած Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ: «Այդ համատեքստում միանգամայն մերժելի են հայ քաղաքական շրջանակներից բոլշևիկների, հայ ռամկավարների, անգամ զօրավար Անդրանիկի և միւսների պնդումները, թէ Հայաստանի անկախութիւնը Թուրքիայի ձեռքով է ստեղծուել, «թուրքից ստացած նուէր է», դրա համար էլ իրենք չեն ճանաչում այդ հանրապետութիւնը» (էջ 41-42): Միւս կողմէ՝ յաջորդող էջերուն շարժանկարի մը նման կը տեսնենք տարբեր փուլերը Հայաստանի անկախութեան իրողութեան ընկալման, թէ ներքին ճակատի վրայ և թէ՛ արտաքին: Եւ մէկ կողմէն՝ հոն՝ Արարատի շուքին, իրողական գոյառումը Հայաստանի Հանրապետութեան և միւս կողմէն՝ այլ կուսակցութիւններու, նոյնիսկ Դաշնակցութեան մէջ որոշ խմբաւորումներու տարբեր պատկերացումները միացեալ Հայաստանի կերտումին, անոր ունենալիք տարածքին ու անկախութեան կամ անոր ընդդիմութեան տեսակէտէն: Բայց իրաւամբ, ինչպէս կը գրէր ՀԺԿ պաշտօնաթերթ «Ժողովուրդ»-ը, «Միացեալ և Ազատ Հայաստան՝ դա կը լինի արմատական լուծումը Հայկական հարցի, դա կը լինի ամենանպատակայարմարը թէ՛ միջազգային խաղաղութեան և թէ՛ հայ ժողովրդի շահերի տեսակէտից» (էջ 48): Կը ներկայացուի նաև Պօղոս Նուպար փաշայի անձին կողմէ և անձին շուրջ ստեղծուած ամբողջ եղերազաւեշտը. «Մեր կարծիքով՝ Պ. Նուբար փաշայի, հայ ռամկավարների ու հայ ժողովրդականների սխալն այն էր, որ, կարևորութիւն չտալով իրական Հայաստանի Հանրապետութեան գործօնին, որի առանցքի շուրջ հէնց պէտք է միաւորուէին հայկական մնացեալ հողերը, և ստեղծուէր Միացեալ և Անկախ Հայաստան, նրանք Արևմտեան Հայաստանի (Տաճկահայաստանի) հարցը կտրում էին իրատեսական հիմքից և Միացեալ, Անկախ Հայաստան ասելով հասկանում էին տաճկահայ նահանգները և Կիլիկիան միասին՝ կասկածի տակ առնելով ՀՀ գոյութիւնը» (էջ 60):

Ինչպէս կը նշէ հեղինակը, շատ ճիշտ բանաձևած է նաև Ալեքսանտր Խատիսեան ՀՀ պատմութեան նուիրուած իր ծանօթ գործին մէջ. «Ճիշդ է,– գրում է Ալ. Խատիսեանը,– այդ վիլայէթները մեր ձեռքը չէին, բայց հայ ժողովուրդի գիտակցութեամբ անոնք չէին կրնար պատկանիլ ուրիշ ոևէ մէկուն, բացի Հայաստանէն. հայութիւնը հասած էր ազգային այնպիսի գիտակցութեան մը, որ չէր կրնար ճանչնալ սահմաններու պատահական բաժանում և հատուածներու գոյութիւն. ան կը զգար ինքզինքը իբրև մէկ ամբողջութիւն և իր այդ միութեան գաղափարը կ՚ուզէր մարմնաւորել որևէ մէկ աքտի մէջ» (էջ 71): Այդ «ակտը» պիտի լինէր 1919 թ. մայիս 28-ին՝ խորհրդարանի ու կառավարութեան հանդիսաւոր նիստին, նոյն ինքն ՀՀ կառավարութեան նախագահի պաշտօնակատար Խատիսեանի կողմէ կարդացուած «Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարման ակտը»: Ա. Յակոբեան դիտել կու տայ. «Այսպիսով՝ Հայաստանի կառավարութիւնը կեանքի էր կոչում օտար նուաճողների կողմից բռնութեամբ միմեանցից զատուած հայ ժողովրդի երկու հատուածների՝ իրենց հնամեայ հայրենիքում մէկ միասնական պետութիւն ունենալու պատգամը և այն մատուցում քաղաքակիրթ աշխարհին՝ որպէս համայն հայութեան յստակօրէն արտայայտուած քաղաքական կամք»: Ապա ան կ՚աւելցնէ, որ այդ ակտը «իրաւական առումով անթերի ու անխոցելի փաստաթուղթ է, որը չի կորցրել իր իրաւաքաղաքական նշանակութիւնը նաև այսօր՝ Հայաստանի թուով երրորդ համարուող հանրապետութեան օրօք, որը, համաձայն 1990



թ. օգոստոսի 23-ին ընդունուած անկախութեան հռչակագրի, հանդիսանում է Հայաստանի առաջին Հանրապետութեան ժողովրդավարական աւանդոյթների շարունակողը» (էջ 82)։ Աւելցնեմ, որ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովը մէկընդմիշտ պիտի որդեգրէր Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարը՝ նոյնիսկ տեղի տալով Պօղոս Նուպարի տարածքային աւելի լայն ախորժակներուն (վեց վիլայէթներն ու Կիլիկիան նկատի առնելով), սակայն, ինչպէս կը նշէ հեղինակը, «պատմաքաղաքական հետագայ անցքերը ցոյց տուեցին, որ չափաւոր պահանջներ ներկայացնող պատգամաւորները՝ Ռ. Տէր-Մինասեանը, Ս. Վրացեանը, Ա. Բաբալեանը և ուրիշներ, աւելի իրատես էին, քան մեծամասնութիւն կազմող արմատականները։ Բայց եթե ապագայ Մեծ Հայաստանի սահմանների, այդ թւում՝ Կիլիկիայի խնդրում ժողովականների կարծիքները բաժանուեցին, ապա Միացեալ, Անկախ և Ազատ Հայաստան ունենալու հարցում նրանք մնացին անսասան» (էջ 107)։ Ցաւալի է, որ, այնուամենայնիւ, հատուածական տարաձայնութիւնները պիտի շարունակուին՝ յատկապէս չհանդուրժելով ընկերվարական Դաշնակցութեան կենսական դերակատարութիւնը այս ընթացքին։

Գիրքը մեզ կը հասցնէ Փարիզի վեհաժողովին, ապա, անցնելով տակաւին մեր անկախութեան ու սահմաններու ճանաչման խոչընդոտող այլ յայտնի թէ գաղտնի ժողովներէ, 1920 թ. օգոստոս 10-ին Փարիզի արուարձան Սևրի «Յախճապակու թանգարանի դահլիճում» հանդիսաւոր նիստին «կնքուեց երկար սպասուած հաշտութեան պայմանագիրը։ Դաշնակից 12 երկրների ու Թուրքիայի պատուիրակութեան ստորագրութիւնների կողքին ոսկեայ գրիչով իր ստորագրութիւնը դրեց նաև ՀՀ պատուիրակութեան ղեկավար Ա. Ահարոնեանը» (էջ 139)։ Գիտենք, որ անոր 88–93-րդ յօդուածներով կը նուիրագործուէր Միացեալ և Անկախ Հայաստանի տեսլականը, և վերջին յօդուածով, ինչպէս որոշուած էր նախապէս կայացած Սան Ռեմոյի խորհրդաժողովին մէջ, ԱՄՆ նախագահ Վուտրօ Ուիլսընի կը վստահուէր Թուրքիոյ և Հայաստանի միջև պետական սահմանը գծելու պարտականութիւնը։ Այդ ալ պիտի կատարուէր 1920 թ. նոյեմբեր 22-ին ստորագրուած նախագահական իրաւարար վճիռով։ Սակայն պատմութիւնը պիտի ընթանար Հայաստանի ու հայութեան համար ոչ բարենպաստ ուղղութիւններով, և մինչև օրս թուղթի վրայ պիտի մնային թէ՛ պայմանագիրը և թէ՛ Ուիլսընի վճիռը, բայց անոնք պիտի մնան նաև հիմքը մեր պահանջատիրութեան, ինչպէս կը հաստատէ Արարատ Յակոբեան. «Այսպիսով՝ Սևրի պայմանագիրը և նախագահ Վ. Վիլսոնի իրաւարար վճիռը Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարի միջազգային պայմանագրային ու արբիտրաժային (իրաւարարական) ձևակերպումներն էին, որոնք կոչուած էին միջազգային ամենաբարձր մակարդակով լուծում տալու Հայկական հարցին կամ Հայ դատին։ Սևրի դաշնագիրը և Վ. Վիլսոնի անբեկանելի Իրաւարար վճիռը հայ ժողովրդի դարաւոր պայքարի, օրինական պահանջների միջազգային ճանաչման անարկբայ իրողութիւններ են, որոնք չունեն վաղեմութեան ժամկէտ և կը շարունակեն մնալ ուժի մէջ՝ որպէս հայրենատիրութեան իրաւական փաստեր ու վաւերագրեր, որպէս հայ ժողովրդի պայքարի ու յաղթանակի խորհրդանշաններ» (էջ 150)։ Այո՛, 1920 թ. վերջաւորութեան Հայաստանի Հանրապետութիւնը պիտի գտնուի «բոլշևիկեան մուրճի և թուրքական սալի» միջև, ինչպէս այնքան պատկերաւոր բանաձևած է Սիմոն Վրացեան։ Եւ հակառակ անոր, որ 1921 թ. նախ Մոսկուայի, ապա Կարսի պայմանագրերով արդէն խորհրդայնացած Հայաստանին պիտի պարտադրուէր չճանչնալու Սևրի դաշնագիրը, այն դաշնագիրը, որը՝ «իբրև ազգային գաղափար (տեսլական) ու նպատակ, եղել և մնում է համայն հայութեան ամենանուիրական իղձերից, հայ ժողովրդի պատմական մեծագոյն յիշողութիւններից մէկը, որով միջազգայնօրէն հայ ժողովրդին տրուել է իրաւունք՝ իր պատմական հայրենիքում կերտելու Ազատ, Անկախ և Միացեալ Հայաստան։ Հարկ է նաև փաստել, որ թէև միջազգային իրաւունքի գործառոյթի տեսակէտից Սևրի պայմանագիրը հետագայում չվաւերացուեց և օրինական ուժ չստացաւ, սակայն, միւս կողմից, այն անօրինական կամ անվաւեր չի ճանաչել (դենոնսացիա) պայմանագիրն ստորագրած դաշնակից և ոչ մի երկիր» (էջ 175-176)։ Պատմաբանը հարց կու տայ. «Մեծ տէրութիւններից ո՞րը հանդիսացաւ Սևրի պայմանագրի իրագործման ամենամեծ խոչընդոտը»։ Եւ ինքն ալ կը պատասխանէ. «Կարելի է վստահ արձանագրել՝ Խորհրդային Ռուսաստանը, եթէ, ի հարկէ, կարելի լինի այդ շրջանում նրան դասել Մեծ տէրութիւնների շարքը», ապա անմիջապէս կ՚աւելցնէ. «Կարելի է նաև պնդել, որ եթե չլինէր բոլշևիկեան Ռուսաստանի համակողմանի՝ ռազմաֆինանսական, դիւանագիտական, բարոյական օգնութիւնը, թուրքերը չէին կարողանայ հեշտութեամբ յաղթել թուրք-հայկական պատերազմում և ուժով ու բռնութեամբ Հայաստանին չէին պարտադրի Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը և առաջին հերթին որպէս նախապայման՝ պարտադրելով Հայաստանի կառավարութեանը հրաժարուել Սևրի պայմանագրից» (էջ 176)։ Եւ ան իրաւամբ կը հաստատէ նաև, որ «միջազգային պայմանագրային իրաւունքի տեսակէտից բռնի ուժի գործադրմամբ պարտադրուած պայմանագիրն անընդունելի է ու անվաւեր» (էջ 181)։

Պատմութիւնը, սակայն, այդպէս կանգ չ՚առնէր։ Պիտի շարունակուէին սադրիչ խորհրդաժողովները դաշնակից երկիրներուն կողմէ, և Լոզանի մէջ 1923 թ. յուլիս 24-ին պիտի ստորագրուէր նոր համաձայնագիր, «որում արդէն լիովին մոռացութեան մատնուեց ոչ միայն Միացեալ և Անկախ Հայաստանի, այլև Լոնդոնի խորհրդաժողովում իրենց իսկ առաջադրած հայկական «Ազգային տան» պահանջը» (էջ 190)։ Եւ այս՝ ի մեծ ուրախութիւն խորհրդայիններուն։

Հետաքրքրական է, սակայն, Արարատ Յակոբեանի

հետևեալ նշումը. «Բայց և այնպէս խօսելով Լոզանի պայմանագրի մասին՝ հարկ է նշել, որ դրանում չկայ որևէ արձանագրում Թուրքիայի արևելեան սահմանների մասին, չի նշւում, թէ Թուրքիան ինչ սահմանագծով է բաժանւում ՀԽՍՀ-ից, աւելի ստոյգ՝ ԽՍՀՄ-ից: Այդ նշանակում է, որ պայմանագիրը ստորագրած Անտանտի մեծ ու փոքր երկրները չեն ճանաչել Թուրքիայի արևելեան սահմանագծի վերաբերեալ Ալեքսանդրապոլի, Մոսկուայի և Կարսի պայմանագրի դրոյթները, և իրականում դա այդպէս էլ կայ: Լոզանի պայմանագրում ոչ մի խօսք չի ասուած նաև 1920 թ. նոյեմբերի 22-ին Վ. Վիլսոնի անցկացրած հայ-թուրքական սահմանագծի մասին: Բերուած փաստարկներից կարելի է հետևցնել, որ Լոզանի պայմանագիրը կարող է Թուրքիայի և նրա արևելեան հարևանների միջև սահմանների հետագայ կարգաւորման իրաւական ու քաղաքական խնդիր առաջացնել» (էջ 194):

«Վերջաբանի փոխարէն» իր եզրափակիչ խօսքով գրքին հեղինակը կը հաստատէ, որ «ամբողջ միջնադարում և նոր ժամանակներում հայ հանրոյթի ներսում երբեք չմարեց պետականութեան ու քաղաքական անկախութեան գաղափարը» (էջ 199): Ապա կ'աւելցնէ. «Արդէն 19-րդ դարի 2-րդ կէսին հայ հասարակական-քաղաքական միտքը որակական նոր փուլ թևակոխեց: Դարավերջին ասպարէզ իջան հայ ազգային քաղաքական երեք՝ Արմենական, Հնչակեան և Հ.Յ.Դ. կուսակցութիւնները, որոնք իրենց որդեգրած մարտավարութեամբ ու ռազմավարութեամբ ձեռնամուխ եղան հայրենի երկրի ազատագրման ծրագրային պահանջի իրագործմանը՝ ինքնապաշտպանութիւնից ու ինքնավարութիւնից դէպի քաղաքական անկախութիւն վերընթացով, որը, ի վերջոյ, ռուսական յեղափոխութիւնների և Առաջին աշխարհամարտի բարդ ռազմաքաղաքական իրադարձութիւնների տրամաբանութեամբ, Մայիսեան յաղթական հերոսամարտերի գնով յանգեցրեց Հայաստանի անկախութեան փաստին, իսկ ապա նաև՝ Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրացման քայլին: Այդպիսով, դարաւոր ընդմիջումից յետոյ վերականգնուեց Հայոց անկախ պետականութիւնը՝ նոր բովանդակութեամբ ու նոր արժեհամակարգով: Դրանով իսկ հնարաւորութիւն ստեղծուեց վերականգնելու օտար ուժերի կողմից դարերով արհեստականօրէն բաժանուած Հայաս-տանների միասնութիւնը, հայ մեծանուն գրողներից Պ. Սևակի բնորոշմամբ՝ «Հայաստան» մաքրանունից պոկելու և դէն նետելու «Ռուսա»-ն և «Տաճկա»-ն» (էջ 199-200):

Այստեղ ալ թող թոյլ տրուի ինծի ափսոսալ, որ գիրքը չ'անդրադառնար այն անուրանալի կենսական առաքելութեան, որ ստանձնեցին հայրենահայ գրողները և, ինչպէս Չարենցը, իրենց կեանքի գնով վառ պահեցին Ազատ, Անկախ և Միացեալ Հայաստանի գաղափարը համայնավար տիրապետութեան ամբողջ 70 տարիներուն:

Դաշնակցութիւնը շարունակեց մնալ այդ գաղափարին ջատագովը, իր յաջորդական Ընդհանուր ժողովներով վերահաստատեց իր յանձնառութիւնը՝ պայքարելու այդ գաղափարին համար, բայց միևնոյն ատեն չվարանեցաւ նոյնիսկ համաձայնիլ, որ Խորհրդային Հայաստանի կցուին հաւանական, բայց երբեք չիրականացած յաւելեալ տարածքները, որոնք կրնային Բ. աշխարհամարտին անցնիլ Խորհրդային Ռուսաստանի իշխանութեան ներքոյ:

Պատմաբան Յակոբեան կը շարունակէ. «Պանդխտութեան մէջ յայտնուած Հ.Յ.Դ.-ն շարունակեց պահանջատիրութեան համար գաղափարական-քաղաքական պայքարը: Ի վերջոյ, 70-ամեայ տարագրութիւնից յետոյ՝ 1990 թ. օգոստոսի 8-ին, Հ.Յ.Դ.-ն կրկին բացայայտեց իր գործունէութիւնը մայր հայրենիքում: Դարձեալ արձանագրուեց հայապատկան բոլոր հողերի վրայ Միացեալ, Ազատ և Անկախ Հայաստան կերտելու քաղաքական հիմնանպատակը: Արցախեան ազատագրական պայքարին, Հայաստանի անկախացման ու պետականաշինութեան գործընթացներին զօրավիգ լինելուց զատ՝ Հայ Դատը շարունակում է մնալ կուսակցութեան դաւանած անժամանցելի ազգային Մեծ երազանքը: Հ.Յ.Դ. Բիւրոյի օգոստոսի 8-ի յայտարարութեան մէջ մասնաւորապէս նշուած է. «....ինքնիշխանութիւն հաստատելու պահից մինչև Միացեալ, Ազատ և Անկախ Հայաստանի ստեղծումը մեզ (կուսակցութեանը՝ Ա. Հ.) սպասում է երկար և դժուարին պայքար: Անհրաժեշտ է դիմանալ, պայքարել և փուլ առ փուլ իրագործել մեր ազգային երազանքը»» (էջ 207): Ապա կ'աւելցնէ. «Դժուար չէ կռահել, որ եթէ մոռացութեան մատնուի այդ գաղափարը, ապա աշխարհացրիւ սփիւռքահայութիւնը, Հայրենիք վերադառնալու հեռանկարը չտեսնելով, կարող է արդի գլոբալացուող (համաշխարհայնացուող) աշխարհի պայմաններում անխուսափելիօրէն ձուլուել ու փոշիանալ» (էջ 208), և կը յարէ. «Միացեալ Հայաստանի գաղափարը կենսարթուն պահելը և դրան հետամուտ լինելը նաև ազգային անվտանգութեան խնդիր է» (էջ 208):

Գիրքը կ'աւարտի հետևեալ բառերով. «Հայ ժողովուրդն իր այդ գերնպատակը [իբր] ազգային արժէք պէտք է վառ պահի, նաև գործնական քայլերով հետամուտ լինի՝ միշտ մտածելով ու գործելով, որ կը գայ մի գեղեցիկ օր, երբ այն, ի վերջոյ, կեանքի կը կոչուի, ու կ'իրագործուի «Վիլսոնեան Հայաստան»-ի ազգային-քաղաքական նպատակը: Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարը նաև աշխարհասփիւռ հայ ժողովրդի ազգային ինքնութեան պահպանման, կենսունակութեան ու յարատևութեան միջոց է ու կռուան, իր ամբողջացած հայրենի հողում հաւաքուելու, ապրելու, ստեղծագործելու և բարգաւաճելու նպատակ: Հէնց սրանում է «Միացեալ և Անկախ Հայաստանի» պատմական ակտի 100-ամեակի խորհուրդը» (էջ 210):

Դասագրքի հիմնական արժէքով ու տևաբար ձեռքի տակ ունենալիք գիրք մըն է ահա, որ կը յանձնեմ ընթերցողի ուշադրութեան: ■

ՀՌՉԱԿԱԳԻՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների՝ բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջանը,

արտահայտելով ժողովրդի կամքը, որն ամրագրված է փաստացի անցկացված հանրաքվեում և ԼՂԻՄ ու Շահումյանի շրջանային իշխանության մարմինների 1988-1991 թթ. որոշումներում, ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության նրա ձգտումը,

արձանագրելով Ադրբեջանի Հանրապետության կողմից «1918-1920 թթ. պետական անկախության վերականգնման» հռչակման փաստը,

հաշվի առնելով, որ Ադրբեջանում տարվող ապարտեիդի և խտրականության քաղաքականությունը հանրապետությունում ստեղծել է հայ ժողովրդի նկատմամբ ատելության և անհանդուրժողականության մթնոլորտ, ինչը հանգեցրել է զինված բախումների, մարդկային զոհերի, խաղաղ հայկական գյուղերի բնակիչների զանգվածային բռնատեղահանման,

հիմնվելով ԽՍՀ Միության գործող Սահմանադրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումներին և հավաքական բնակվող ազգային խմբերին իրավունք են տալիս ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում ինքնուրույն որոշելու իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը,

նշելով, որ Շահումյանի շրջանի տարածքը բռնի կերպով անջատվել է Լեռնային Ղարաբաղից, և հայ ժողովրդի վերամիավորման ձգտումը համարելով բնականոն ու օրինական, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան,

ձգտելով հայ և ադրբեջանական ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների վերականգնմանը՝ միմյանց իրավունքների փոխադարձ հարգանքի հիման վրա,

ուշադրության առնելով երկրում տիրող իրավիճակի բարդությունն ու հակասականությունը, ապագա Միության, իշխանության և կառավարման միութենական կառույցների ճակատագրի անորոշությունը,

հարգելով ու հետևելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի, Քաղաքացիական, քաղաքական և մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի սկզբունքներին և ակնկալելով միջազգային հանրության ըմբռնումն ու աջակցությունը,

ՀՌՉԱԿՈՒՄ Է

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԻՍ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ: ՀԱԿԻՐՃ ԼՂՀ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն օգտվում է այն լիազորություններից, որոնք հանրապետություններին տրամադրվում են ԽՍՀՄ Սահմանադրությամբ ու օրենսդրությամբ, և իրեն իրավունք է վերապահում ինքնուրույն որոշելու իր պետական-իրավական կարգավիճակը՝ երկրի և հանրապետությունների ղեկավարության հետ քաղաքական խորհրդատվությունների և բանակցությունների հիման վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մինչև ԼՂՀ Սահմանադրության և օրենքների ընդունումը գործում են ԽՍՀՄ Սահմանադրությունը և օրենսդրությունը, ինչպես նաև ներկայումս գործող այլ օրենքներ, որոնք չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին ու սկզբունքներին և Հանրապետության առանձնահատկություններին:

Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների՝ բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջան

2 սեպտեմբերի 1991 թ.
ք. Ստեփանակերտ

ՀՅՊ 131

ՊԻՏԻ ԿԵՐՏԵՆՔ ՆՈՐ ԱՐՇԱԼՈՒՅՍ

ԴՐՕՇԱԿ

2022 թ. փետրվարի 5ին
Երևանում հանդիսավորապես
նշվեց ՀՅ Դաշնակցության օրը